



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4577

II my



1886

SB 2002
" "

1028. Н. Невр-Северинус Богомилюсъ. II вѣк. II кн.
VII вѣк. Тибер.

բատարակութիւն Կենդրանական Գրադարանունցի

Ա. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Б Р Ч Р П Р Т Ф Т Б Р Ф Академии Наук
СССР

ԵՐԵՒԱՆՑՈՒԹԵԱՆ

ՄԱՆՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

卷之三

Աւթերորդ տիպ

ՅԱՐԱՐՈՒՄ ՄԱԴՐԱՏԻ ԳՐԱԴԱԿԱՆԵՐԸ

1886

1886

1028

Հրատարակութիւն Կենդրոնական Գրավաճառքանոցի

491 99-8
S-46

Ն. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐԿՐՈՎՔ ՏԱՐԻ

C P U P A P Q P B P F

ՀԵՐԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

ՄԱՆՈՒԿԵԿԵՐԵՔ ՀԱՄԱՐ



ԹԻՖԼԻՍ

1886

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՈՐՊԼՍ ՅԱՌԱՋԱԲՈՆ.

«Մայրենի լեզուի» էրերբու պատրիարքակում ենք
ուղղութ տպագրութեամբ:

Սոյն տպագրութեան մէջ զրքի նիւթը և յօդուածների
գասաւորութիւնը արմատական փոփոխութեան ենք ենթար-
կած:

1. Դրքի սկզբում դրել ենք հայերէն այբուբենը իրանց
հին անուններով և նախնական գասաւորութեամբ: Նոր ե-
ղանակների շնորհիւ տառերը, առհասարակ, զբկում են իրանց
անուաննակոչութիւնից: աշակերտը գիտէ կարդալ, բայց տա-
ռերի անունները չ'գիտէ. իսկ սա նրան շատ գէտքերում
անհրաժեշտ է. օրինակ՝ բառարան գործածելիս, հայերէն
տառահամարներով հաշուելիս և այլն: Ուրեմն դոնէ երկ-
րորդ տարուայ սկզբում պէտք է վերադարձնել սոցա իրանց
կորուսեալ իրաւունքը:

2. Այլուբենից յետու դրել ենք միքանի վարժութիւն-
ներ՝ աշակերտներին բաղաձայն տառերի նրբութեանց և նս-
ցանից միքանիսի հնչական առանձնութեանց հետ ծանօ-
թացնելու համար:

Այս նորամուծութիւնները կազմում են զրքի պատրիարք

գլուխութ:

Դրքի երկարդ շրջանն ևս ամբողջապէս կազմուած է
նոր նիւթերից՝ մանկական կարճիկ ոտանաւորներից, ժողովը-
գական տղբերներից քաղուած, և արձակ ու գիւրին յօդուած-
ներից, որոնք աւելի բարոյակըթական բովանդակութիւնն
ունին:

Այսուհետեւ զրքի մնացած նիւթը մենք բաժանել ենք
երեք շրջանի՝ երրորդ, չորրորդ և հինգերորդ շրջաններ:
Նիւթերի գասաւորութեան ժամանակ ի նկատի ենք ունեցել
բովանդակութեան պարզութիւնն ու դիւրութիւնը: Վերջին

Дозволено Цензурою. Тифлисъ, 27 Ноября 1885 г.

Типографія М. Вартанянца, прот. Тройцк. цер.



36386-66

Կազմունի

Հինգերորդ վարժութեան մէջ միայն նիւթերը դասաւորուած
են տարրեալ եղանակներին համեմատ:

Աւելացնելով առաջին և երկրորդ շրջանները, որպանց
մէջ մտնում են զանազան վարժութիւններ և քառասունի
չափ արձակ ու բանաստեղծական յօդուածներ, զրքի միւս
շրջանները կազմելիս՝ ստիպուեցանք միքանի յօդուածներ,
որոնք նախընթաց տպագրութեանց մէջ տեղ ունէին, դուրս
ձգել, որպէսզի գիրքը, որ մի տարրեալ պաշար միայն պէտք
է ամփոփէ իւր մէջ, սաստիկ չստուարանալ:

Ն. Տ. Դ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԿԱՐԴԱԼՈՒ ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ

ՃՐ.ԶԱՆ ԱԹԱ.ԶԻՒ.

ՀԱՅԵԲԵՆ ԱՑԲՈՒԲԵՆԸ:

ա	Ա	Ալք.	յ	Ս	Սեն.
բ	Բ	Բեն.	շ	Յ	Յի.
գ	Գ	Գիմ.	ն	Ն	Նու.
դ	Դ	Դա.	շ	Շ	Շա.
է	Ե	Ել.	ո	Ո	Ո.
զ	Զ	Զա.	չ	Չ	Չա.
է՛	Է	Էլ.	պ	Պ	Պէ.
ը	Ծ	Ծիթ.	շ	Շ	Շէ.
թ	Թ	Թու.	ռ	Ռ	Ռա.
ժ	Ժ	Ժէ.	ս	Ս	Սէ.
ի	Ի	Ինի.	վ	Վ	Վել.
լ	Լ	Լիւն.	տ	Տ	Տիւն.
ի՞ն	Ի՞ն	Ի՞նէ.	ր	Ր	Րէ.
ծ	Ծ	Ծա.	յ	Յ	Յո.
կ	Կ	Կեն.	ւ	Ւ	Հիւն.
չ	Չ	Չո.	փ	Փ	Փիւր.
զ	Զ	Զա.	ք	Ք	Քէ.
դ	Դ	Դատ.	օ	Օ	Օ.
ձ	Ձ	Ձէ.	ֆ	Ֆ	Ֆէ.

ՆՄԱՆ ՀՆՉԻՒՆԵՐ.

- Է. բան, բանիր, բադ, բաղ, բարակ, բահ.
 Պ. պան, պանիր, պատ, պաղ, պարապ, պահ.
 Պ. պայտ, պոզ, պետ, պար, պարտք, Պօղ, պաս.
 Ք. փայտ, փոս, փէտ, փառ, փառք, փող, Փաս.
 Գ. գար, գարի, գող, գութ, գոյժ, գէս, գետ, գեր.
 Կ. կար, կարի, կող, կուտ, կուժ, կէս, կէտ, կեր.
 Հ. կող, կար, կաշի, կամ, կաղ, կոնք, կոր, կոյր.
 Տ. քող, քար, քաշի, Քամ, քաղ, քունք, քոր, քոյր.
 Շ. զարդ, զուտ, զառ, զուր, զըահ.
 Ա. սարդ, սուտ, սառ, սուր, սրահ.
 Դ. դուր, դար, դեղ, դաս, դա, դեղին, դե.
 Մ. տուր, տար, տեղ, տաս, տայ, տեղին, տե.
 Վ. տուր, տաս, տաղ, տուր, տեղին, տաք.
 Բ. թուր, թաս, թաղ, թող, թեղ, թեր, թաք.
 Ի. ոխ, օխ, մեխ, ախտ, կախ, ուխտ, սեխ, կախան.
 Շ. ող, օղ, մեղ, աղտ, կաղ, ուղտ, սեղմ, կաղին.
 Յ. օձ, ձիր, ձագ, ձոր, ձաւար, ձողակ, գանձ, քուրձ.
 Ճ. օծ, ծիր, ծակ, ծոր, ծարաւ, ծաղիկ, կայծ, կուրծ.
 Ծ. ծեծ, ծիծ, ծուծ, ծածուկ, աղած, ասած, ալծ, կայծ.
 Յ. ցեց, ցից, ցոյց, ցուցակ, աղաց, ասաց, ալց, կաց.
 Ռ. ուր, սեր, սար, արու, արատ, գար, դարան.
 Ռ. ուռ, սեռ, սառ, առու, առատ, գառ, դառըն.
 Ջ. ջոջ, ջահ, ջանիկ, ջուր, ջինջ, բանջար, բաղարջ.
 Ճ. ճռճ, ճահ, ճանիկ, ճար, ճանճ, անճար, հաղարճ.

- Ճ. ճար, ճուտ, ճանկ, ճիտ, ճաղ, ճօճ, կոճակ, ճանճ.
 Հ. չար, չութ, չանդ, չիթ, չաղ, չոչ, կոչնակ, չանչ.
 Թար. մարտ, արտ, քարտ, պուտ, բիրտ, տաս, տուր.
 Գար. մարդ, արդ, կարդ, բուրդ, բերդ, դաս, դուր.
 Ժառ. մարթ, արթ, կարթ, բաւթ, թերթ, ժաս, ժուր.
 Որդ, որթ, օրդ, օրդի, օրդի, օթ, յօդ, հոտ, հօտ, յօտ, հատուած, յօդուած, հօտաղ, յօտել, արդ, հարթ, յարդ, յարդ, հարկ, յարկ, յամբ, համբ, համար, յամառ, յետ, հետ:
 Կարդալ բառի սկիզբն է հարդ.
 Կարդ կարնը, յետոյ խաղա.
 Ես տեսալ մէկ սարդ:
 Սարդ ձիւնով ծածկուած է:
 Զին երկու ոտի վերալ ծառա եղաւ:
 Ծառա լաւ խնամեցէք, որ պտուղ տայ:
 Մարս—մարսել. մերս—մերսել, սարս—սարսափ:
 Մարս—մէրս—մայրս. սարս—սարանալ:
 Հերս—հերսոտ. հարս—հարսանիք:
 Հերս—մազերս. հարս—հէրս—հայրս:
 Ա, Զ, Շ, ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՀԵՏ.
 Ա.
 Ա. սթափ—ըսթափ. սթափուիլ:
 Հ. սկիզբ, սկիհ, սկեսուր, սկայ, սկունդ, սկուտղ:
 Պ. սպաս, սպունդ, սպի, սպիտակ, սպեղանի, սպասել:

- Պ. ստամպքս, ստէպ, ստոր, ստոլգ, ստանալ,
ստինք:
- Ք. սփիւռ, սփոփանք, սփածանելի:
- Տ. սքողել, սքանչելի, սքանչանալ, սքեմ:
- Ե. սլանալ—սըլանալ, սլէհ, սլաք. սխալ, սըլա-
տոր, սխրալի:
- Հ. սմբակ, Սմբատ. սղոց, Սղերդ, Սղնախ:
- Կ. սնունդ, սնդիկ, սնոտի, սնար. սոնակ:
- Է. սրինդ, սրահ, սրիկալ, սրունք, սրանոց:

Պ.

- Բ. զբօսանք—ըզբօսանք, զբաղմունք:
- Գ. զգալի, զգեստ, զգոյշ, զգօն, զգալարանք:
- Հ. զմալիլ. զչարիլ:
- Պանալ—զըլանալ, զէեռ, զչջալ, զննել, զոլել,
զպել, զրոյց:

Հ.

- Ա. շտապ—ըշտապ, շտապել, շտեմարան:
Հթայ—Հըլթայ, Հչան, Շմաւոն, Հչել, Հվոց, Հիոթ:

Ո—ԻԲԻԵԼ ԵՐԿԽՉԻԻՆ.

Ռուս—ըռուս, ռէտին, ռամիկ, Ռուբէն, Ռաքէլ,
ռունգ, ռուբէլ, ռաբբի, ռոմ, ռեխ:

ԿԱՐԴԱԼՈՒ ՅՈԴՈՒԱԾՆԵՐ

ՇՐՋԱՆ ԵՐԿՐՈՐԴ

1. ԱՅԲԻԵՆԱՐԱՆ.

Ես փոքրիկ մանուկ էի. տեմնում էի որ
Հայրա՝ գիր կարդալիս, ակնոց էր դնում աչքե-
րին: Մի օր ես ինդիեցի՝ որ ինձ համար էլ
ակնոց առնի. «Ես էլ քեզ պէս ուզում եմ կար-
դալ», ասացի: Միւս օրը Հայրա բերեց ինձ
համար մի պատկերազարդ գիրը: Աս Հայերէն
այբբենարան էր: «Աչա՛ սա է քո ակնոցը, որ-
դի», ասաց Հայրա: Այնուհետև մայրս ինձ կար-
դալ-գրել սովորեցրեց:

2. ԿՈՐԴԱԼ-ԳՐԵԼ.

Երբ որ լեզուս բացուեցաւ,
Ազատ խօսիլ սով' բեցալ,
Բարի մօրս ձեռքի տակ
Գրել-կարդալն սկսալ.

Շատ ժամանակ չ' անցկացած՝
Ալես գիր կարդալը
Այնպէս դժուար չէր թւում,
Ինչպէս կ' ասեն ծովերը:

Այսուհետև ինձ համար
Հոլ—վէգի, գնդակի չափ

Սիրելի են՝ թուղթ, գրեչ,
Գիրք, քանոն, մատիտ, տետրակ:

3. ՄՐՁԻՒՆԸ ԵՒ ԱՂԱԽԻՆԻՆ.

Մրջիւնը մօտ գնաց առուակին, որ ջուր խը-
մէ: Ջրի ալիքը ներս քաշեց նրան եզերքից:
Մրջիւնը խեղդվում էր: Աղաւնին օգնութեան
հասաւ. նա մի չոր տերև առաւ՝ զցեց մրջիւ-
նի առաջ: Մրջիւնը վեր բարձրացաւ տերևի վե-
րայ և խեղդուելուց ազատուեցաւ:

Չ'անցաւ երկար ժամանակ: Որսորդը հրա-
ցանը ձեռին մօտեցաւ առուակին: Աղաւնին
միամիտ նստած էր ծառի վերայ: Որսորդը հրա-
ցանի բերանն ուղղեց դէպի նա: Մրջիւնը մօտ
վազեց և կծեց որսորդի ձեռքը: Որսորդը ցըն-
ցուեցաւ: Հրացանը տրաքեց, բայց չըդիպաւ
աղաւնուն: Աղաւնին թռաւ, ազատուեցաւ:

4. ՃՆՃՂՈՒԿՆԵՐ.

Կտուրը ցորեն ցանեցի, չոր՝ ցնելու համար,
ծընճղուկներ թրուան-եկան, ուտելու համար.
Քար վեր կալալ խըփեցի, սպանելու համար.
Ա՛յ ճընճղուկիկ,
Կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ,

Ուտեն կուտիկ,
Խըմեն ջըրիկ,
Առուի եզրիկ,
Փըստիկ-մըստիկ,

Փախչեն-երթան մանգալու համար:
Ժուկուտ-էն:

5. ՊԱՌԱԽՆ ՈՒ ՀԱԽԸ.

Հաւը օրական մի ձու էր ածում պառաւի
համար: Բայց պառաւն ազահ էր. նա մտածեց,
որ եթէ շատ կուտ տայ, չաւն էլ մի ձուի փո-
խանակ երկուսը կամ երեքը կ'ածի օրական:
Մտածեց ու կատարեց: Հաւը սաստիկ պարա-
տացաւ և էլ ձու չ'ածեց:

6. ԱՔԱՂԱՂՆ ՈՒ ՀԱԽԸ.

«Տուղրուղնւ, սանամէր,
Էն մէկ հաւ կար, ուր գնաց:»
— Մարաւ-աղբիւր կուլ գնաց:
«Ի՞նչ կար կըտուց:»
— Զիր ու չամիչ:
«Ուր էր տանում.»
— Հարս ու փեսին:
«Հարսն ուր է նստել:»
— Ուկէ թախտին:
«Ի՞նչ է եփում:»
— Կորկոտ:
«Ո՞վ է բերել:»

— Քաշալ Ակոբ:
Ո՞վ է հարել: »
— Աղա Սուլթան:
« Ո՞ւր է դըրել: »
— Բաց պատուհան:
« Ո՞վ է կերել: »
— Կարս Փիշիկ:

« Վայ կարալ Փիշիկ, վայ կարալ Փիշիկ,
Քո մէրն ուտի քո թըշիկ: »

Ժամանակ:

7. ԱԳԻԱԻՆ ՈՒ ԱՂԱԻՆԻՆ.

Ագռաւը տեսաւ, որ աղաւնիներին լաւ են կերակրում, ուզեց ինքն էլ աղաւնի ձեւանալսալիտակ փոշի ցանեց վերան և մտաւ աղաւնետուն: Աղաւնիները կարծեցին, թէ առ էլ իրանցից է, ներս ընդունեցին: Բայց ագռաւը մոռացմամբ կռաւեց իւր ձեռվ: Աղաւնիները կտցահարեցին և դուրս խոկեցին: Ագռաւը վերադարձաւ իւր ընկերների մօտ, բայց սրանք էլ չընդունեցին նրան, որովհետեւ գունավոխուել էր:

8. ԿՈՌԻՆԿՆԵՐ.

Կըու՝ կըու-կըրկըռան
Կըռունկները հա թըռան.
Կըռունկների թեփ տակ
Եկաւ ամառ մեր դըռան:
Ժամանակ:

9. ԻՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԳՆԱԼԲ.

Աեպտեմբեր ամիսն էր: Հայրս ասաց, որ ինձ պէտք է ուսումնարան տանեն: Ես շատ ուրախացայ. վաղուց ուզում էի ուսումնարան գնալ: Հայրս ինձ համար մի պայուսակ գնեց: Ես նրա մէջ դասաւորեցի հարկաւոր առարկաները: Մենք ուզեռուեցանք: Ես ուսումնարան չէի տեսած: Միրտս թնդում էր: Ուժը ժամին մենք հասանք: Մի մեծ շինութեան և բագի դռնից ներս մտանք: Բագում շատ մանուկներ կային. ոմանք խաղում էին արձակ-համարձակ, ոմանք էլ գլխակոր կանգնած էին իրանց ծնողաց հետ: Մենք ներս մտանք ուսուցիչների սենեալը: Ես երկիւղի մէջ էի. բոլորը նոր մարդիկ էին. ոչ մէկին չէի ձանաչում: Ուսուցիչների գլխաւորը — տեսուչը նկատեց իմ շփոթմունքը, մօտ եկաւ, փայփայեց ինձ: Ես սրտապնդուեցայ: Յետոյ ինձ քննեցին և ընդունեցին երկրորդ նախակրթանը:

10. ՏԽՈՒՐ ԵՐԵԽԱՅ.

Երբ որ ծագեցաւ պայծառ արեգակ,
Աքլար, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,
Զի, ոչխար, գառնուկ, ալծ, ուլ, հորթ ու կով
Գընացին իրանց գործին շտապով:

Միայն ծոյլ տըղան չըգնաց դպրոց,
Գիրքը շըպըրտեց ու փախաւ փողոց:
Իրիգուն ամենք յետ դարձան ուրախ,
Միայն տըղան էր տըրտում, դըլխակախ:
Գ. Ք. Ռ. Ե. Դ.

11. ԱՂՋԹՔ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔ.

Ծոյլ աշակերտը հարցրեց ջանասէրին. «Դու
ի՞նչ ես անում, որ միշտ դասերդ լաւ ես իմա-
նում:»

—Աղօթում եմ, պատասխանեց ջանասէրը:

«Ես էլ կ'աղօթեմ,» մտածեց ծոյլը և այն
գիշերը, քնելուց առաջ, աղօթք կարդաց, բայց
միւս օրը դարձեալ դասը չըգիտէր:

«Ես դարձեալ դասս չըգիտեմ,» ասաց նա
ընկերին. «իսկ դու ասում էիր, որ եթէ ա-
ղօթք անեմ, կ'իմանամ:»

—Արդեօք դու աղօթելուց առաջ սովորում
ես դասերդ, հարցրեց ջանասէրը:

«Ոչ,» պատասխանեց ծոյլը:

—Եթէ այդպէս է, դու երբէք դաս չես ի-
մանալ. նախ պէտք է սովորել, ապա աղօթել.
դու ինքդ օգնիր քեզ, որ Աստուած էլ օգնէ:

12. ՀՅՈՐ ՃԱՐ.

Երբ իմ ծընողքըս կամ ես եմ տըկար,
Եւ կամ հանդիպի մի այլ պատահար,
Երբ որ աշխարհի մէջ կայ ցաւ կամ սով,
Երբ որ մարդիկ են իրար հետ խըռով,—
Այս ամէն չարին ունիմ ես մի ճար,
Այդ իմ աղօթքն է ամէնի համար:

Գ. Ք. Ռ. Ե. Դ.

13. ՀՐԱԻԿԻ.

Հաւը խօսեցաւ, օրը բացուեցաւ,
Արևն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ.
Խելօք մանուկներ, շնուր հագնուեցէք,
Շուտով դասատուն դուք հաւաքուեցէք:

Մարդ և անասուն, գազան և թռչուն,
Ամէնքն էլ իրանց գործին են գնում.
Մըջիւնը բերնով կերակուր տանում,
Մեղուն ծաղկիցը հիւթեր է ծծում:

Դաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարուած,
Մարգագետինը կանաչ հագնուած,
Անտառն ձմեռուալ քնից արթնացած,
Իւր տերևները շարժում է կամաց:

Զկնօրսներն իրանց ուռկանն են քաշում,
Հնձողներն իրանց մանգաղը շարժում...
Դուք էլ, մանուկներ, ձեր գրքերն առէք.
Աստուած ծուլութիւն չէ սիրում երբէք:

14. ՕԶԻ ԳԼՈՒԽԸ ԵՒ ՊՈՉԸ.

Մի անգամ օձի պոչը վիճեց զլխի չետ,
թէ իրանցից որը պէտք է առաջից գնայ: Գլուխն ասաց. դու չես կարող առաջից գնալ, որովհետեւ ոչ ականջներ ունիս և ոչ աչքեր: Պոչն ասաց. ականջներ ու աչքեր չ'ունիմ, բայց ոյժ ունիմ, և ես եմքեզ շարժողն ու ման ածողը. եթէ կամենամ, կրփաթաթուեմ ծառի շուրջը և դու մի քայլ անել չես կարող: Գլուխն ասաց. ուրեմն բաժանուինք: Եւ բաժանուեցան:

Պոչը պոկ եկաւ զլխից և սկսեց առաջ սողալ. բայց չէնց մի փոքր չեռացաւ թէ չէ ընկաւ ձեղքի մէջ և էլ չ'կարողացաւ դուրս դալ ու սատկեցաւ:

Առած՝ Ալ որ փքանայ, շուտով քքանայ:

15. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

Աչքեր ունի, ոտքեր չ'ունի,
Մարդ կըսպանէ, ձեռքեր չ'ունի,
Չու է ածում, փետուր չ'ունի,
Շապիկ ունի, որ կար չ'ունի:

Չորս ոտք ունիմ կարձ ու կոկիկ,
Գլուխ ունիմ ինչպէս գորտիկ.
Մարդ տեսնելիս սիրտս է դողում,
Ոտք ու գլուխս չի երևում:

16. ՎԱՐԴԵՆԻՆ ՈՒ ՓՈՒՇԸ.

Վարդենին ու փուշը բուսել էին միատեղ:
Մի օր փուշը ասաց իւր գեղեցիկ հարևանին. «Բարեկամ, ես զարմանում եմ քո համբերութեանդ. չ'գիտեմ ինչո՞ւ չես պատժում քո փշերով այն մեղուներին, որոնք այնպէս տզազալով համ հոտդ են առնում, համ հիւթդ ծծում:»

— Ինչո՞ւ պատժեմ, համեստութիւնով պատասխանեց վարդենին. չէ՞ որ իմ հիւթից նրանք մեղր են պատրաստում: Թեկու:

17. ՄԵՂՈՒ.

Հէնց որ գեղեցիկ գարնան չետ երևեցան առաջին ծաղիկները, իսկոյն մեղուն էլ դուրս եկաւ իւր հոտաւէտ խրճից: Նա գնաց, նրատեց անուշահոտ ծաղիկների վերայ և սկսեց հարցու փորձ անել, թէ արդեօք շո՞ւտով կըկանաչեն մարգագետինները, Ե՞րբ կըբացուին ծառերի կոկոնները և ո՞ւշ կըծաղկէ արդեօք հոտաւատ յասմիկը:

18. ՀԱՆԵԼՈՒԿ.

Ոչ ցոլեն եմ, ոչ գարի,
Որ հողագործն ինձ ցանի.

Առանց ջըրի հունցած եմ,
Առանց ձեռքի կոլորած,
Ես անկրակ թըխած եմ,
Թոնիր, ջաղաց տեսած չեմ,
Չեր ամէնիդ սիրածն եմ:

19. ԱՌԻՒԾԸ ԵՒ ԳՈՐԸԸ.

Առիւծը լսեց գորտի կրկողը և վախեցաւ:
«Երևի այս գոռացողը մեծ գաղան պէտք է լինի»,
մտածեց նա: Առիւծը պատրաստուեցաւ կոիւ
մղելու: Այդ միջոցին ճահճի միջից դուրս ցատ-
կեց գորտը: Առիւծը ջարդեց նրան իւր ու-
ժեղ թաթով: «Այսուհետեւ բանը չըտեսած՝ ը-
պէտք է վախենամ», մտածեց նա:

20. ԼԱՒ ԲՆԿԵՐ.

Վայրենի հասարակ ծաղիկը պատահմամբ
շահոքրամի (մեխակի) հետ տնկուեցաւ միւնոյն
ծաղկամանում: Եւ ի՞նչ էք կարծում, այդ ան-
հոտ ծաղիկն էլ սիրուն, անուշ հոտ ընդունեց
նրանից: Լաւ ընկերի հետ ապրելն էլ այսպի-
սի նշանակութիւն ունի մարդկանց համար:

21. ՄԱՆՈՒՇԱԿ.

Դեռ ուր է ծիծեռ, դեռ ուր է սոխակ,
Գարնան կարապետ եկաւ մանուշակ.

Երկնալին խունկը չորս կողմդ բուրեց,
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:
Երկինքն է անամպ, շողզողուն արե,
Տանք մանուշակին, Երեխալք, բարե,
Որ մեր դաշտերին բերեց նոր գարուն,
Նախշուն հաւերով, ծաղկով զարդարուն:

Գ. Ք.

22. ՈՎ Է ՔԻԹԸ ՑԻՑ ՊԱՀՈՒՄ.

Որդին ասաց հօրը. «Ասա՛, խնդրեմ, հայ-
րիկ, ինչի մի քանի հասկեր կուացել են մին-
չեւ զետին, իսկ միւսները դէպի վեր են ցը-
ցուել»:

— Ինչ հասկ որ լիքն է, կուանում է դէպի
զետին. իսկ որնոր գատարկ է, նա գլուխը
վեր է պահում:

23. ԼՈՒՍԻՆԸ ԵՒ ԱՐԵՒԸ.

«Արի, իմ քոյրիկ, լոյս տուր գիշերը,
Թէ ամաչում ես դուրս գալ պարզ օրը»:

— Ո՞չ, վախենում եմ ես, լուսին երբայր,
Գիշերը շըջել, մարդկանցը լոյս տալ:
«Ցերեկը շըջել, կըտամ ասեղ քեզ,
Որ մարդ կընալի, աչքերը կ'ածես:»

Այն օրից արդէն աննման քոյրը
Տալիս է երկրին տաք, փալլուն օրեր.

Խսկ գիշերները աստղեր անհամար
Լուսին եղբօր ու փայլում են պայծառ:
Ժամանակակիցներ:

24. ՀԱՆԵԼՈՒԿԱՆԵՐ.

- ա. Քոյլ ու եղբայր մէկ տեղում իրար յետեկց
վազում են, բայց միմեանց չեն հասնում:
- բ. Խալիչայ ունիմ, թափ տալ չի լինի.
Ուկի ունիմ համընկ չի լինի:

25. ՍՏԱԽՈՅ.

Փոքրիկ հովիւր ոչխարներ էր պահում: Մի
անգամ նա մարդումը դրեց խարել իւր ընկեր-
ներին, և սկսեց բարձր ձայնով կանչել. «Գայլը,
գայլը, օգնեցէք:» Մարդիկ մօտ վազեցին և
տեսան, որ խարուել են: Այսպէս արեց նա մի
քանի անգամ: Բայց մի անգամ էլ գայլն խ-
կապես ընկաւ հօտի մէջ: Փոքրիկ հովիւր սրտա-
պատառ սկսեց օգնութիւն կանչել: Մարդիկ
լսեցին նրա ձայնը, բայց տեղներիցը չըշար-
ժուեցան. նրանք կարծեցին, թէ այս անգամ
էլ սուտ է ասում նա: Գայլն էլ, տեմուելով՝ որ
տէր ու տիրական չըկայ, սկսեց խեղդոտել
ոչխարներին:

Առած՝ նուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չըհաւատաց:

26. ԱԲԵՒԻՆ.

Նախշն արև,
Հազար բարեւ.
Այս ուր էիր երկար օրեր
Ամպերի տակ մտել կորել.
Միթէ դու էլ, յամառ մանուկ,
Դիտես պահուիլ ալդպէս գաղտուկ:
Հերիք, արև, մեզ խռովես,
Էլ չըփախչես, հոգիդ սիրես:

27. ԱՄԵՆ ԲԱՆ ԻՐԱՆ ՏԵՂԸ.

Հայկը ծոյլ տղայ չէր, բայց կարգ ու կամոն
չէր սիրում: Երեկոյեան՝ զասերը սովորելուց յետոյ,
նա իւր գրքերն ու տետրակները թողնում էր
թափիթփած ու ցրիւ տուած. առաւտօններն
էլ, երբ որ վեր էր կենում, ժամերով որոնում
էր իւր շորերը կամ ոսնամանները: Վմենայն
առաւտօտ հայկը այս ու այն կողմն էր ընկնում
և միշտ դասից ուշանում էր:

28. ՀԱՆԵԼՈՒԿ.

Ես շարժվում եմ անդադար,
Ոչ անիւ եմ, ոչ էլ լար,
Մարեր, լեռներ գլըըդում,
Համ շինում եմ, համ քանդում.
Ամէնիցը ես զօրեղ,
Բայց փակուած եմ վանդակում:

29. ՆԱՊԱՍՏԱԿԲ ԵՒ ՈՉՆԻՆ.

Սպիտակ ու քնքոյշ նապաստակը ողնուն ասաց. «Եղբայր, ինչ ծակծըկող ու տգեղ ըզգեստ ունիս»:

—Ճշմարիտ է, պատասխանեց ողնին. բայց իմ ծակծըկող փշերն ինձ ազատում են շան և գայլի ատամներից. նոյն ծառայութիւնն անում է քեզ քո գեղեցիկ մուշտակը:

30. ՀԱՆԵԼՈՒԿ.

Զուտ թելից չէ՝ հիւսում է,
Մէջը նստած՝ սպասում է.
Թշնամի չէ՝ որսում է,
Լաւ ծըծում է, մարսում է:

31. ՓԻՂ.

Մի հնդկացի մէկ փիղ ունէր: Տէրը նըրան վատ էր կերակրում և ստիպում էր, որ շարունակ բան անի: Մի անգամ փիղը բարկացաւ և իւր տիրոջը ոտնատակ տուեց՝ սպանեց: Հնդկացու կինը, արտասուքն աչքերին, բերեց իւր որբ մնացած զաւակները և զցեց փողի ոտների տակը: «Փիղ, դու սպանեցիր հօրը, սրանց էլ սպանիր», ասաց նա: Փիղը նայ-

եց մանուկներին, յետոյ կնճիթով վերցրեց ամէնից մեծին, զգուշութեամբ նստեցրեց պարանոցի վերայ և այնուչետև սկսեց հնազանդուիլ նրան և գործել նրա համար:

32. ՀՐԱՒՔԻ ԳԱՐԱՍՆ.

Սրի՛, գար ուն,
Սրի՛ սիրուն,
Բեր պարզ արե,
Առատ անձրե,
Խնդրէ Տէրէն
Հաճար, ցորեն.
Չմեռն էր մեծ,
Ողջ սպառեց.
Ամբար մառան
Դատարկ դառան:

Գ. Ք.

33. Ա.ՌԻՒԾԸ, Ա.ՐԶԸ ԵՒ Ա.ՂՈՒՔԸՆ.

Առիւծն ու արջը մի կտոր միս գտան և սկսեցին կոխւ տալ՝ թէ որին պիտի համնի ան: Ոչ մէկը չէր ուզում բաժին տալ միւսին: Կոռւեցին-կոռւեցին և երկուսն էլ յոգնած պառկեցան մաի այս ու այն կողմը: Աղուէսը նկատեց այդ, մօտ վազեց կամացուկ, ոխեց ու փախցրեց:



36386.66

Մ. Ա. Մաշակուս

34. ԳՈՐԾԸ ԵՒ ԵԶԸ.

Մի գորտ գաշտում մի եզ տեսաւ մեծ ու գեր: Զես ասել, որ գորտն էլ նախանձ է ունեցել. մտքից անցըց, թէ արի մի փորձ փորձեմ, տեսնեմ կարո՞ղ եմ եզանը հաւասարուեմ: Գորտը ուռչիլ սկսաւ, փքուեցաւ, տըռզեցաւ, գարձաւ ընկերին ասաւ.

«Նալիր, կըկռան ընկեր, արդեօք եզան չեմ հասել»:
— Զէ, սանամալր, ասաց նա. դու ուր տեղ ես և նա հւր. ձեր մէջը մեծ սարեր կայ:

«Հապա հիմա, նորից նալիր, տես թէ որքան փքուեցայ: Դէհ, բնչպէս եմ, ասիր տեսնեմ, այժմ այդ եզան կը նմանեմ.

— Զէ, հոգի, չէ:
«Հապա հիմա»:

— Տարբերութիւնն ոչինչ է, ինչ որ էիր, էլ այն ես:
Տայց մեր գորտը նորից այնքան փքուեցաւ ու փքուեցաւ, որ վերջապէս շատ ուռչելուց ճաքեցաւ

35. ՈՅԺԸ ԻՐԱԻՈՒՆՔ Զէ.

Փոքրիկ Սալթինիկը գնաց այգին, նստեց ծառի տակը և սկսեց տիկնի խաղալ: Նրա եղբայր Մկրտիչը ներա գնաց այգին, Սալթինիկի ձեռքից տիկինը խլեց, չեծաւ իւր փայտէ ձին և սկսեց վազվզել այգու մէջ: Սալթինիկը կանգնած լաց էր լինում:

Մկրտչի մեծ եղբայր Վաշչանը կամեցաւ ինքը խաղալ. նա խլեց Մկրտչի ձեռքից տի-

կինն էլ, ձին էլ: Մկրտիչը գնաց, գանգատուեցաւ հօրը. իսկ հայրը լուսամուտի առաջ նըստած՝ բոլորը տեսել էր:

Ի՞նչ կ'ասեր հայրը Մկրտչին:

36. ՍՈՒՐԵ ԿՈՐՈՊԵՏ.

Սուրբ կարապետ բարձր է բոլոր,
ծամբէք ունի ոլոր-մոլոր,
կ'երթայ կըգայ շատ ուխտաւոր,
թէ ձիաւոր, թէ ոտաւոր.
Մուրադ կըտայ ոտաւորին,
Զուշի կըտայ ձիաւորին:

Ժամանակակիցն.

37. ԳՈՅԼԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ.

Գայլը լսեց, որ հովուի բոլոր հօար կոստրուել է: Նա արտասուալից աչքերով եկաւ հովուի մօտ և ասաց. «Յաւում եմ քեզ վերայ, ո՛վ բարի մարդ, շատ ու շատ ցաւում եմ»:

Հովիւը նայեց գայլի արտասուրին և ասաց. «Նորհակալ եմ, գայլ. բայց ո՛վ գիտէ, թէ ինչի ես լաց լինում դու. արդեօք այն պատճառով, որ ցաւում ես վերաս, թէ նրա համար, որ ինքդ էլ այսուհետեւ ապրելու միջոց չես ունենալու»:

38. ԳԱՐՈՒՆ.

Գարուն սիրուն ու նախշուն
Բերեց մեր տուն բիւր ողջոյն.

Սոխակն ունէր իւր գրկին,
Վարդը ունէր իւր սըրտին,
Արօտ դալար՝ ուսերին,
Սարեակ, ծիծառ՝ ճղներին,
Ցստակ աղբիւր, պարզ առուակ,
Հազար ու բիւր սար, ձորակ,
Հովիտ, անտառ, դաշտ և մարգ
Զուր ցանէին սառնորակ:

ԸՆԴ-ԵՇԻ.

39. ԱՐԻՒԾՆ ՈՒ ՄՈՒԿԸ.

Առիւծը քնած էր: Մուկը վազեց անցաւ
Նրա վերայով: Առիւծը զարթեց և բռնեց նր-
րան: Մուկը խնդրեց, որ արձակէ իրան և խօս-
տացաւ, որ դրա փոխանակ լաւութիւն կ'անէ
նրան: Առիւծի ծիծաղն եկաւ, որ մուկը նր-
րան լաւութիւն է խոսանում, բայց էլի ար-
ձակեց:

Քիչ ժամանակից յետոյ որսորդները բռնե-
ցին առիւծին և հաստ թոկով կապեցին ծա-
ռից: Մուկը լսեց առիւծի մոնչոցը, մօտ վա-
զեց, իւր սուր ատամներով կոծեց—կտրեց թո-
կը և յետոյ ասաց. «Միտք է, որ դու ծի-

ծաղեցիր ինձ վերայ, երբ ես խոստացայ քեզ
լաւութիւն անել. այժմ հաւատում ես, որ մըկ-
նիցն էլ կարելի է լաւութիւն սպասել:

Ինչ կըցանես, այն կըհնձես.

40. ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ.

Նեղ ու մութ տուն,

Սատանէն մէջը քուն:

Թուչուն մի կար սև ու սպիտակ,
Կելնէր ի ծառ, կ'իջնէր ի տակ:

Սիպտակ հինեմ, կանաչ թել տամ,
Կարմիր գործեմ, սև կըտըրեմ:

—————*—————*

ՇՐՋԱՆ ԵՐՐՈՐԴ

1. Պ. Պ. Լ.

Պապը սաստիկ ծերացել էր: Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին. նրա ձեռներն ու ոտները ծերութիւնից դողդողում էին. այնպէս որ գդալը բերանը տանելիս՝ կերակուրը կաթկաթեցնում էր:

Այս բանը գուր չէր գալիս նրա որդուն ու հարսին: Նրանք ծերին իրանց հետ միևնույն սեղանի վերայ չէին նստեցնում, այլ մի անկիւնում առանձին տեղ էին տալիս հաց ուտելու: Մի անգամ, հաց ուտելիս, ծերի ձեռները դողդողացին, ամանը վայր ընկաւ, կոտրուեցաւ: Շատ սաստիկ բարկացան հարսն ու որդին խեղճ ծերի վերայ և այնուհետեւ փայտէ ամանով էին կերակուր տալիս նրան:

Ծեր մարդը մի թոռն ունէր: Մի անգամ մանուկը նստած էր լատակի վերայ և տաշեղներից մի բան էր շինում:

Մայրը հարցրեց նրան. «Ի՞նչ ես շինում, մ'ըդի»:

— Ես փայտէ աման եմ շինում, որ երբ գու և հայրիկս ծերանաք, նրանով կերակուր ուտեցնեմ ձեզ:

Հայրն ու մայրը նայեցան միմեանց երեսի և ամօթից կարմրեցան: Նրանք այնուհետեւ սկսեցին ծերին շատ պատուվ ոլաչել:

Պատուիր ծերին, որ ծերանաս, Ծերանաս՝ ծերի պատիւն իմանաս:

2. Ա. Լ. ԵՒ ՍՊՈՒՆԳ.

Մի էշ, աղ բարձած, եկաւ առուակի մօտ և կամենում էր անցկենալ միւս կողմը. բայց անց կենալիս գայ-

թեցաւ և ընկաւ ջուրը: Երբ նա դուրս եկաւ առուից, սաստիկ զարմացաւ, որովհետեւ բեռը շատ էր թեթևացել: «Սա լաւ բան է, ասաց նա. ջրի մէջ համ ինքդ ես հովանում, համ բեռդ է թեթևանում: Այս բանը չենք մոռանալ:» Մի քանի օրից յետոյ՝ էշը կրկին անգամ պէտք է անց կենար միւնոյն առուակով. բայց այս անգամ նա բեռնուած էր սպունգով: Առուակի մէջտեղը հասնելով, էշը ջրումը անվրդով պառկեց, որ նորից թեթևացնէ իւր բեռը: Բայց հակառակը եղաւ: Եւ մեր էշը շատ էլ չարչարուեցաւ, բայց այնուամենալիւ տեղից կանգնիլ չըկարողացաւ ու խեղդուեցաւ:

3. ՄԵՐ ԸՆՑԱՆԻՔԸ.

Մեր ընտանիքը մեծ չէ: Ես ունիմ հայր և մայր, երկու եղբայր և երկու քոյր. Ես ամենից մեծն եմ: Մենք ունինք էլի մի պառաւ տատ: Նա շատ սակաւ է տանից դուրս գալիս, այն էլ ժամ է գնում: Նա մեզ շատ է սիրում և փայփայում է:

Իմ հայրը շատ է աշխատում. նրա աշխատանքովն ենք կերակրվում և հագնվում ամէնքս: «Մենք առանց նըրան ինչպէս կարող ենք ապրիլ», ասում է շատ անգամ մայրս:

Մայրս տնտեսութիւն է անում. նա հրամայում է ճաշ և ընթրիք պատրաստել. նա գնում է ներքնատունը և մառանը: Բայց որ իմանաս, թէ ես ինչպէս սիրում եմ նրա հետ մառան գնալ: Ամբողջ օրը մայրս մեզ համար հոգում և շորեր է կարում: Նա սովորեցնում է մեզ խաչակնքել և աղօթել: Մենք երեկոյեան՝ քնելուց առաջ, միշտ աղօթում ենք:

Ես մէկ փոքրիկ քոյր էլ ունէի, բայց նրան տարան գերեզմանատուն և դրեցին կանաչ բլրակի տակ: Մայրս մինչև այսօր էլ լաց է լինում մեր փոքրիկ Մանուշակի վերայ:

4. ԶԱՒԱԿՆԵՐԻ ՄԻԽԹԱՐԱՆՔԸ.

Եկէք, եղբարք, շուշը պատենք,
Մեր մօր վեշտը փարատենք:

Մատաղ արդայք ցածկելով՝
Մօր չորս կողմը կտրեցին,
Կէս վշտագին, կէս ուրախ՝
Ալս խօսքերը ուղղեցին.

—Մալրիկ, մալրիկ, քանի լաս,
Մինչ երբ տանջուիս, հառաչես.
Մանուշակը վատ տեղ չէ,
Հերիք սիրտը մորմոքես:
Երբ մեր քոյլը մեզ թողեց,
Մենք ճիչ բարձինք լալագին.
Մալրիկ, դու այս խօսքերով
Վախճան դըրիր մեր լացին.

«Երկնքումը մեզնից լաւ
Հրեշտակները ձեր քըրոջ
Փայփայանքով սէր կըտան,
Սէր, օրհնութիւն մեր Տիրոջ:»
«Ինչպէս անմեղ թիթեռնիկն
Ծաղկանց մէջ է ոստոստում,
Որպէս աստղիկն երկնքի
Պարզ գիշերին է փալլում»,
«Այնպէս հոգին ձեր քըրոջ
Աստուածաբնակ դրախտի մէջ
Հրեշտակներին հաւասար
Պիտի գըտնէ ել և էջ:»

—Մալրիկ, մալրիկ, նոյն խօսքերն
Լսիր մեզնից սըրտաբաց.
Երջանիկ է Մանուշակն.
Սըրբիր աչերդ, ուրախ կաց:

5. ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ.

Պատուիր քո հօրը և մօրը՝ որ քեզ բարի լինի և որ
Երկալնակեաց լինիս երկը վերալ:

6. ՕՐՈՐՈՅԻ ԵՐԻ.

Արի, իմ սոխակ, թող պարէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Եկ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:

Թող դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վուվույով . . . տըղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ,
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, գող արծաթասէր,
Շահի զըուցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ:

Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քո երգը գուցէ իմ որդին կ'ուզէ.
Բազէն որ եկաւ, որդիս լըռեցաւ,
Ուազմի երգերի ձայնով քընեցաւ:

7. ՈՐԵՒ ՕՐԸ ՍԵՒ Ե.

Նիկողայոսը գնաց իրանց հարեանի տուն և տեսաւ, որ այնտեղ սաստիկ անկարգութիւն է տիրում. երեխայքը կեղտոտ, շորերը պատառուտած, մազերը զզգուած և չ'սանրած: Փոքրերը վէր էին թափած կեղտոտ յատակի վերայ, ուրիշ երկուսն էլ կուռում էին, իսկ ամէնից մեծը հիւանդ պառկած էր և ոչ ոք չ'կար, որ նրան նայէր, ինամբ տանէր: Այս ամէնը տեսնելով, Նիկողայոսը միտքը բերեց, որ իւր հարեանի կինը մօտ օրերում վախաճնուել է, և մտածելով՝ թէ ինչ դրութեան մէջ կըլինի ինքը, եթէ իւր մարդը չըլինի, վազեց իրանց տուն և փաթաթուեցաւ իւր ծնողի պարանոցով:

8. ՀՐԱՇԱԼԻ ԽՈՏ.

Երկու աղախին՝ Աննան և Կատարինէն, քաղաք էին գնում: Նրանցից ամէն մինը մի կողով ինձոր էր տանում: Աննան շարունակ տրտնջում էր ու հառաջում. իսկ Կատարինէն ծիծաղում ու հանաքներ էր անում:

— Ի՞նչ է պատճառը, որ դու այդպէս ուրախ-ուրախ ծիծաղում ես, հարցրեց վերջապէս Աննան. չէ որ քո կողովդ էլ իմիս պէս ծանր է, և դու էլ ինձանից ուժեղ չես:

« Ճշմարիտ ես ասում, պատախանեց Կատարինէն. բայց ես իմ կողովումս մի այնպիսի խոտ եմ դրել, որից ամենայն բեռն էլ թեթևանում է: »

— Միթէ: Եդ ինչպիսի խոտ է և որտեղից ես ճարել, հարցրեց Աննան զարմացած:

« Որտեղից ճարելը ես էլ չ'գիտեմ, պատասխանեց Կատարինէն. միայն անունը կարող եմ ասել. սա կոչվում է համբ եր ու թիւն, որից դու զուրկ ես, սիրելի Աննա»:

9. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԵՃԸ.

Կովը, ձին և շունը վիճում էին միմեանց հետ, թէ տանուտէրը նրանցից որին աւելի է սիրում:

« Իհարկէ նա ինձ ամենիցդ շատ է սիրում, ասում էր ձին. ես նրա արօրը և ցաքանը քաշում եմ, անտառից նրա համար փայտ եմ բերում. նա շատ անգամ հեծնում է ինձ և քաղաք է գնում: Նա առանց ինձ բոլորովին կորած կըլինէր»:

— Ո՞չ, մեր տէրն ինձ աւելի է սիրում, ասաց կովը. քո արածդ բնչէ, որ մեծ-մեծ էլ խօսում ես. քո արածի մեծագոյն մասը իմ եղբայր եղն էլ կատարել, իսկ ես նրա բոլոր ընտանիքը կաթնով կերակրում եմ:

« Դուք երկուսդ էլ սխալվում էք, ոռնաց շունը. մեր տէրն ինձ ամենից աւելի է սիրում, որովհետեւ նրա բոլոր հարստութիւնը ես եմ պահպանում»:

Կենդանիների տէրը լսեց այս վէճը և ասաց նրանց. « Զուք տեղը միմեանց հետ մի վիճէք: Դուք ամէնքդ էլ ինձ հարկաւոր էք և ձեզանից ամէն մինը լաւ է իւր տեղը: »

10. ԻՆՉ ԿԸՑԱՆԵՍ՝ ԱՅՆ ԿԸՆՉԵՍ.

Աղուէսը բարեկամացաւ կոռունկի հետ և նրան իւր մօտ ճաշի հրաւելուց. « Ե՛կ, խնդրում եմ, իմ թանկագին բարեկամ, Եկ, տես քեզ ինչ պատիւ եմ տալիս»:

Առունկն եկաւ: Աղուէսն եփել էր կերակրու, մի երկու գլաւ ածել էր ափսէի մէջ և հրաւելում էր կռունկին. « Համեցէք, կէր, սիրելի բարեկամ, շատ պատուական եփած է»: Կռունկն իւր երկար կտուցով շատ կտկտացըց այն տափակ ափսէին, բայց բերանը բան չ'ընկաւ: Աղուէսը գլուխը կախած լիզեց ամէնը: Երբոր կերաւ, վերջացրեց,

ասաց կռունկին. «Ներիր, բարեկամ, ուրիշ բան չ'ունիմ, որով կարողանալի քեզ պատիւ տալ»:

«Նորհակալ եմ, բարեկամ, ասաց կռունկը. խնդրեմ վաղն էլ ինձ մօտ շնորհ բերէք ճաշի»:

Միւս օրն աղուէսը գնաց կռունկի մօտ: կռունկը կերակուրը եփել էր և ածել մի նեղաբերան ամանի մէջ, այնպէս որ միայն իւր երկար կտուցը կարող էր ներս մտցնել: Նա ամանը դրեց սեղանի վերայ և հրաւիրեց աղուէսին. «Համեցէք. մօտ եկ, աղուէս եղբայր, կեր, պատուական կերակուր է»: Աղուէսը շատ պտղտեց, այս ու այն կողմն ընկաւ, ամանը դրսից լիզեց, շատ էլ հոտ քաշեց, բայց բերանը ոչինչ չ'մըտաւ: Իսկ կռունկն իւր երկար ու կեռ կտուցով կերակուրը հանում էր և ուտում: Եղբոր կերաւ, վերջացրեց, յետ դարձաւ և ասաց իւր հիւրին. «Ներիր, պատուական բարեկամ, սրանից աւելի ուրիշ կերակուր չ'ունիմ, որով կարողանալի քեզ հիւրասիրել»: Աղուէսը քաղցած փորով ու նեղացած տուն դարձաւ և սրանով նրանց բարեկամութիւնն էլ վերջացաւ:

11. ԳԱՐԵԼ ԳԱՅԻԻ ՄՈՐԹՈՎ.

Մի օր մէկ գառը, չեմ գիտում ինչ էր,
Խելքին ինչ տեսակ քամի էր փըչել,
Գըցեց իւր վերայ մի գալիք մորթի,
Գընաց խառնուեցաւ հետը իւր հօտի:

Բայց երբ շըների աչքովըն ընկաւ,
Ասին՝ անտառից ահա գալլ եկաւ.
Գոռում գոչումով վերան վազեցին,
Բերաններն առան ու գըզգըզեցին:

Լաւ էր, որ շուտով հովիւր տեսաւ,
Փալտ-գագանակով նոյն տեղը հասաւ,
Ու խեղճ գառնուկը կատղած շների
Սուր ատամներից հազիւ փըրկուեցաւ:

Եւ մեր գառը հազիւ հազ,
Արիւնթաթախ ու նուազ,
Թոյլ ոտները քաշտալով
Հասաւ գոմը մի կերպով:

12. ՈՒՐԻՇԻ ՎԵՐԱՅ ԶՊԵՏՔ Է ԾԻԾԱՂԵԼ.

Դեղձանիկը չար թակարդի մէջ ընկաւ. խեղճը նրա մէջ թըրպըրտում էր և չարչարվում. իսկ փոքրիկ աղաւնին վերեց նրան ծաղը էր անում: «Ամօթ չէ, ասում էր, որ օրը կէս օրին թակարդի մէջ ընկար: Ես համարձակ կարող եմ քեզ հաւատացնել, որ ինձ այդպէս հեշտութեամբ չէին կարող որոգայթի մէջ ձգել»: Այս ասած-չասած, մին էլ տեսնես իւր ոտներն էլ խճըճուեցան ցանցի մէջ: Եւ արժանի էր. թող այնուհետև ուրիշի վերայ չ'ծիծաղէր:

13. ԳԵՂՋԱՆԻԿ ԵՒ ՍՈՒԱԿԸ.

Մի տան պատուհանից կախած էր մի վանդակ: Վանդակի մէջ երգում էին դեղձանիկը և սոխակը: Հենց որ սոխակը իւր երգն սկսում էր, փոքր որդին գնում կտրում էր հօր առաջը, մատը մեկնում էր դէպի վանդակն ու ասում. «Ա՛յ, հայրիկ, տես ի՞նչպէս գեղեցիկ է երգում այս թուչունը»:

Մի օր էլ՝ երբ մանուկը ուշադրութեամբ լսում էր սոխակի երգը, հայրը ցած բերեց վանդակը, տուեց որդուն և ասաց. «Ապա իմացիր, ո՞րն է այս թուչուններից լաւ երգող»: Մանուկն իսկոյն գեղձանիկը ցոյց տուեց. «Ահա սա է լաւ երգողը, հայրիկ», ասաց:



14. Թ. Ա. Զ Ա. Կ.

Երեկ բացի ես գռնակը այն բանտի,
Որի մէջը խեղճ թռչնակն էր բանտարկուած.
Նրան տուի ազատութիւն ցանկալի,
Եւ դաշտերին՝ իրանց երգիչը կորած:
Թռաւ-անցաւ նա նուրբ օդը ճեղքելով,
Պայծառ օրուայ թարմութիւնը զգալով.
Թռաւ-անցաւ ազատութիւն շնչելով,
Եւ ինձ համար մեղմ, մնջիկ աղօթելով:

15. Ս Ա. Գ Ե Բ.

Սագերը գնացին գետի ափը՝ կերակուր գտնելու՝ ճիճուներ որսալու։ Իրիկնապահին պառաւը վեր առաւ ճիպոտը և գնաց, որ նրանց տունը բերի։ Սագերը պառաւին որ տեսան, ջուրը թափուեցան և սկսեցին լողալ։ Պառիկը կանչեց նրանց.

Ձնւ, ջու, շատակեր,

Սւե ու սպիտակ իմ սագեր,
Հերիք որչափ լողացիք,
Կարմիր տոտիկ լուացիք,
Հերիք որչափ գետի մօտ
Որգեր կերաք գուք տըզմոտ,
Գիանք, գնանք գէպի տուն,
Զեզ կուտ կըտամ իրիկուն։

Բայց չար սագերը հանդարտ պառաւին չ'ուզեցին լսել.
Երկար ու բարակ վիզները ձգեցին, կարմիր թաղանթոտ ոտները շարժեցին, լախ թևերը թափ տուին, կտուցները բաց արին,

Ղա, զա, գոռացին.

Փող ջուր մտնենք մենք կրկին.

Դեռ չենք ուզում գնալ տուն,

Մանել աղտոտ հաւաքուն.

Զրի մէջը վայր ու վեր

Պէտք է մաքրենք մեր թևեր։

Պառաւը նստեց գետի ափը։ Սագերը լողացան, լողացան, մէկ էլ յանկարծ թևերը թափիթափ տուին, միմեանց յետևից գորգոռալսվ գուրս թափուեցան ջրից ու գէպի տուն վազեցին։

16. Շ Ն Ի Կ.

«Ապա, սիրուն շնիկ, կարդա, թէ ինչ է դրած իմ գըրքումը», ասաց Հայկը իւր փոքրիկ շանը։ Նունը մօտեցաւ գրքին, հոտոտեց ու հեռացաւ։ «Ի՞նչ իմ բանն է գիր կարդալը, ասաց նա. Ես տունը կըպահանեմ, գիշերները չեմ քնիլ ու միշտ կըհաշեմ, գայլերին կըվախեցնեմ, որսի կըգնամ, նապաստակ կըբռնեմ, բագեր կըգտնեմ. իմ կողմից սա էլ բաւական է»։

17. Ո Ր Ց.

Հօրեղբալը որսորդ է. Նա ունի հրացան, որսի պարկ և շատ շներ։ Մի օր հօրեղբալը ասաց ինձ. «Խորամանկ աղուեսը գիշերս եկել և մեր հաւանոցից մի հաւ է գողացել. Ես պէտք է գնամ, նրան սպանեմ. ուզում ես՝ գու էլ

արի հետո»։ Ես շատ ուրախացայ և թռչկոտալով առաջ ընկալ դէպի անտառը։ Ինձանից առաջ՝ պոչը մէջքին դրած, գնում էին Պիտանը՝ մեր գայլ խեղդող շունը, և նրա երկու ընկերները՝ բարակ Զգաստը և քերծէ Թռչկանը։ Երբոք գիւղից մի փոքր հեռացանք, բարակն ու քերծէն բռնեցին աղուէսի հետքը և գետինը հոտոտելով՝ առաջ անցան. Պիտանը անպատճութիւն համարեց յետ մնալ նրանցից։

Մի քանի ըռպէից յետով շներն աչքներիցս կորան։ Ես կարծում էի, թէ նրանք էլ յետ չեն դառնալ. բայց հօրեղբայրս՝ որ փորձուած որսորդ էր, անտառի բերանում մի նեղ ճանապարհի առաջը կտրեց և ինձ էլ պատուիրեց, որ թփի յետեւը նստեմ։ «Իմ խելօք շները հէնց ալս ըռպէիս կըզբանեն աղուէսը և գուրս կըխռակեն դէպի մեզ», ասաց նա։

Մենք նստեցանք և սպասեցինք։ Ոչինչ չէր երևում. միայն հեռուից երբեմն լսվում էր շների հաջոցն ու կլանչոցը. հաջոցն առաջ անտառի խորքիցն էր լսվում. յետոց նա սկսեց քիչ-քիչ մօտենալ. . . Հօրեղբայրս ականջները լսում էր. . . մէկ էլ ինչ տեսնեմ՝ շները յետածած խռկում են դէպի մեզ մի շիկահեր աղուէս և մի նապաստակ. նապատակն առաջից թռչում էր գլուխը կորցրած, նրա յետեւից վազում էր աղուէսը, իսկ աղուէսի յետեւից հասույժաս գալիս էին բարակն ու քերծէն. Պիտանը յետ էր մնացել։ Նոյն ըռպէին հօրեղբայրս հրացանն երեսն առաւ և աչքեց աղուէսի կուրծքին։ Հրացանի տրաքիլն ու աղուէսի գլըխկոնձի տալը մին էլաւ։ Շները ական թոթափել վրայ տուին և ուզում էին ծուփկ-ծուփկ անել գազանին. բայց հօրեղբայրս մօտ վազեց և չըթողեց որ աղուէսի մորթը գըզգըզեն։

Ես ալդ միջոցին ուրիշ բանով էի զբաղուած. Երբոք հրացանի ձայնը որոտաց, խղճուկ նապաստակը հէնց իմա-

նաս սրտաճաք եղաւ, տեղն ու տեղը տափիցը կպաւ։ Շներն իրանց որսն ունեին, թէ չէ նրան հանգիստ չէին թողնիլ։ Երկիւղի առաջին ըռպէին՝ ես մօտ վազեցի և բռնեցի նապաստակը։ Նրա սիրտը սաստիկ բաբախում էր և իւր տըռուգ աչքերը կ'ասես չէր ուզում հեռացնել բարկացած շներից։ Ես փեշիս տակն առայ նրան, տուն տարայ և երկար ժամանակ կերակրում ու պահում էի։ Բայց մի գիշեր նամիտն էր բերել իւր վայրենի կացարանը և, չ'զիտեմ ինչպէս, գուրս էր փախել դէպի դաշտը։

18. Ի՞նչ ԿԸԲՐԴԵՍ, ԱՅՆ Կ'ՈՒՏԵՍ.

Որսորդները՝ գալիք յետեւից ընկած, հալածում էին։ Ճարը կտրած, նա փախաւ՝ գիւղը մտաւ և ուզում էր մի տեղ գտնել թագչելու։ Բայց նրա չար բախտից բոլոր դռները փակ էին։

Գալիք տեսաւ կատուին և աղաչեց. «Փիշիկ, իմ բարեկամ, ասա շուտով, ալս գիւղացիներից ո՞րն այնքան բարի կըլինի, որ ինձ հիւր լնդունի և չար ոսոխներիցս ազատի։ Դու լսում ես շների հաջոցը և փողերի ձայնը. ալդ ամենը իմ յետեւիցս են ընկած»։

— Շուտով խնդրիր Ստեփանին, նա շատ բարի մարդ է, ասաց կատուն։

«Ալդպէս է, բայց ես նրա ոչխարը յափշտակել եմ»։

— Ուրեմն փորձիր Կարապետի մօտ օդնութիւն գանել։ «Աշխենում եմ» որ նա էլ ինձ վերայ բարկացած լինի, որովհետեւ նրա էլ այծն եմ գողացել»։

— Վազիր ուրեմն Մարկոսի մօտ։

«Ո՛չ, չեմ կարող. նա գարունքուանից զալրացած է իմ դէմ. ես նրա հորթը լափել եմ»։

— Ալդ վատ բան է, բայց հաւատացած եմ, որ քեզ Կիրակոսը կըպաշտպանէ»։

«Ա.՝ ի, կատու եղբայր, նրա էլ դառն եմ կերել»:
—Ինչպէս տեսնում եմ, գայլ, դու այս գիւղում ա-
մէնքին էլ վնաս ես հասցըել, ասաց կատուն. ուրեմն էլ
թնչ պաշտպանութիւն ես որոնում: Զէ, այս լաւ իմանաս,
որ մեր գիւղացիք այնքան յիմար չեն, որ իրանց վնասա-
կար թշնամուն պահեն պաշտպանեն: Եւ իրաւունք ունին.
դու ես մեղաւոր՝ ի՞նչ որ բրդել ես, առյօն և երեխ:



19. Ծ Ւ Ծ Ե Ռ Ն Ի Կ.

Մարտըն անցաւ, հասաւ տպրիլ գեղեցիկ,
Հեռու աշխարհից եկաւ ծիծեռնիկ.
Բարնվ դու եկար, գարնան կարապետ,
Բուն շինողներից ամենից վարպետ:

Կոռունկը թըռաւ, գնաց վերերէն,
Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներէն,
Մէկ դու մնացիր ճնճղուկների հետ,
Սիրուն ծիծեռնիկ, գարնան կարապետ:

Պատուհանիս մօտ շինիր քո բունը,
Ոնուշ ճըռւողով երգէ գարանը.
Ածա ձու, հանէ գեղեցիկ ձագեր,
Մնա մեր մինչի սեպտեմբեր:

20. Ծ Ւ Ծ Ե Ռ Ն Ա Կ.

Ծիծեռնակը, տես, ամենեին չէ հանգստանում. ամբողջ
օրը թուչում է, ծղօներ է հաւաքում, կտուցովը կաւ է
կրում, իւր համար բուն է շինում: Բունը շինեց, վերջա-
ցրեց, մէջը երեք ձու ածեց, նրանց վերայ շարունակ երեք
շաբաթ պինդ նստեց, փոքրիկ ձագեր գոյացրեց: Զագերը որ
դուրս եկան, բերանները բաց արին և կերակուր ինգրեցին:
Ծիծեռնակը թուաւ, գաշտը դուրս եկաւ, մժեղներ բռնեց,
նրանց կերակրեց:

Ժամանակը հասաւ. ձագերի փետուրները դուրս եկան.
Նրանք թևաւորուեցան, իրանց բնից դուրս թուան, հեռու-
ճանապարհ ընկան, կապոյտ ծովերի, մութ անտառների,
բարձր սարերի վերայից անցան:

Ճմեռն անցկացաւ. Գարունը եկաւ. Ծանօթ ծիծեռնակը
նորից յետ գարձաւ, իւր բունը գտաւ, նրան կարկատեց,
նոր ձուեր ածեց, նոր ձագեր հանեց, պահեց մեծացրեց,
աշնանը նորից նոյն կարգով թոցրեց:

21. ԵՐԳ. ՊԱՆԴՈՒԽԾ ՊԱՏԱՆԵԿԻ.

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թուչնակ,
Թէպի ուր, ինձ ասա, թուչում ես ալդպէս արագ:
Ա.՝ թուիր, ծիծեռնակ, ծնած տեղս՝ Աշտարակ,
Անդ շինիր քո բունը՝ հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալւոր հայր ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն սպասում է օրէ օր:
Երբ տեսնես դու նորան՝ ինձնից շատ բարե արա,
Ասա թող նստի լալ իւր անբախտ որդու վերայ:

Դու պատմէ՛ թէ ինչպէս, աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝ կեանքս մաշուել եղել զէս:

Ինձ համար ցերեկը մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի դալիս:

Ասիր որ չբացուած՝ թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝ հալենի հողից զբկուած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, թռիր արագ,
Դէպի Հայոց աշխարհը՝ ծնած տեղս—Աշտարակ:

22. ԲՈՅՑԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Մենք գիտենք բոյսերի մի քանի դասակարգ՝ ծառեր,
Թփեր, հացաբոյսեր, բանջարեղիններ, սունկեր և խոտեր:

Ծառն ունի մէկ հաստ բուն, շատ ճզներ և ոստեր:
Ոստերի վերայ կամ տերեներ կամ ասեղներ—փշեր:

Թուփը մէկ բնի փոխանակ մի քանի բարակ բներ ունի:
Հացաբոյսերը բնի փոխանակ դատարկ ծղոտներ ունին:

Խոտը բարակ ցողուն ունի: Սունկը չ'ունի ոչ տերեւ և
ոչ ոստեր, միայն ունի մի կոթ և նրա գլխին իւր լատակ:

Մենք մի քանի բանջարեղինների պատեանները և նրանց
միջի սերմերն ենք ուտում, միւսների արմատը, իսկ մի քա-
նիսների՝ տերենները:

23. Ե Ր Ա Շ Տ.

Ամառը չորէին էր: Արեգակը օրէցօր բարձրանում էր
պարզ երկնքի վերայ: Ճանապարհին թողը ամպի նման տա-
րածվում էր: Երկերը քարի պէս պնդացել ու ճաքճքոտել
էր: Առուները ցամաքել էին: Ծաղիկները տխրութեամբ կա-

խել էին իրանց գլուխները. խոտերը գեղնել էին. նորահաս
արտերը թառամել էին: Երկրագործը տխրութեամբ նայում
էր իւր արտերին և ասում. «Ա՛ստուած իմ, ինչ որ ինձա-
նից կախուած էր՝ արեցի, հողը՝ որքան կարելի էր, խոր ցե-
լեցի, ընտիր սերմով սերմեցի և ուշադրութեամբ ցաքեցի,
այժմ թող լինի Քո սուրբ կամքդ»:

24. ԲՈՅՑԵՐԻ ԿԵՐԱԿՈՒՐԸ.

Պայծառ երկնակամարի վերայ ամպեր երևեցան. Փոքը
առ փոքը նրանք թանձրացան և սև կեղևով ծածկեցին կա-
պոյտ երկինքը, իսկ երեկոյին կենսատու սնձրել ջրեց արօ-
տամարդերը և արտերը: Դաշտային թառամած բոյսերը
գուարթացան. Նրանք անտեսանելի կերպով ծծեցին իրանց
քարակ արմատներով թաց հողի սննդարար հիւժը: Խոտը
կանանչեցաւ. ծառերի փայլուն տերևները ագահաբար ներս
ծծեցին խոնաւ օդը: Ուրախ զուարիտ տատանուիլ սկսեցին
ցարենի, գարու և վարսակի արտերը և արագ-արագ լցըին
փրանց քստալի հասկերի նիշար հատիկները:

25. ԾԱՂԻԿՆԵՐԻ ԵՐԳԸ.

Վարդ.

Ինձ ամէնքը կոչում են
Ծաղիկների թագուհի,
Որովհետեւ ծաղիկս
Սիրուն գոյն ու հոտ ունի:
Թէւ իմ կանաչ թուփը
Շատ մարդու ձեռք կըծակի,
Բայց այս անմեղ յանցանքը
Ինձ ամէն մարդ կըների:

Յուշան.

Իմ սպիտակ կոկոնում

Անուշ բուրմունքներ կան շատ,

Եւ ոսկէնման փոշի

Մեղուներին բազմաշխատ:

Իմ ցողունս է նազուք

Եւ գագաթս գեղեցիկ,

Տերեները լնդարձակ

Եւ ինքս եմ խիստ հեղիկ:

Իմ հիւրասէր թերթերում

Մեղու, մըջիւն թէ թիթեռ,

Կարող են հանդիստ գտնել,

Իբրև ազնիւ գեռուններ:

Յափրուկ.

Իմ թուփերս փարթաս չեն,

Ոչ ծաղիկս փառաւոր,

Բայց բուրմունքս կըլսեն

Ամեն մարդիկ հեռաւոր.

Այս պատճառով կարող էք

Յափրուկ գտնել ամեն տեղ,

Թէ փոքրիկ պարզ փունջերում,

Թէ պարտէզներում շքեղ:

26. ԿՈՂԱՄԲԻ ԹԻԹԵՌ.

Մանուկը պարտիզում բռնեց մէկ սպիտակ թիթեռ. և
բերեց իւր հօր մօտ:

«Դա շատ վնասակար թիթեռ է», ասաց հայրը. «Եթէ
դրանք բազմանան, մեր կաղամբը բոլորովին կ'ոչնչանայ»:

—Միթէ սա այդպէս ագահ է, հարցը մանուկը:

«Ոչ թէ ինքը թիթեռն է ագահ, այլ նրա թրթուրը»,
պատասխանեց հայրը. «այդ թիթեռն ածում է շատ մանր
ձուաներ, իսկ նրանցից գուրս են սողում որդունքներ, ո-
րոնք անուանվում են լրլուրներ: Թրթուրը շատ ագահ է.
Նա ուրիշ բան չ'ունի, բացի ուտելն ու մեծանալը: Երբ նա
մեծանում է, պատենաւորվում է: Այդ միջոցում նա ոչ ու-
տում է, ոչ խմում, այլ անշարժ ընկած է: Մի քանի ժա-
մանակից յետոյ նրանցից թիթեռ է գուրս գալիս, ինչպէս ա-
հա այդ բռնածդ: Այդպէս կերպարանափոխվում են ամէն
թիթեռներ. ձուից գոյանում են թրթուրներ, թրթուրներից՝
պատենաւորներ և պատենաւորներից՝ թիթեռներ: Իսկ թի-
թեռները ձու են ածում և մեռնում»:

27. Զ. Ա. Տ Ի Կ.


Որդին. Նայիր, հայրիկ, ինչպէս գեղեցիկ, կոռիկ
բզեզ եմ բռնել: Որա գլուխը սկ է, թևերը կարմիր և թևե-
րի վերալ բծեր կան: Միթէ սա կենդանի է, հայրիկ. ամե-
նենին չէ շարժվում:

Հայրը. Կենդանի է, բայց մեռած է ձեռնում. իւր
վեց ոտները ծալել, փորիցն է կալցրել, բեխերը թագցրել է
և սպասում է, որ դու նրան վայր դցես խոտերի մէջ: Դրա
անունը զատիկ է: Դա շատ օգտակար բզեզ է: Զատիկը և
աւելի դրա թրթուրները ուտում ոչնչացնում են շատ վնա-
սակար կանաչագոյն միջատներ, որոնք խմբովին կպչում են
տերեներին և շատ վնասներ են տալիս նրանց:

Որդին. Նայիր, հայրիկ, բզեզն արթնացաւ և բարձ-
րացաւ մատիս ծայրը: Այնտեղից նա սւր կըգնալ:

Հայրը. Ահա կըտեսնես. մաիկ տուր, նա ինչպէս շարժում է իւր կարծը վերնաթերը, իսկ նրա տակից հանում չուրմ է իւր իսկական թերը, որոնք թեթև են և թափանցիկ:

Որդին. Ահա թռաւ նա. ինչ խորամանկ բգեզ է եղել:



28. Թիթե՛՛ ԵՒ ՄԱՆՈՒԿ.

Մանուկ.

Սիրուն թիթեռ ինձ ասա,
Թէ բնչով ես դու ապրում.
Ամբողջ օրը խաղում ես,
Ի՞նչպէս է որ չես յոգնում:

Թիթեռ.

Սիրուն կանաչ դաշտերում.
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղկանց բուրմունքը անուշ
Իմ կերակուրս է միակ:
Բայց իմ կեանքս շատ կարճ է
Նա մի օրից չէ երկար.
Բարի եղի՛ր, ով մանուկ,
Խնալի՛ր, ինձ մի ձեռք տար:

29. ԾԱՌԵՐԻ ՎԵՃԸ.

Ծառերը վիճեցին միմեանց հետ, թէ նրանցից ո՞րն է լաւ: Կաղնին ասաց. «Ես բոլոր ծառերի թագաւորն եմ. իմ արմատս գետնի մէջ խորն է մտած, բունս հաստ է, գագաթս երկնքին է նայում. իմ տերևներս կտրտուած, իսկ ճղներս կարծես երկաթից ձուլած լինին: Ես փոթորիկների առաջ չեմ խոնարհում, կայծակների առաջ չեմ ընկճվում»:

Սուին ժամաց այս խօսքերի վերայ. «Նատ ես պարծենում, ասաց նա. դու մոռանում ես, որ ինձնման ծառ ողջ Հայաստանում չ'կայ. արմատներս անդունդն են հասնում. գագաթս ամպերի մէջ է խաղում. ես հարիւրաւոր ճղներ ունիմ, ամեն, մի ճիւղս քո բունիցդ հաստ: Իսկ իմ բունս... նրա փչակում կարող է մարդս կարիք օրը պատսպարուիլ: Համեստութիւն արեցիր, պտուղներդ չ'իշեցիր. բայց նրանք էլ խոզերին են քեզ մօտ հրաւիրում. իսկ իմ կոծոններս թէւ սնուցիչ չեն, բայց տերևներիս հետ ձեռք-ձեռքի տուած սօսելով, յոգնած և արևից տոչորուած անցւորականին իրանց ստուերի տակն են առնում՝ արևից, անձրւից պաշտպանում»:

Խնձորենին լսեց այս երկուսի խօսակցութիւնը և ասաց. «Դուք երկուսդ էլ շատ էք հպարտանում, բայց ասացէք, դուք տալիս էք մարդկանց այն, ինչ որ նրանք ինձանից են ստանում»:

Լսում է մալրին, շարժում է իւր փշոտ գլուխը և ասում է. «Սպասեցէք, շուտով կըգայ ձմեռը և դուք ամէնքդ էլ կըմերկանաք, իսկ ինձ վերայ միշտ կըմնան իմ կանաչ փշերը: Առանց ինձ ցուրտ երկիրներում ապրել չէ կարելի. ես նրանց վառարանները տաքացնում եմ, և մարդիկ իմ փալտից իրանց համար խրճիթներ են շինում:

30. ԸՆԿՈՅԶ ԵՒ ԴԳՈՒՄ.

Ամառուայ շոգ եղանակին՝ գիւղացին, ընկուզենու տակ ձգուած, հովանում էր: Աերև նայելով՝ նա տեսաւ ծառի վերայ շատ ընկոյզներ. «Զարմանալի բան է, մտածում էր գիւղացին. այս ծառի մեծութեանը մտիկ տուր ու իրան պտուղներին: Բունը ահագին, ճղները բազմաթիւ և լայնատերե, կ'ասես մի կատարեալ բլուր լինի, բայց պտուղներն այնքան մանր են, որ եթէ նրանք ջուխտ-ջուխտ, կամ երեք-երեք չ'լինէին, տերևների արանքներում պահուելով, դժուարութեամբ կըտեսնուէին. մինչդեռ դդումը, որ աւելի մեծ է, քան թէ մարդու գլուխը, աճում է այնպիսի բարակ և քընքոյշ ցողուների վերայ: Զէ, եթէ ես Աստուած լինէի, բանն ուրիշ տեսակ կըստեղծէի»: Այս խօսքերն ասած չ'ասած, յանկարծ մի ընկոյզ ցած ընկաւ և այնպէս սաստիկ դիպաւքթին, որ արիւնն աղբիւրի պէս դուրս բխեց:

«Մեղալ Աստուծոյ, բացականչեց գիւղացին. լաւ օրի կըհասնէի, եթէ այդ բարձրութիւնից դդում վայր ընկնէր իմ գլխին: Զէ, Աստուած ամեն բան իմաստութեամբ է ստեղծել, և ես, մեղաւորս, չ'պիտի համարձակուիմ նրա ստեղծածի մէջ սխալներ գտնել»:

31. ՈՒՐԻՇԻՆ ՀՈՐ ՓՈՐՈՂԸ, ԻՆՔԸ ՄԵԶԸ Կ'ՐՆԿՆԻ.

Մի ծեր մարդ ապրում էր իւր պառաւ կնոջ հետ: Պառաւը շատ չար կին էր և ունէր մի աղջիկ՝ անունը Շողակաթ: Շողակաթը չարութեան կողմից իւր մօրիցը պակաս չէր:

Ծերը հանդարտ և բարի մարդ էր և ունէր մի աղջիկ, անունը Մարիամ: Մարիամն էլ շատ հանդարտ, աշխատասէր և գեղեցիկ աղջիկ էր:

Խորի՞ մայրն ամենեին չէր սիրում Մարիամին: Նա միշտ ասում էր իւր մարդուն. «Չեմ ուզում Մարիամի հետ կենալ: Տար նրան անտառը, այնտեղ մի գետնափոր գտիր, թող նա այնտեղ մանի, գործի, ինչ ուզում է անի»:

Պառաւն այնքան ասաց, որ խեղճ մարդու գլուխը տարաւ: Էլ ուրիշ ճար չ'կար. ծերը լծեց սալլակը, վեր առաւ Մարիամին և ճանապարհ ընկաւ: Գնացին անտառը և այնտեղ գտան մի ալր: Նատ ցաւում էր ծերը իւր աղջկայ վերայ, բայց ինչ անէր: Նա տուեց Մարիամին հրահան, կայծաքար, աբէթ և մի տոպլակ բրինձ ու ասաց նրան. «Մարիամ, կըակ վառիք, որդի, բըինձից քեզ համար կերակուր եփիր, խրճիթդ լաւ սըբթը—աւելիր և գու էլ նստիր ու մանիր. մի վախենար, վաղը ես կըգամ քեզ տեսութեան»: Մերը մնաս բարով ասաց իւր աղջկան և յետ գարձաւ տուն:

Մարիամը մնաց մենակ, ամբողջ օրը մանեց, իսկ երբոր մթնեց, վառարանը վառեց և իրան համար կերակուր եփեց: Հենց որ կերակուրն սկսեց եփ գալ, մին էլ տեսնես յատակի տակից մէկ մուկը դուրս վազեց և նրան ասաց. «Սիրուն աղջիկ, մի գդալ սպաս տան ինձ՝ ուտեմ»: Մարիամը լաւ կերակրեց մկանը. նա էլ շնորհակալութիւն արեց ու գնաց:

Ինքը Մարիամն էլ հաց կերաւ և էլի սկսեց մանել: Յանկարծ, կէս գիշերին, մէկ արջ ներս է մտնում խրճիթը և ասում է նրան. «Ապա, աղջիկ, կըակը հանգցրու, արի աչքակապուկի խաղանք. վեր առ այս արծաթէ զանգակն ու զընգընգացրու. իսկ ես կ'աշխատեմ քեզ բռնել»:

Մարիամը շատ վախեցաւ և չէր իմանում թէ ինչ ա-

նի: Բայց այն ըոպէին մուկը դուրս վազեց լատակի տակից, բարձրացաւ Մարիամի ուսերը և նրա ականջումն ասաց. «Մի վախենար, Մարիամ, կրակը հանգըրո՛ւ, դու էլ դռան յետեր թագկաց, իսկ զանգակն ինձ տուր»: Մարիամը այնպէս էլ արեց:

Արջն սկսեց խաղը, բայց ամենեին չ'կարողացաւ մկանը բռնել. մուկը վազում էր և զընգընգացնում. իսկ արջը նրա յետեկից պտուտ-պտուտ էր անում: Նա շատ այս ու այն կողմն ընկաւ, բարկացաւ, կատաղեցաւ, գոռաց բարձր ձայնով, սկսեց գագանակով բոլոր անկիւններին և պատերին խփել, կոտրտեց բոլոր ամանները. բայց մկանն ի՞նչ պիտի անէր: Վերջապէս արջը հանգարտուեցաւ և ասաց. «Դու շատ լաւ աչքակապուկի ես խաղում, աղջիկ. այդ պատճառով ես առաւօտեան կուղարկեմ քեզ համար մի ջոկ ձի և մի սայլ հարստութիւն»: ասաց ու գնաց:

II

Միւս օրը, առաւօտեան, պառաւն ի՞նքն ուղարկեց ծերին անտառ. «Գնա, ասաց, տես, շատ է մանել քո Մարիամը»:

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց լուսամուտի առաջ և ինքն իրան ասում էր. «Ահա ծերուկս կըգայ և Մարիամի ոսկըներն էլ հետը կըբերէ»:

Պառաւը նստած էր ամբողջ երեք ժամ և սպասում էր. մէկ էլ լսեց որ անտառի կողմից մի չըխչըխկոցի ձայն է գալիս. շունն էլ տախտի տակից սկսեց հաջել և ասել. «Տես, տես, ծերունու աղջիկը գալիս է, հետն էլ մի խումբ «Տես, տես, ծերունու աղջիկը գալիս է, հետն էլ մի խումբ է քշում, մի սայլ էլ հարստութիւն է բերում»: Պառաւը բարկացաւ շան վերայ. «Սուտ ես ասում, անպիտան, բարկացաւ շան վերայ. «Սուտ ես ասում, անպիտան, այդ Մարիամի ոսկըներն են չըխչըխկում»: Այս խօսքերն

ասած չ'ասած, բագի դռները բացուեցան, ձիոնքը ներս թափուեցան, իսկ Մարիամը, իւր հօր հետ սայլի վերալ նըստած, անթիւ բարիք էր բերում: Պառաւը բարկացաւ, կատաղեցաւ. նրա շրթունքները սեացան և զարմացած ասաց. «Ա՛յ քեզ հրաշք: Վաղն էլ իմ աղջկաս տանես անպատճառ. իմ Շողակաթը քո Մարիամի հատը չէ. նա երկու ջոկ ձի կըբերէ և երկու սայլ ոսկի»:

III

Միւս օրը ծերը պառաւի աղջկան տարաւ անտառի ալրը և տուեց նրան բոլոր բաները, ինչ որ իւր աղջկանն էր տուել: Շողակաթը կրակը վառեց և ճաշ եփեց: Մուկը յատակի տակից դուրս նալեց և ասաց. «Սիրուն աղջիկ, խընդրեմ մի գդալ կերակուր տաս»: Շողակաթը գոռաց նրա վերալ. «Կորիր, կեղտոտ անպիտան, դեռ կերակուր էլ է ուղում», ասաց ու ճիպոտով խփեց խեղճ մկան մէջքին: Մուկը փափաւ, մտաւ իւր բունը. իսկ Շողակաթը նստեց, միայնակ բոլոր կերակուրը կերաւ ու պառկեց քնելու:

Կէս գիշերին արջը ներս մտաւ ալրը և ասաց աղջկան. «Ա՛յ աղջիկ, արի աչքակապուկի խաղանք: Ա՛ռ տիս փոքրիկ զանգակը, վազիր և զընգընգացըրո՛ւ. իսկ ես կ'աշխատեմ քեզ բռնել»: Աղջիկը վեր առաւ զանգակը և սկսեց վազել. բայց ուր պիտի փախչէր արջի ձեռքից. նրա ծնկները ծալվում էին, ձեռները գողգողում և զանգակն ինքն իրան զընգընգում էր: Իսկ մուկը յատակի տակից ասում էր. «Չար Շողակաթը թող ոչնչանալ. արժանի է»:

Միւս առաւօտ պառաւը մարդուն ուղարկեց իւր աղջը-կայ յետեկից. «Գնա, ասաց նա, ձիանքը և ոսկին բեր»:

Ծերը գնաց. իսկ պառաւը նստեց գրանը և սպասում էր. փոքր ժամանակից յետով նա լսեց, որ անտառի ճանա-

պարհեց թըխկթըխկոցի ձայն է գալիս, շունն էլ սկսեց դռան յետելից հաջել. «Ահա՝ գալիս է պառաւի աղջիկը, ախ է քաշում, հառաչում, իսկ գատարկ սալլը թըխթըխկում է»։ Պառաւը բարկացած խփեց շանը և ասաց. «Սուտ ես ասում, անպիտան, այդ արծաթի ձայնն է, որ արկղների մէջ զընդգընդում է»։

Վերջապէս ծերունին մօտեցաւ. սալլը դռանը կանգնեց։ Պառաւի աղջիկն այնպէս ջարդուել ու կոտրատուել էր, որ հազիւ կարողացան սալլակից ցած բերել նրան։ Կատաղեց չար պառաւը, բայց ինչ կարող էր անել։

Մի քանի ժամանակից յետով Մարիամը մի լաւ երիտասարդի հետ պսակուեցաւ։

ՇՐՋԱԿԱ ՀՈՐԻՌՈՐԴ

1. ԱՌԱԽՈՏԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆ ԵՐԼ.

Պայծառ արեւը բարձրացաւ երկինքը և ցրուեց դէպի ամենայն կողմեր իւր ոսկեփայլ ճառագայթները, որ զարթացնէ երկիրը։

Առաջին ճառագայթը թռաւ, արտառտի վերայ ընկաւ։ Արտոյտը թըրպըրտաց, թափ տուեց թևերը, դուրս թռաւ բնից, շատ ու շատ բարձրացաւ և երգեց իւր գեղեցիկ երգը. Ա՛խ, ինչքան լաւ է առաւտեան պարզ և թարմ օդի մէջ թուչիլը, ինչպէս լաւ է, որքան դուրեկան։

Երրրրր ճառագայթը նապաստակի վերայ ընկաւ։ Նապաստակը շարժեց ականջները և ուրախ-ուրախ թռչկոտաց դէպի ցողապատ մարգագետինները. վագեց գնաց նախաճաշիկ անելու հիւթալի խոտերով։

Երրրրր ճառագայթը հաւաբունը մտաւ։ Աքաղաղը թափահարեց թևերը և երգեց՝ ծուղղուղուց։ Հաւերը ցած եկան թառերից, կրկուացին, սկսեցին քջնել աղբը և ճիճուներ որոնել։

Չորրրր ճառագայթը փեթակի վերայ ընկաւ։ Մեղուն դուրս սողաց իւր մոմեղէն խցից, կանգնեց փեթակի դռան առաջ, ուղղեց իւր թևերը և բզզալով թռաւ գնաց մեղը հաւաքելու հոտաւէտ ծաղիկներից։

Հինգերրր ճառագայթը մտաւ մանկանոցը և ընկաւ փոքրիկ ծոյլ մանուկի անկողնու վերալ ու սկսեց ուղղակի նրա աչքերը ծակծկել. բայց նա շուռ եկաւ միւս կողքի վերայ և քնեց։

2. ՇԻՆԱԿԱՆ ՆԵՐԻ Ա.Պ.Ա.Ի ՕՏԵԱՆ ԵՐԳԸ.

Ա՛յ մարդ, այսօր շատ քընեցար – ննջեցիր,
Առաւոտեան հով ժամանակն անցուցիր.
Արեգակը ծովի ծալրէն ծագեցաւ,
Զերմութիւնը ձորն ու դաշտը փլուուեցաւ:

Հնիերներդ վաղ արտերը գնացին,
Յորեն, զարի գերանդիով հնձեցին.

Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանգչիլ կաղնիների հովումը:

Ա՛յ մարդ, վեր կաց, սառը ջրով լուացուիր,
Դօտիդ կապէ, գերանդիդ առ, դաշտ հասիր.

Քանի հովէ՝ հունձդ արա արտումըդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումըդ:

Հունձը կապէ, բարդը բարդէ, տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձը կատարի.

Ի՞ր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես իրիկուան կըպտարաստեմ սեղանը:

Ա՛յ մարդ, հերիք ինչ-որ այսօր քընեցար,
Սչքըդ մէկ բաց, տես թէ նրչափ ուշացար.

Մեր դըրացին վաղ անց-կացաւ կամուրջէն,
Վաղ լըռել է մեր գզիրը ձայնելէն:

Ի՞նչ ես սլառկել, ի՞նչ ես քընել, սիրական,
Արեգական շողը հասաւ մեր դըռան.

Մի ծուլանար, ժամանակդ խընալէ.
Այն պիտի մեզ բոլոր ձմեռ կերակրէ:

3. ԵՐԿՈՒ ՏԱԿԱՌԻ.

Երկու տակառ միասին ճանապարհ ընկան. մէկը գինով լիքն էր, իսկ միւսը դատարկէ: Առաջին տակառը հան-

դարտ գլորուելով առաջ էր գնում, իսկ միւսը խեւի պէս գորգուալով թռչկոտում էր քարած ճանապարհով և սաստիկ էլ թող էր անում: Անցուգարձ անողները վախից ճանապարհի մի կողմում կուչ էին գալիս, հեռուից նրա գորգուոցը լսելով: Բայց ինչքան էլ գորգուար նա, էլի առաջին տակառի չափ օգտակար չէր:

4. ՀԱՅՆ ՈՒՃԵԼՈՎ, ԲԱՆՆ ԱՆԵԼՈՎ.

Աշխատասէր մանուկը նստել էր լուսամուտի առաջ և պատրաստում էր իւր դասերը: Դուրսն էլ արևն այնպէս սիրուն փայլում էր, որ կարծես թէ ասում էր մանկանը. «Բաւական չէ, ի՞նչ կարդացիր, վեր կաց, խաղերդ սկսիր»: Մանուկը պատասխանում է արեգակին. «Ոչ, պայծառ արևսիկ, ոչ. ալժմ խաղի միջոց չ'ունիմ, թող առաջ դասս վերջացնեմ»:

Մանուկը գըում է ու կարդում. իսկ պատուհանի տակ, ճզան վերայ նստած՝ սիրուն թռչունն է երգում և միշտ այս բանն է ասում. «Հերիք չէ կարդաս. մի քէս էլ խապահ բանն է ասում. «Հերիք չէ կարդաս. մի քէս էլ խապահ բանն է ասում»: Մանուկը թռչունին պատասխանում է. «Ոչ, սիրուն դաս»: Մանուկը թռչունին պատասխանում է. «Ոչ, սիրուն դաս»:

Մանուկը դարձեալ նստած է՝ գիրքն առաջին և լուսամուտին էլ չէ նայում. իսկ պարտիզի կարմիր կեռասն ականջի տակ այս է ասում. «Բաւական չէ, ի՞նչքան կարդացիր, գուրս արի դուռը, ծառը բարձրացիր, հասած պտուղի կեր, ուրախացիր»: Մանուկը կեռասին պատասխանում է. «Ոչ, իմ քաղցրատես կեռաս, ոչ. ալժմ խաղի միջոց չ'ունիմ, թող առաջ դասս վերջացնեմ»:

Մանուկը կարդաց ու գըեց, բոլոր գործը վերջացըց, մէկըն արկդի մէջը գըեց, ապա դէպի այգին վազեց ու հազրէրն արկդի մէջը գըեց, ապա դէպի այգին վազեց ու հա-

մարձակ ձախով կանչեց. «Այն ով էր, որ ինձ հըաւիրում էր»: Արեգակն այժմ նրա համար աւելի լաւ էր փայլում. փոքրիկ թռչնակը իւր երգը նրան էր նուիրում. իսկ կեռասենին ծիծաղելով քաղցրիկ պտուղ էր ընծայում:

5. Ի՞նչՊէս Են ՇինուՄ Տները.

Փայտէ տները շինում են հիւսները գերաններից: Քարէ տները շինում են որմնագիրները աղիւսից կամ տաշած քարից: Ամէնից առաջ հիմքն են դնում. հիմքի վերալ բարձրացնում են պատերը: Պատերի մէջ թողնում են բացուածներ՝ դռների և լուսամուտների համար: Երբ որ պատերը բարձրացնում պրծնում են, ապա գցում են նրանց վերալ գերաններ, իսկ գերանների վերալ կոճեր: Յետոյ նրա վերալ շինում են կտուրը: Կտուրը թէքուած է լինում, որ անձրեսի ջուրը վերան չկանգնի: Կտուրները ծածկում են հողով, երկաթով կամ եղեգով:

Տունը դրսից պատրաստ է, բայց նրա ներսից դեռ էլի շատ գործ կալ: Պէտք է յատակն ու առաստաղը տախտակել, վառարանները պատրաստել, դռները կախել, լուսամուտների փեղկերը հագցնել: Պէտք է պատերը կամ ներկել կամ թուղթ կպցնել: Երբոր տունը պատրաստվում է, նրա մէջ բերում՝ դարսում են զանազան կարասիներ և ամանեղիններ. յետոյ կանչում են քահանային: Քահանան օրհնում է տունը և այնուհետև սկսում են նրա մէջ բնակուիլ:

6. Մեր ՏՈՒՆԸ.

Մեր տունը մեծ չէ: Նա մի յարկից է և ունի ութը սենեակ՝ դահլիճ, լնդունարան, սեղանատուն, ննջարան, մանկանոց, առանձնասենեակ և խոհանոց: Քահլիճն ամենամեծ

սենեակն է, իսկ նախասենեակը՝ ամէնից փոքրը: Մանկանոցը առանձնապէս մեզ համար է. այնտեղ մենք պատրաստում ենք մեր գասերը: Նա ունի չորս լուսամուտ և երկու դուռը: Մեր սենեակը շատ լոյս է, որովհետեւ պատուհանները մեծ-մեծ են: Սենեակի մէկ անկիւնում վառարանն է շինած, իսկ միւս անկիւնում դրած է մեր գրքերի ու թըղթերի պահարանը: Սենեակում կայ մէկ սեղան և մի քանի աթոռներ: Պատերի վերալ կախուած են շատ կենդանիների ու բոյսերի նկարներ. նրանք մեզ հարկաւորվում են դասներս պատրաստելու ժամանակ:

7. Խ Բ Ճ Ի Թ.

Կէս գիշերին պայծառ լուսինն
Երկընքումը բարձրացաւ,
Աղօտ ճամանչները սփռեց
Եւ խրճիթը լոյս առաւ:

Փոքրիկ խուղ էր, դատարկ ցեխից
Անշքապէս նա շինած.
Մի դուռն ունէր ցած և նեղլիկ
Եւ մի երդիկ էլ բացած:
Խրճիթի մէջը, երդկի տակը
Կոլոր հնոց կար շինած,
Նրա շուրջը երեք հոգի
Գործը ձեռքին նստուած:

Պառաւ կինը ճախարակը
Վարպետութեամբ պտտում էր,
Բրդի փափուկ քուլաները
Ուշի ուշով մանում էր:
Համեստագէմ կոյս աղջիկը՝
Մանդերքն առաջը դրած,

Հանդարտութեամբ բուրդ էր գզում,
Իւր մայրիկի մօտ նստած:

Երիտասարդ տղամ արդը

Արագ արագ տաշում էր,

Եւ մի ժամից ողջ գութանը

Վաղուան համար պատրաստ էր:

Հաւը խօսեց: Պառաւն մեղմով

Զեռքի քուլան վերջացրեց.

— «Կէս գիշերը վաղուց անցաւ,

Պէտք է քննենք», նա ասեց:

Անցան ժամեր: Եւ խրճիթում

Խոր լռութիւն էր տիրած,

Մինչ աղջիկը արիաջան

Անկողնից վեր էր կացած:

Լուսամուտից նա գուրս նայեց

Եւ շրթունքը մեղմ խաղաց.

Արշալուսը նոր էր բացվում,

Կուժն ուսեց, ջուրը գնաց:

8. ԴԱՇՏ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ.

Մարդիկ հերկում են դաշտը և հացահատիկներ են ցանում: Մանուկները գնում են ուսումնարան և Աստուծոյ խօսքը սովորում են:

Հատիկները ծածկվում են փափուկ հողի մէջ: Աստուծոյ խօսքը մտնում է մանուկ սրտերի մէջ:


Անձրևից երկրը փափկանում է, արևից տաքանում: Խելացի խօսքերով ու քնքութեամբ հոգին եռանդ է ընկ-նում:

Հողի տակ խաւարումը չեն ննջում սերմերը: Զէ ջնջում սրտիցը բարի ուսմունքները:

Սերմերը բուսնում են կանաչ ընձիւղով: Ուսումն աւանդվում է խելօք խօսքերով:

Սրտերը ծածկվում են ոսկէգոյն հունձով: Տիրոջ խօսքը պսակվում է բարի գործերով:

Ա'ստուած, ժամանակին տօւր անձրե, արև: Հայր, աճեցրու մեր սրտի մէջ բարութեան սերմերը:



9. ԿԱՒՑՈՒՅԹ.

Փոքրիկ նազելին վաղուց գիտէր, որ կաւիճով գրում են գրատախտակի վերայ, որ նրանով տողում են մահուդը՝ ձեւլու ժամանակ, որ կաւիճով կարելի է ձեռները և շորերը փոշոտել, որ նա սպիտակ է և փափուկ ու կարելի է

Փշրել, փոշի դարձնել: Ուրիշ ոչինչ չէր իմանում նազելին կաւիճի մասին: Մի անգամ նա հարցրեց իրանց աղախնին, թէ ուրտեղից են ստանում կաւիճը:

Խանութներիցն են գնում, պատասխանեց աղախնը:

— Նատ լաւ: իսկ խանութպաններն ի՞նչ տեղից են ստանում»:

«Սարերից . . . այդպիսի սարել էլ կան . . . »

— Հա, ուրեմն դա հող է, մտածեց նազելին, և էլ ոչինչ չ'հարցրեց:

Բայց որքան զարմացաւ մեր նազելին, երբ միանգամ նկատեց գրքի մէջ մի ալնպիսի պատկեր, որպիսին նկարած է այստեղ, և նրա տակը կարդաց՝ իտուի՛: Նազելին վագեց իւր մօր մօտ. «Մայրիկ, սիրելի մայրիկ, միթէ սա կաւիճ է նկարած»:

— Այն, որդի, տեսնում ես, գրած է . . .

«Բայց մեր կաւիճն այդպէս չէ, մայրիկ»:

— Նա էլ այդպէս կ'երևի, եթէ խոշորացուցի տակ դընենք: Խոշորացուցի մի խողովակ է, որ առարկաները ցուց է տալիս մեծ դիրքով:

Այսուհետեւ մայրն սկսեց պատմել, թէ ինչից և ինչպէս է գոյանում կաւիճը: ¹⁾)

Նազելին ուշադրութեամբ լսեց մօրը: Խօսակցութիւնը վերջանալուց յետոյ՝ նազելին նստած էր լուռ և մտածում էր. մտածելու էլ շատ բան կար. մօր պատմութիւնը աղախնի պատասխանին նման չէր. սրան հարկաւոր էր հասկանալ և լաւ հասկանալ:

¹⁾ Խեսուցիքը բացատրում է.

Կաւիճն այն մանր կենդանիների բունն է, որոնք շինում են կաւիճէ և կրէ լեռներ: Դրանք բնակվում են ծովային ջրերում և այնքան մանր են, որ հասարակ աշխով չեն տեսնուիլ: Խեսումականներն այդ մանրիկներին անուանում են ինքուզբէ: Նրանք շատ

10. Մ Ա Տ Ւ Տ.

Յոլակը, որ մի սրամիտ մտնուկ էր, իւր հօր գըասեղանի առաջ նստած՝ մտածիտներ էր կտրատում իրան համար և հօր համար: Նա քանի կտրում էր, կոտրվում էր: Թէ՛ մատիտ կտրելը շատ դժուար չէր, բայց ալսօր այդ բանը նրան չէր յաջողվում: Յոլակը մտածման մէջ էր. նա անուշադիր էր, նրա համար էլ գործը գլուխ չէր գալիս:

— Ի՞նչ ես անում, փոքրիկս, ներս մտնելով ասաց հայրը: Երեսում է՝ խելքդ ուրիշ բանի վերալ է, նրա համար էլ գործը ձեռքիցդ վայր է ընկնում:

«Հա, հայրիկ, ես ուզում եմ իմանալ, թէ ինչպէս է այս սեւ ու փալլուն չոփը փալտէ ճիպոտի մէջ մտել ու մատիտ դարձել:

— Ե՛հ, որդի, կ'ուզես հարիւր մատիտ կտրատիր ու կոտրատիր, բայց էլի քո խելքովդ ոչինչ հաստատ տեղեկութեան չես հասնիլ . . . Դա արդէն շատերին յայտնի է—գրքի մէջ կարդա, հարցըն . . . իսկ ինչ որ ամէնքն էլ վաղուց գիտեն, նրա մասին հարկաւոր չէ գլուխ ցաւացնել:

«Գրքերի մէջ ես այդ բանին չեմ պատահել, իսկ եթէ դու պատմես, հայրիկ, ես շատ շնորհակալ կըլինիմ,—միայն

են և իրանց մանր կաշուի մէջ սողում են ջրի յատակում. . . այնտեղ ապրում են-ապրում ու մեռնում իսկ իրանց կաշին—վահանը թողնում են ջրի յատակում. ջուրն էլ աւազի չետ քշում է նրանց իրան ալիքներով. դէպի ծովի ափերը: Դրանք այնքան շատ են, որ շնայելով դրանց մանրութեան, այդ մեռած մարմինները միմեանց վերայ դարսուելով՝ ծովի յատակից, շատ տարիներ անցնելուց յետոյ, վեր է բարձրանում և հապատաքար փայլում է արեգակի տակ մի ամբողջ սար: Աչա ինչպիսի նշանաւոր կենդանիներ են այս մանրիկները, նրանք մինչեւ անգամ ամբողջ սարեր են շինում: Երբեմն այդ սարերի վերայ աճում են խոտեր, թիերքաղաքներ, գիւղեր: Մեր պատերը սպիտակացնող կիրն էլքիչ չ'ունի այդ ջրային մանրիկների պատեաներից:

շուտ, որովհետև պէտք է գնամ դասերս պատրաստեմ:

— Շատ լաւ: Նայիր այդ կտորներին, որ դու այդ տեղ թափել ես. նրանք ու են, նշանակում է՝ ինչի՞ նման են:

«Ածուխի նման են, հայրիկ»:

— Շատ լաւ. բայց նկատի՞՝ ածուխն աւելի փափուկ է և երբոր կոտրում ես, հաւասար չէ կոտրվում. իսկ երկաթը, տեսել ես, ինչպէս է կոտրվում.—Համեմատի՞ր . . .

«Հասկացայ: Այստեղ խառնուած են երկաթը և ածուխը»:

— Ճշմարիտ է, ասաց հայրը և համառօտ կերպով պատճեց, թէ ինչպէս է պատրաստվում բնական և արհեստական կապարագրիչը: ¹⁾

11. Ո Ե Ց Ի Ն.

Վարդիկը, որ մի փոքրիկ, աշխատասէր և խելօք մանուկ էր, մի անգամ գրքից դասը արտադրելու ժամանակ է տառի տեղը ու գրեց: Վարդիկը նկատեց իւր սխալը և սկսեց լաց լինիլ:

«Մի լաց լինիր, սիրունիկ, ասաց նրան իւր մայրը. քան թէ լաց ես լինում, վեր տու և ուղղի՞ր»:

— Բայց այն ժամանակ կը կեղտոտի, մայրիկ, իսկ վար-

¹⁾ Ուսուցիչը բացատրում է.

Ածուխն ու երկաթը անհաւասար չափով, այսինքն մէկից շատ, միւսից քիչ չողի տակը խառնուել են միւսնց հետ, միացել են և գրանից առաջացել է խաղաքարտարը: Մարդիկ էլ գտել են նրան, սղոցել են և անց են կացը ել ճիպոտի մէջ ու մատիտը պատրաստուել է: Բայց այս էլ պէտք է իմանաս, որ սարերում գտած կապարագրով չեն բաւականացել մարդիկ. արժմ նրանք միւնյին բանում են արուեստական կերպով, այսինքն՝ գործարաններում: Պրահ համար առանձնապէս շինած չնոցներում երկաթը հալում են, նրա հետ ածուխն են խառնում և կապարագրը են պատրաստում: պատրաստելուց յետոյ՝ նրան զոկը կում և ստանում են զանազան առաջական փափուկ, պինդ . . . Փափուկ մատիտների մէջ երկաթը տեսակներ՝ փափուկ, պինդ . . . Փափուկ մատիտների մէջ երկաթը սակաւ է, իսկ պինդերի մէջ նա համեմատարար աւելի է:

Ժապետը պատուիրել է, որ մաքուր ու անսխալ արտագրենք:

«Ե՞՞», այդ ցաւին էլ ճար կ'անուի, վեր մու ռետինը կամ գրչահատը և կամաց ու զգուշթեամբ քերիր սխալ գրած տառը. միայն զգոյշ կաց, որ թուղթը չ'ծակես»:

— Յետոյ այդ քերած տեղը ինչպէս է գրեմ, մայրիկ. չէ որ թանաքը կը ծծի և աւելի վատ կը լինի:

«Ա՛յ ինչպէս կ'անես. զգուշութեամբ քերելուց յետոյ՝ դու նրան կը տրորես գրչահատի կոթով. լաւ տրորելուց յետոյ՝ շուտով կը գրես հարկաւոր տառը և իսկոյն աւազ կածես վերան . . . էլ ոչինչ չի նկատուիլ»:

Լացը դադարեց. տառը ուղղուած էր արդէն, և Վարդիկն սկսեց իւր մօրը հարցուփորձ անել:

— Ո՞րտեղից է, մայրիկ, այդ պատուական ռետինը, որ այդպէս զարմանալի կերպով ձգվում, մատովդ է փաթաթվում, իսկ երբոր բաց ես թողնում, նորից սեղմվում, կուչ է գալիս: Իսկ այն միւսը հազցըած է փալտի մէջ և ինչ երկար է ու մեծ. . . Ո՞րտեղից են այդ բոլոր ռետինները, մայրիկ:

«Մի ենսակ ծառ կալ, ասաց մայրը, որ աճում է տաք երկիրներում. այդ ծառից հիւթ է դուրս գալիս, իսկ այդ հիւթիցը կամ խեժիցը մարդիկ պատրաստում են զանազան տեսակ ռետիններ. նրանցից միքանիսը թանաքով գրածի համար է, միւսները մատիտով գրածի համար: Իւետինից շինում են նոյնպէս կրկնակօշիկներ, կօշիկներ, գնդակներ և ուրիշ բաներ: Մի ուրիշ անգամ էլ, երբոր ժամանակ կ'ունենամ, ես քեզ ցոյց կը տամ, թէ ինչպէս լաւ է ալրվում ռետինը»:

— Ալժմ, մայրիկ ջան, ալժմ ցոյց տուր. լուցկին քսես թէ չէ, կրակը պատրաստ կը լինի:

Մայրը վառեց ռետինը և նա սկսեց արուիլ: Վարդիկը համդարտ և անշարժ նայում էր: Նրա աչքերն էլ, կարծես, կրակ էին ընկել և այրվում էին հետաքրքրութիւնից:

12. ՍՊՈՒՆԳ.

Փոքրիկ Սաթինիկը հեալով և հազիւ շունչ քաշելով ներս վագեց մօր սենեակը և բացականչեց. «Մայրիկ-մարդիկ, տես ի՞նչպիսի սե մարդ է անցկենում մեր փողոցով. նրա վերայ, ոտից մինչև գլուխը, կախկըխուած են մի տեսակ դեղին, փափիկ բաներ, գեղեցիկ ծակոտիներով։ Նրանցից մինին ես այն էր՝ ձեռք էի տալիս, բայց որ իմանաս, թէ նա ինչպէս ծիծաղելի կերպով կուչ եկաւ, կ'ասես թէ վախեցաւ ինձանից, իսկ յետոյ ինքն իրան էլի ուղղուեցաւ։

— Հա, հասկանում եմ, ասաց մայրը. դա սպունգ վաճառող յոյն է, գնանք գնենք մի քանիսը. ես վաղուց մատդիր էի գնել Յոլակի համար։ Եւ բոնելով Սաթինիկի ձեռքից, մայրը դուրս գնաց բագը, ուր ներս էր եկել սպունգ վաճառողը։

Մինչեւ որ Սաթինիկի մայրը ջոկում էր սպունգներից աւելի մաքուրներն ու փափուկները, աղջիկն անդադար սեղմում էր կամ մէկ կամ միւս սպունգը. նրան սաստիկ գրաւում էր այն բանը, թէ ի՞նչպէս են նրանք սեղմվում և նորից բացվում, լայնանում։ Մայրը գնեց միքանի սպունգներ, վճարեց նրանց արժէքը և յոյնն էլ արդէն պատրաստվում էր հեռանալ. իսկ Սաթինիկը դեռ էլի բոնում էր իւր փոքրիկ թաթիկներով չէչոտ սպունգները և հետաքրքրութեամբ նայում էր կամ յոյնին և կամ մօրը։

— Դէհ գնանք, աղջիկս, տեսնում ես, ծախողը հեռանում է։

«Ա՝ իւր դա ո՞րտեղից է հաւաքել այդքանը, մարդիկ։»

— Գնանք, գնանք, ես յետոյ տանը կըպատմեմ քեզ։

Եկան տուն։ Աղջիկը չէր հեռանում մօրից, այլ շարունակ խնդրում էր, որ պատմէ, թէ որտեղից է հաւաքել յոյնը այդքան սպունգները։

Մայրը կատարեց իւր աղջկալ խնդիրը և պատմեց՝ թէ ինչպէս է ստացվում սպունգը։¹⁾

13. ՓՈՐՁԱՆՔ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՍ.

Գիւղացին ցորեն էր տանում ջրաղացը։ Զուալլ ծակ էր և միքանի ցորենի հատիկներ թափուեցան ճանապարհին։ Մտերը խմբովին ցած եկան և սկսեցին ուտել հատիկները. բայց աքաղաղը մօտ վագեց և ծտերին հալածեց։ Մտերը գանգատուեցան ցինին։ Ցինը իւր օրէնքով դատեց նրանց. առաջ պատուեց աքաղաղին, իսկ յետոյ խեղդուեց ծտերին։

1) Առանցիջը բացատրում է.

Եշն երկիրը, որտեղ ապրում են, յօյները, կղզիներով ցրուած է ծովի մէջ (ծովը մի մեծատարած ջուր է, այնքան մէծ, որ երբ միանգամ նրա մէջն են մտնում, էլ շուտով ցամաքի երես չեն տեսնում). այս ծովի ափերի մօտ՝ յօյներից աղքատները լողալով խորասուղվում են ջրի տակը և այնտեղից հանում են այդ սպունգ։ Ները, Յըրիցը նոր հանած ժամանակը սպունգներն ամենաին նման չեն լինում մեր գնածներին. նրանք ամբողջ ապէս ծածկուած են լինում լորձիւնով։ այնպէս որ այդ խոր ծակոտիներն ամենակին չեն շշմարվում։ Այս լորձիւնը նոյնպէս կենդանի է և ապրում է ծովի յատակում։ թէկ ամենեին չէ կարող իւր տեղը փոխել։ Բայց քանի որ նրան չեն պոկել իւր ծննդեան տեղից, նա ապրում է շարժում է իւր շշափուկները։ Այդ շշափուկներով նա ջրիցը ընդունում է իրան սննդունդը։ Նրանք շատ անգամ բռնում են բաւական մեծ տարածութիւն ծովի խոր քում։ Նրբոր ծովի տակից հանում են նրան, ստիպուած են լինում երկար ժամանակ լուանալով մաքրել այդ անշարժ կենդանու անախորժահոտ լորձիւնը։ մինչև որ հասնում են նրա փափուկ, ծակոտիկնաւոր մասերին, որոնք չիմա էլ ներս են ծծում ջուրը, բայց հէնց սեղմում ես թէ չէ, նորից դուրս են թողնում։ Հէնց իւր այս յատկութեամբն է նա մեզ պետանի և օգտակար։ Աւրեմ մեր ունեցած սպունգը՝ այն ծովային կենդանու ամրամասը, նրա սակրակաղմն է։

14. Հ Ր Ա. Դ. Ա. Յ.

Զուրը նաւից արշաւելով,
Կատաղաբար ձայն է հանում,
Եւ ջրաղացի լատակի տակ
Կարծես ամպեր են որոտում:
Անկիւնների խիստ շարժուելուց
Ամբողջ լատակն է դողդողում,
Եւ երկանի պտրտուելուց
Փռքը լեզուակն է ըլխէլչիւկում.
Նա շարժվում է օրօրուելով
Եւ լիք տաշտի բերանն շարժում,
Որից վերին երկանի մէջ
Մաքուր ցորեն է կաթկաթում.
Իսկ քարի տակ մանրուելով՝
Ալիւր դարձած ամբարն թափվում
Եւ ջրաղացը գեղեցկապէս
Իբրև ծերուկ ալեզարդում:

15. Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

Մի տուն ունինք, տան նման չի
Գետի ափին, մեծ ժայռի տակ
Կըկըզած է մեն-միայնակ.
Գիշեր-ցերեկ չար բուի պէս
Չայն է հանում, գոռում ալսպէս.
Թըրը ինկ-չըրը ինկ,
Վ. Ը Շ Մ - Ճ Ը Շ Մ :
Առուն բարձրից ցած է թըրոչում,
Պատը ծակում, միջովն անցնում.

Յատակումը դըղըդոց է,
Երմփոց ու թըրիկոց է:
Տան մէջ երկու ուժեղ գազան,
Մինը տակին, միւսը վըրան,
Առիւծի պէս մունչում են,
Իրար ըռեխ կըոծոտում են...
Մըանք մարդ չեն, ոչ արջ, ոչ գալ,
Ինչ էլ որ տաս քիչ է դարձեալ.
Հարամի են իսպառ քաղցած,
Էլ չեն լըսում ոչ խօսք, ոչ լաց.
Դուրս են մզում իրանց փորից
Կերակուրը փոշի դարձած:
Այժմ ասէք այդ ինչ տուն է,
Որ մինչ այսօր էլ կանզուն է:

Ա Ր Ե Ր Ե Ր Ե Ր Ե Ր :

16. Կ Ր Ա. Կ.

Սիմոնը գնաց դաշտը: Նատ ցուրտ էր և անձրև էր գտիս. Նա դողդողում էր ամբողջ մարմնով: Սիմոնը մտաւ անտառը, չոր ցախեր ժողովեց, ջէթից հրահանը հանեց, դարկեց կայծաքարին և կրակ՝ արեց: Նա տաքացաւ, շորերը ցամաքեցրեց և իւր չոր հացի կտորը տաքացրեց, կերաւ:

Կրակի առաջ նստած՝ Սիմոնը մտածում էր. «Ի՞նչ լաւ բան է կրակը. առանց նրան ոչ կերակուր կարելի է եփել և ոչ տաքանալ: Տես որքան գործ է շինվում դարբնոցում և գործարաններում: Եթէ կրակը չլինէր, մենք երկաթից ինչ-պէս պիտի շինէինք պայտեր, խոփ, կացին և ուրիշ շատ բաներ: Ճշմարիտ՝ թէւ երբեմն կրակից մենք վնաս ենք ստանում, բայց այդ էլ մեր անզգուշութիւնից, մեր լիմար անզոգութիւնից է լինում: Մենք արեգակիցն էլ ենք տաքա-

նում. Նա էլ կրակի նման այրվում է երկնքում: Առանց ա-
րեգակի ոչինչ չեր աճիլ՝ ոչ դաշտերում, ոչ անտառներում
և ոչ պարտէզներում, և բոլոր կենդանիք ու մարդիկ կըմեռ-
նէին քաղցածութիւնից: Իսկ այժմ Աստուծոյ ողորմութեամբ
ապահով ապրում ենք:

16. Դ Ա Ր Բ Ի Ն.

Կըուանը ձեռքին, զընդանն առաջին,
Քիթ-երես մըրոտ, դարբնոցի միջին,
Կաշուէ գոգնոցը առաջը կապած,
Լըռիկ կանգնած է մեր Խաչոյ դարբին:

Փուքսը—փուհական փուհական փչում է փչում,
Կայծեր ու մոխիր դէս ու դէն փըռում,
Երկաթի մի շերտ հընոցը կոխած,
Սաստիկ տաքիցը վառվում, կարմըրում:

Խաչոն հանում է երկաթի շերտը
Զընդանի վերայ կըուանով ծեծում,
Եինում նրանից պայտ, մեխ ու կացին
Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թշում է երկաթն ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս վըռում տաք-տաք գոլործին,
Կըկին պընդանում, կըկին փափկանում,
Մինչև պատրաստուած շպըրտվում գետին:

Այսպէս ամբողջ օր մեր դարբին Խաչոն
Կրակի առաջ, այն կեղտ ու մուրում,
Մի կտոր չոր հարելու համար
Կուչ-ձիգ անելով իւր կետնքն է մաշում:

Կ. ԱՌԵՎԵ-ՇԱՀ.

17. Օ Ֆ.

— Դու օդ տեսել ես:

Նա միշտ քեզ մօտ է և դու նրան չես տեսնում:

— Բայց կարելիք է լսել, թէ նա ինչպէս է ձայն հանում:
Տեսնենք:

Ահա քամին դողանջում է խողովակների մէջ և շվա-
ցնելով ներս է մտնում տան ամենայն բացուածներից, ահա
նա խփում է պատուհաններին և սաստիկ թող է բարձրա-
ցնում ճանապարհներում:

Իսկ ինչ բան է քամին:

Նա օդն է, որ շարժվում է — մի տեղից միւս տեղ է
փախչում: Փախչելու ժամանակ նա զարկում է որեիցէ ա-
ռարկալի և լսվում է աղաղակ, շվաց. երբ փչում ես փողդ,
կամ սըինգ ես ածում, կամ մտրակդ պտըրտացնում ես, —ա-
մէն անգամ ձայն է լսվում: Փորձի համար մի թղթի պարկ
շինիր և մի փոքրիկ ծակ թողելով՝ փչիր, ուռցըրու նրան,
իսկ յետոյ բռունցքով խփիր այդ փչած պարկին. պարկը
սաստիկ կըճայթի և կըպատառուի: Աա օդն էր, որ դու լցըել
էիր նրա մէջ քո բերանից: Երբ որ վազում ես, զգում ես,
թէ ինչպէս է խփում օդը քո երեսիդ: Նշանակում է՝ նա
միշտ քեզհետ է և դու նրանով ես շունչ քաշում: Առանց
օդի դու մի բոպէ էլ չես կարող ապրիլ: Երբ որ դու լողա-
լիս ջրի տակն ես անում, քո չորտ կողմդ ջուր է լինում:
Բոլորովին ալդպէս էլ օդն է շրջապատում քեզ ցամաքի վե-
րայ և դու նրան չես տեսնում այն պատճառով, որ նա շատ
նուրբ է և թափանցիկ: Օդը մինչև անգամ քո ներսդ էլ է
մտնում:

18. ՎՈՒՇԻ ՄՇԱԿՈՒՄՆ.

I. Փոքրիկ Հայկանուշը տեսաւ, որ իւր հայրը դաշտումը բռնով մանր ու փայլուն սերմեր էր ցանում, և հարցըց.

«Հայրիկ, այդ ի՞նչ ես անում»:

—Վուշ եմ ցանում, աղջիկս, որ քեզ ու Բարսեղի համար շապիկ դուրս գայ:

«Հայկանուշը մտածման մէջ ընկաւ: Նա երբէք չէր տեսած, որ շապիկներն աճեն դաշտումը»:

Երկու շաբաթից յետոյ ցելը ծածկուեցաւ կանաչ մետաքսեայ խոտերով, և Հայկանուշը մտածեց. «Ի՞նչ լաւ կըլինէր, եթէ ես ալդպիսի շապիկ ունենայի»:

—Միքանի անգամ Հայկանուշի մայրը և քոյրերը գնացին արտը քաղահանելու և ամէն անգամ ասում էին նրան, թէ լաւ շապիկ պէտք է ունենաս: Անցաւ էլի միքանի շաբաթ: Կանաչը բարձրացաւ, ցողունների գլուխներին կապտագոյն ծաղիկներ երեցան: «Իմ եղբայր Բարսեղի աչքերի նման են սրանք, մտածեց Հայկանուշը. բայց ալդպիսի շապիկ ես ոչ ոքի հագին չեմ տեսել»:

Երբոր ծաղիկները վայր թափուեցան, նրանց տեղը մընացին կանաչ և կոլոր գլուխներ: Երբոր գլուխները փոքրինչ կարմրեցան ու չորացան, Հայկանուշի հայրը և քոյրերը արմատից փետեցին նրանց, խորձեր կապեցին ու կոթերե վերայ կանգնեցրին, որ չորանան:

II. Վուշի խուբաները չորացան. նրանց գլուխները կըտրեցին, կալսեցին և պահեցին, իսկ կոթերը թըջոց գրին առուակի մէջ, վերան էլ քարեր գարսեցին, որ ջրի երեսը չ'անեն: Հայկանուշը տիտուր նայում էր, թէ ինչպէս են իւր շապիկը ջրումը խեղդում. իսկ քոյրերը նրան նորից ասացին, թէ գեղեցիկ շապիկ ես ունենալու:

Երկու շաբաթից յետոյ վուշը ջրիցը հանեցին, չորացրին և սկսեցին փայտով թակել՝ առաջ կալումը, իսկ յետոյ բագումը, այնպէս որ խեղճ վուշի չոփերը բոլորը դուրս թափուեցան: Թակելուց յետոյ սկսեցին երկաթէ սանդերքով գզել, մինչև որ նա փափկեց և դարձաւ իբրև մետաքս: «Ի՞նչ գեղեցիկ շապիկ ես ունենալու», ասացին նորից Հայկանուշի քոյրերը: Բայց Հայկանուշը մտածում էր. «Այդ ի՞նչ տեսակ շապիկ է. կ'ասես թէ մեր Բարսեղի շէկ մազերը լինի»:

III. Զմեռուայ երկար գիշերներն եկան: Հայկանուշի քոյրերը ճախարակներ սարքեցին և սկսեցին վուշից թել մանել: «Այս թել է, իսկ շապիկը ո՞րն է—մտածում էր Հայկանուշը»:

Հայկանուշի հայրը տորքը սարքեց խրճիթում, նրա վերալ հինած արեց և սկսեց գործել: Մասնաւում սատանի նման անցուգարձ էր անում թելերի միջով և Հայկանուշը տեսնում էր, թէ ինչպէս է թելերից քաթան շինվում: Երբոր քաթանը պատրաստուեցաւ՝ պրծաւ, նրան ցրտի տակ սառցը ին և ձիւնի վերայ փուեցին, իսկ գարնանը ձգեցին կանաչ խոտերի վերայ, արևի տակը, և վերան էլ ջուր ցանեցին: Քաթանը փոքր առ փոքր սպիտակեց ինչպէս ձիւն:

Մայրը քաթանից շապիկներ ձեւեց և Հայկանուշի քոյրերն սկսեցին կարել, այնպէս որ ջրօրհնէքին նա և իւր եղբայր Բարսեղը հագան ձիւնի պէս սպիտակ շապիկներ:

19. ԵՐԿՈՒ ՔՈՅՑ.

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգով դեռ արի, գլխով ալեսոր,
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը:

Ունէք նա երկու մատղահաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ:
Մի օր տգեղը ասաց միւսին.
«Երթանք ծովի ափ, քուրիկ, միասին»:
Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը լետնից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
«Քուրիկ, իմ քուրիկ, փրկէ ինձ մահից.
«Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
«Առ, էն քեզ լինի, պարգևէ ինձ կեանք»:
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:
«Քուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
«Կրտամ քեզ ոսկէ պսակ պատուական»:
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ.
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի յուսալ:
«Քուրիկ, մի թողնիլ դու ինձ անտէրունչ.
«Քեզ սիրուն փեսաս կրտամ անտրտունչ»:
Տգեղի սիրտը դարձել էր լեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:

Զկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բոնեց մարմինը սիրուն աղջկան,
Ջրիցը հանեց, դըրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վրան ու շատ խոտ:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջրկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վրան.

Տարաւ իւր տունը այդ անգին գիւտը,
Զորացուց նորա մարմնու դիմ հիւթը:
Գեղեցիկ տաւիդ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից:
Երբոր ամէն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք տաւիդը ձեռքին.
Եթե մտաւ գահին շրքեղ զարդարած,
Տեսաւ տգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խիեց,
Հետքերի առաջ քաղցրաձայն երգեց.
«Հնչէ, իմ տաւիդ, հնչէ համարձակ,
«Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
«Լսէ, իմ ծնող, լսէ սիրական,
«Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
«Լսէ, ժողովուրդ, լսէ անխըռով,
«Հարազատ քոյրս դլորեց ինձ ծով»:

Միւս օրը գահինք խարուկ շինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին:
Հուը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց»:

20. Կ Ո Վ.

Կովը ձիու չափ գեղեցիկ չէ և ոչ էլ նրա չափ ուժեղ.
բայց օգտակարութեան կողմից նա ոչ մի ընտանի կենդա-
նուց յետ չի մնալ:

Կովի դունչը լայն է, ականջները դէպի վեր չեն բարձ-
րանում, ալլ դէպի ալս ու այն կողմն են ցցուած: Կովի
ստամները պակաս են, այսինքն վերին ծնօտի վերալ ա-
ռաջնատամներ չ'ունի. ալդ պատճառով էլ կովը կծել չէ

կարող, բայց դըա փոխանակ կարող է հարու տալ իւր երկու սուր եղջիւրներով։

Կովի ճակատը տափակ է, վեզը բարակ, ողնաշարը դուրս ցցուած, կողքերը փքուած, ոտները կարճիկ, կճղակները բաժանուած, պոչը վրձնածև։

Կովը իւր կերակուրը երկու անգամ է ուտում. առաջ խոտը պոկում է, փոքը ինչ ծամլմորում ու կուլ տալիս. յետոյ երբոր բաւական պաշար է հաւաքում, կանգնում կամ նստում է մի ապահով տեղ, կուլ տուածը նորից բերանն է դուրս բերում և հանգիստ կերպով որոճում, այսինքն իւր տափակ սեղանատամների տակ նոր մէկից լաւ աղում, մանրացնում է։



Ամենայն առաւօտ և երեկոյ կովը վերադառնում է հանդից՝ կուրծը անուշ կաթով լցրած, բառաչում է ու կանչում տանտիկնոջը.

«Արի, արի, տանտիկին,

Նայիր իմ լիք ծծերին.

Գոգնոցդ կապիր,

Առատ կաթ կթիր.

Միայն հորթիկիս,

Սիրուն բալիկիս

Բաժինը թողնես՝

Լիք-լիք ծծերս

Դսպառ չ' դարտկնո»։

21. ԿՈՐԱԾ ՀՈՐԹ.

Զիւն էր գալիս փաթիլ-փաթիլ,

Հետն էլ անձրե կաթիլ-կաթիլ.

Ալդ միջոցին մի պառաւ կին

Հորթ էր փընտոռում դաշտի միջին։

Կովը եկաւ տաւարիցը՝

Կուրծ ու ծծեր կաթնով լիքը.

«Հորթուկս ուր է», նա բառաչեց,

Խեղճ պառաւին լացացրեց։

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով

Ողբում էին լաց ու կոծով,

Յանկարծ լսուեց մի բարակ ձայն։

Կովն իմացաւ, որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,

Պառաւըն յետքից տընքտընքալով.

Կորած հորթը մօրը գտաւ,

Լիք ծծերը բերանն առաւ։

Ծծեց բոլոր կաթն ու տըռզեց,

Տան տիկնոջը բան չ' թողեց։

Բայց պառաւը այս անգամին

Միրով ներեց չար հորթուկին։

22. ԿԹԵԼ. ԵՒ ՀԱՐԵԼ.

(Մարմարղական խաղ)

«Ոսա տեսնեմ, մեր գիւղերում
Կովերն ի՞նչպէս են կըթում»:

Ուշա այսպէս են կըթում.
Հորթին կապում մօր ծընկնից,
Ծիծը խլում զաւակից,
Կովկիթն իրանց ձեռքն առնում,
Ապա կողքին կըկլզում.

Փը 22, բը ժժ . . .

Փը 22, բը ժժ . . .

Ուշա այսպէս են կըթում,
Փոքրիկ հորթին լացացնում:
«Ո՞նց են հարում խընոցին,
Հենց էս օր էլ հարեցին»:

Ուշա այսպէս հարեցին.
Թոկը ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու շաբթուայ հաւաքսը
Նրա մէջը ածեցին,
Տաք ու հով ջուր խառնեցին
Եւ ծայրերից բռնելով՝
Տարան, բերին, շարժեցին. —

Թըլը իսկ, չըլը իսկ,

Չըլը իսկ, թըլը իսկ . . .

Ուշա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին:

23. Զ Ի.

Զին գեղեցիկ կենդանի է: Նա երբոր ուրախ է, խըր-
խընջում է եռանդով, ականջները վեր ցցում, աչքերը այս
ու այն կողմը ոլորում, վիզը սիրուն կոացնում և իւր ա-
մուր սմբակներով գետինը թակում: Զին պարանոցի վե-
րալ երկար բաշ ունի, որի մի փունջը՝ երկու մանրիկ ա-
կանջների միջով՝ ծածկում է նրա ճակատը. յետևի կողմը
ձին ունի հերարձակ ագի, որ տէրերը թամքելուց յետոց
կշկում՝ կարճացնում են, կամ սանրում ու երկար ձգուած
թողնում:

Զիու բերանը սանձ են գցում, մէջքին սիրուն թամբ
են դնում՝ փորքաշը կապում, կրծկալը պնդում, երկու կող-
մից ասպանդակներ կապում, յետոյ հեծնում ու քշում, ուր
որ սիրտներն է ուզում:

Զիու սմբակները պայտում են, որ ոտները չ'վնասուին:
Զին արագ և գեղեցիկ գնացք ունի. նա ուժեղ կենդանինե-
րից մինն է: Երբ աշխոյժ երիվարը չափ է ընկնում, գետի-
նը ոտների տակը կ'ասես թէ տատանվում է:

24. ՏԽՈՒԻ ԶԻ.

Ի՞նչ ես խընջում, իմ ձի եռանդուն,
Ինչիք ես ալդպէս գլուխդ կախել.

Ինչիք, ինձ ասա, բաշըդ չես շարժում,
Չես կոծում բերնիդ ոսկեփալ սանձեր:

Մըթէ ես քեզ չեմ՝ պատւում ու քորում,
Եւ կամ քեզ գարի առաս չեմ տալի.

Մըթէ սարքըդ չէ սիրուն, շողջողուն,
Կապդ ու փորքաշը չեն աբրեշումի.

Երկզոյգ պայտերըդ չեն արծաթաջրած,
Ասպանդակներըդ ոսկով չեն պատած:

Տիուր ձին ինձի այս պատասխանեց.
«Ես նրա համար եմ այսչափ տրտում,
Որ որոտմունքի ձայներ եմ լսում.
Ահա փողերի թինդ ու դղբրդիւն,
Սըրերի ճայթունն աշխարհք է լցնում:

«Ես խրխնջում եմ մորմոքիչ ձայնով,
Պատճառ՝ զգում եմ, որ հովիտներով
Երկար չեմ վազիլ. պատուվ չեմ ապրիլ:
Իմ փայլուն սարքով էլ չեմ պճնուիլ:

«Թշնամին անգութ—ես այս զգում եմ—
Իմ ողջ սարքերըս պիտի կողոպտէ,
Եւ այս արծաթեալ երկզոյգ պայտերս
Թեթև ոտներիցս նա պիտի պոկէ»:

25. Պ Ա Ց Տ.

Մի հարուստ գիւղացի որդու հետ քաղաք էր գնում:
«Մտիկ տուր, կարապետ, ասաց հայրը, ահա ճանապարհի մօտ ընկած է մի պայտ, վերցրու նրան»:
— Է՛հ, հայրիկ, արժէ կունալ այդ չնչին բանի համար,
պատասխանեց կարապետը:

«Հայրը ոչինչ չ'ասաց, ինքը վերցրեց պայտը և դըրեց պարկումը: Ճանապարհին նա պայտը միքանի կոպէկով բեց պարկումը: Ճանապարհին նա պայտը միքանի կոպէկով բեց պարկումը: Ճանապարհին նա պայտը միքանի կոպէկով բեց պարկումը: Նրանք առաջ գնացին: Տախտ տաք էր. արեգակը սաստիկ ալրում էր, և շըջակալում շըջակալում ոչ աղբիւր կար և ոչ ծառեր: Կարապետը տանջում էր ծառաւութիւնից և հազիւ էր կարողանում գնալ:

Հօր յետևից: Հայրը կամաց ցած գցեց մի հատ բալ: Կարապետն իսկոյն վեր թոցրեց, կերաւ. սա մի փոքր զովացրեց նրան: Միքանի քայլ առաջ գնալով, հայրը վայր գըցեց մի ուրիշը, յետոյ երրորդը, չորրորդը . . . մինչև վերջանալը, իսկ կարապետը շարունակ հաւաքում էր նրանց և ուտում: Երբ նա վերջին հատիկը վեր առաւ, հայրը յետ նայեց և ծիծաղելով ասաց. «Տեսնում ես, որդի, եթէ դու մի անգամ կունալիր պայտի համար, այսքան անգամ չէիր կունալ բալերի համար: Այս քեզ խրատ, որ միւս անգամ չ'ծուլանաս:



26. ԽՈԶԸ ԿԱՂՆԻ ԾԱՌԻ ՏԱԿ.

Խոզը հաստարմատ կաղնու տակ կանգնած,
Կերաւ կաղինը գլուխը կախած.
Մինչև կոկորդը կերաւ, լցուեցաւ,
Ապա կաղնու տակ հանդարտ քնեցաւ:

Յետոյ զարթելով բացաւ աչքերը,
Եւ բութ կնճիթով սկսաւ փորել
Այն կաղնի ծառի հաստ արմատները,
Որից այդ ժամին սնունդ էր առել:

«Զէ որ այդ բանը ծառին վնաս է.
Նրան վերևից ագռաւը կ'ասէ.
Եթէ ալդպիսով արմատը բանաս,
Նա կըչորանայ, այս լաւ իմանաս»:

— Իսկ ինձ ի՞նչ վնաս, թէ կը չորանալ,
Յածից ասում էր նրան խոզն ագահ.


Ես դորա վերալ իսկի չեմ ցաւում,
Կաղինն է իմս, նա է գերացնում:

«Ապերախտ, ասաց բարձրից ծառը,

Ի՞նչից են թափվում այդ կաղինները,

Դէժ կարենայիր մի վերև նայել,


Եւ կոյր աչքովը այդ բանն ստուգել»:



27. ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴՍ ՄԱՆԳԱԼԻՍ ԵՐԿՐԻ ՎԵՐԱՅ.

Մարդս թէւ շատ կամաց չէ մանգալիս, միայն նա իւր երկու ոտների յուտով շատ հեռու չէր կարող գնալ։ Բայց

զուր տեղը չէ Աստուած մարդուն խելք տուել։ Մարդը տեսաւ, որ ձին իւր չորս ոտով իրանից արագ է ընթանում, տեսաւ և կարողացաւ նրա մէջքին նստել. թամբ հնարեց, բերանը սանձ գցեց և իւր կամքին սկսեց նրան վարել։ Այս բաւական չէ. յետոյ մտածեց անիւալոր կառքեր և կռներաւոր սահակներ շինել. այնուհետև նա հեշտութեամբ անցնում է օրական հարիւր վերստ և ինքն ամենեին չէ յոգնում։ Նա ձիով հերկում է հողը և բեռներ է կրում։




Բայց միայն ձիու վերայ չ' իշխեց մարդս։ Նա իրան հնազանգեցրեց հաստապարանոց եղանը, ուժեղ գոմշին, երկար ոտնանի սապատաւոր ուղտին և թեթևագնաց եղնիկին։ Այս բաւական չէ. նա հեծաւ ահագին փղի մէջքը և ճանճի նման նստելով՝ սկսեց մուրճով ծեծել նրա գլուխն ու քշել, ուր որ կամենում է։

Մարդը նկատեց, որ ուղիղ ճանապարհով անիւներն աւելի հեշտութեամբ են զլորվում, սկսեց շինել մեծամեծ այց ճանապարհներ և խճուշիներ ձգեց։

28. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ԶԻԵՐԻ.

Մարդը կամաց համարեց ձիով և սալլակով ճանապարհ գնալը. նա սկսեց մտածել, ուրիշ ճար գտնել և հնարեց եր-

Հայուազին: Սարերը քանդեց, դաշտերը հաւասարեց, կամուրջներ ձգեց և սլաքի նման ուղիղ ճանապարհ շինեց, այնպէս որ կարծես մի կտոր իտու էր փռած: Այս իտունի վերայ նա ձգում է երկաթէ շատիղներ—բէշնէր, իսկ ըելսի վերալ սարքում է երկաթէ մեքենալ, որի մէջ կայ հնոց, կաթսայ և ծխահան, ինչպէս հեշտաեռը: Հնոցի մէջ նա փայտ կամ ածուխ է ածում, նրանով ջուրը եռ է գալիս և շոգիների




զօրութեամբ մեքենան գլորվում է առանց ձիու, բայց այնպէս շուտ-շուտ, որ մարդ ոչ մի ձիով չէ կարող նրա յետեւից հասնել. մի ժամումը նա անցնում 50 վերստ, մի օրումը 1000 վերստ: Շոգեմեքենան գլորվում է երկաթուղու վերայով, ճշում է, ծրագում, երբէք չէ յոգնում, միայն իշխաններում փայտ և ջուր է վեր առնում: Նա իւր յետեւից քաշ է տալիս շատ շոգեկառքեր. դրանցից մէկ քանիսի մէջ նստած են հարիւրաւոր մարդիկ և լուսամուտներից նայում են, իսկ միւսներում այնքան ասլրանք է դարսած, որ մարդ զարմանում է:

29. Ի՞՞ՆՉՊԻՍ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒՄ ԶՐԻ ՎԵՐԱՅ.

Լողալում մարդս շատ էլ հմուտ չէ. ինչքան որ սովորի, խեցգետինի պէս չէ կարող լողալ, ուր մնաց թէ ձկան

պէս: « Աս լաւ բան չէ », մտածեց մարդը. փայտից նաւակ շինեց, թիակը վեր առաւ և ջուրը մտաւ ու սկսեց առաջ գնալ:

Նաւով սա էլ զղուեցըց մարդուն. « Ի՞նչ բան է, թիավարում ես, թիավարում, բայց էլի շատ հեռու չես գնում »: Ի՞նչ պէտք է արած: Մարդն սկսեց մտածել. նա տեսաւ որ ծովի երեսին համարեա շարունակ քամի է փչում, բայց զուր է կորչում: « Ի՞նչի զուր կորչի, ճանապարհներում սաստիկ թող անէ, ծովի վերայ ալիքներ բարձրացնէ, երկնքից




էլ ամպեր հալածէ. արի ստիպեմ, որ ինձ ծառալիչ»: Եւ մարդը վեր առաւ կտաւը, առագաստ շինեց, քամին էլ ուռցնելով նրան՝ առաջ քշեց թէ փոքրիկ և թէ մեծամեծ նաւերը: Մարդը քամուն էլ լծեց. բայց ոչ մտրակ կար, որ նրան քըշէր, ոչ սանձ կար ձեռքում, որ կանգնեցնէր, ոչ կապեր ունէր, որ կառավարէր:

30. ՔԱՄԻՆ ՈՒ ՆԱԽԵՐԸ.

Ծովի երեսին հանդարտիկ քամին
ծեմում է ազատ՝ ծիծաղը դէմքին.
Փոքը ու մեծ նաւեր՝ առագաստ բացած,
նորա ժպիտին նայում են լառած:

Քամին հնչում է յաջողակ ու մեղմ,
նոքա խաղում են. ճեմում քաղցրադէմ.
Կանգնում է քամին, գըժվում, բորբոքվում,
Տանջվում են նաւերն, ողբում ու սըդում:



31. ԶՐԻ ԵԲԵՍԻՆ ԱՆԻՒՆԵՐՈՎ.

Լաւ կըլինէր առագաստաւոր նաւով գնալ, եթէ քա-
մին մեզ լսէր, բայց բանն այն է, որ դու կամենում ես դէ-
պի հարաւ գնալ, իսկ նա դէպի հիւսիս է տանում. դու
կամենում ես այսօր գնալ, իսկ նա ասում է՝ սպասիր վա-
ղը, այսօր ես կամենում եմ քնել. դու կամենում ես ծանր
գնալ, իսկ նա քո նաւը՝ ինչպէս մի տաշեղ, այս ու այն
կողմն է գցում, տակն ու վերայ է անում:

«Ո՛չ, այս լաւ բան չէ», մտածեց մարդը. «Չոգին թէ
և քամաւց աւելի ծանր է քշում, բայց հնազանդ է լինում»:
Եւ մարդը նաւերի տակն անիւներ գրեց, շոգին էլ նրանց
շարժեց և նաւերն սկսեցին ջրի վերայ գնալ այնպէս, ինչ-

պէս որ ցամաքի վերայ: Արա համար մարդը նաւի մէջ հնոց
է սարքում, նրան վառում է, ջուրը կաթսալի մէջ եռա-
ցնում, ծուխը խողովակներով երկինքն ուղարկում, իսկ շո-
գիով անիւները շարժում և առաջ են տանում նաւը, ուր
որ ինքն ուղում է:

32. ԶՈՐՄԱՆՈԼԻ ՄՇԱԿ.

Ինքն է անշունչ, չ'ունի հոգի,
Բայց գործերն են ազգի-ազգի:


Անիւները մեծ ու փոքրիկ,
Լիսեռները լայն ու նեղլիկ.
Կաշուէ գոտիկ մէջքին կապած,
Հուր ու դժոխք իւր մէջն առած.
Խմած ջուրը տակառներով,
Արտաշընչումն ամպ է ու ծով:

Մոընչում է վիշապի պէս,
Ծըվկում, ճըչում, մըրիկ կ'ասես.
Փուընչոցը այնպէս ուժին՝
Հազար գոմէշ ունի միջին:

Ի՞նչեր ասես նա չէ անում.
Ցորեն կալսում, կըտաւ գոզծում,
Բուրդ ու բամբակ մաքրում, մանում,
Վուշը գըզում, հինած անում.
Անթիւ ու բիւր մաքրուքներին,
Երկար ու լայն մեծ տորքերին,
Արագ-արագ գործի դնում:

Գերաններից մանրիկ մեխեր,
Բազմատեսակ տախտակ քաշում.
Մետալներից սիրուն փողեր,
Եւ երկաթից գործիք ձուլում.
Խարծը ապակիք, պողպատիկներ
Խաղ ու պարով տաշում, յըղկում.
Կ'ասես նրա սուր կըտրիչին
Չեն դիմանալ՝ ինչ էլ դիպչին:
Այս ամէնը նա գործում է անխոռվ,
Յոգնել չունի, միշտ շարժվում է անվրդով:

33. ՄԱՐԴԻԿ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԹՈՉՈՒՄ ՕԴԻ ՄԷԶ.



Մարդու համար հեշտացաւ ճանապարհորդել թէ ծովի և թէ ցամաքի վերայ. յետոյ նա սկսեց նախանձիլ երկընքի թռչուններին: Բայց Աստուած մարդուն թեեր չէր տուել, ուրիշից փոխ առնել էլ չէր կարելի. Ինչ անէր, Շատ ցանկանում էր օդի մէջ թռչիլ, աշխարհին բարձրից նալիլ. Էլ հարկաւոր չէր սարեր կտրատել, ճանապարհ շինել. չորս կողմդ լայն ճանապարհ է, Մարդն սկսում է սովորել և մտածել: Մտածում է, մտածում, և վերջապէս մի բան է հնարում — օդաղարին: Փուչիկի նման մի մեծ դատարկ գունտ է շինում, նրա տակից մի նաւակ կապում, նրանում նստում ու վեր բարձրանում: Նրա ոտի տակն են մնում ահազին անտառներ, սարեր ու ձորեր, սրաթե արծիւներ, անձրեստ ամպեր: Բայց ափսոս, որ մի բան շատ է խանգարում՝ նրան, անսանձ քամին այստեղ էլ իւր չարութիւնը լայտնում է. նա օդի մէջ աւելի է նեղացնում

մարդուն, քան թէ ծովումը. քշում տանում է նրան, ուր որ կամենում է, կարծես մարդուն բանի տեղ չէ դնում և, մինչեւ ալսօր, մարդը գեռ ևս չէ կարողանում օդի մէջ կառավարուիլ քամու հետ: Բայց հաւանական է, որ նա դրան էլ մի ճար գտնէ ժամանակով:

31. ՀՐԵՂԵՆ ԶԻ.

Ա.

Մի ծեր մարդ երեք որդի ունէր՝ երկուսը խելօք, իսկ երրորդը լիմար և կեղտոտ: Գիշեր, ցերեկ լիմարը տանը վայր ընկած՝ ոչինչ գործի չէր գնում:

Այս մարդը մի օրավար ցորեն էր ցանել. ցորենը դուրս էր եկել, մեծացել և գեղեցիկ հասկեր բռնել. միայն գիշերները մէկը գալիս էր ու տրորում արտը: Այս բանին մի ճար անելու համար, ծերը իւր որդոցն ասաց. «Սիրելի որդիք, գիշերները հիշերով գնացէք, արտը պահպանեցէք և աշխատեցէք գողին բռնել»:

Առաջին գիշերը մեծ որդին գնաց պահպանութիւն անելու, բայց կէս գիշերին քունը տարաւ ու քնեց: Առաւօտեան յետ դարձաւ տուն և ասաց. «Ամբողջ գիշեր չքնեցի, սառայ, փայտ դարձայ, բայց գող չտեսայ»: Միւս գիշերը երկրորդը գնաց, ողջ գիշերը քնեց և առաւօտեան միւնոյն լուրը բերեց:

Երրորդ գիշերը հիմարին հասաւ: Նա մէկ պարան վեր առաւ և գնաց, արտի մօտ նստեց, գողին սպասեց: Կէս գիշերին մօտեցած՝ նրա քունը տարաւ: Ցիմարը վեր առաւ դանակը, մատը մի փոքը կտրեց, մէջը աղ ածեց, մըմնջացրեց և այսպիսով քունը փախցրեց: Կէս գիշերին, մէկ

էլ տեսնես, աշխարհ շարժուեցաւ, քամին վերկացաւ և երկընքիցը հրեղէն թևով մի ձի ցած իջաւ, արտի մէջ մտաւ. քթածակերից ամպ էր բարձրանում, աչքերում, կարծես, կայծակ էր փայլում: Եւ ձին սկսեց ուտել ցորենը՝ ոչ այնքան ուտել, ինչքան կոխոտել:

Փորսով տալով մեր յիմարը կամաց-կամաց մօտեցաւ ձիուն և յանկարծ թոկը նրա պարանոցը զցեց, բռնեց: Ձին ամենայն գօրութեամբ ձգձգեց, յետի ոտների վերալ ծառս եղաւ, բայց մեր յիմարի ձեռքից չ'ազատուեցաւ: Ապա կանդնեցաւ ու սկսեց աղաչել. «Յովհաննէս, բարեկամ, ինձ արձակիր, ես դրա փոխարէն մեծ ծառայութիւն կ'անեմ քեզ»:
«Շատ լաւ, բայց ես քեզ յետոյ ինչպէս գտնեմ», առաց Յովհաննէսը:

— «Երբոր կամենաս ինձ կանչել, դուրս կըգաս դաշտը, երեք անգամ կըշվացնես և կըկանչես. «Հրեղէն ձի, հրեղէն ձի, շուտով ինձ հասիր». Ես այն ըոպէին քո առաջը կըլինիմ: Յովհաննէսն արձակեց ձիուն և պատուիրեց, որ միւս անգամ արտը չ'տրորէ:

Յիմարը յետ դարձաւ տուն: «Ի՞նչ տեսար, ի՞նչ շինեցիր», հարցըին նրան եղբայրները: Յովհաննէսը պատասխանեց. «Ես մի հրեղէն ձի բռնեցի. Նա ինձ խոստացաւ, որ էլ մեր արտը չի մտնիլ, ես էլ նրան արձակեցի»: Մնացած բաները նա չ'պատմեց: Շատ ծիծաղեցան եղբայրները խեղճի վերալ. միայն ճշմարիտ որ այն օրից յետոյ ոչ ոք արտին վնաս չէր տալիս:

Բ.

Այս անցքից մի օր յետոյ թագաւորից ամէն գիւղեր ու քաղաքներ մունետիկներ ուղարկուեցան, որոնք բարձր ձայնով կանչում էին և ասում. «Ո՛վ պարոններ, քաղաքացի-

ներ, ազնուականներ և գիւղացիներ, մեծ թագաւորը տօն է կատարում և ձեզ ամենքիդ հրաւիրում է. երեքօր պէտք է ուրախութիւն լինի: Լաւ ձիաններդ վեր առէք. թագաւորի միակ և արեգակից գեղեցիկ աղջիկը բարձր բուրգի պատըշգամբում նստած կըլինի. ով որ իւր ձիով կարողացաւ թրուչել, թագաւորի աղջկան հասնել ու նրա մատից մատանին հանել՝ թագաւորը նրան իւր աղջիկը կնութեան կըտալ»:

Յովհաննէսի եղբայրներն էլ գնացին այս հանդէսը. բայց ոչ թէ իրանք թռչելու, այլ ուրիշներին նայելու: Յովհաննէսը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն: «Դու ինչք համար ես գալիս, յիմար,—ասացին եղբայրները,—մարդկանց վախեցնելու, ի՞նչ է. տանը վէր ընկիր»:

Եղբայրները ձի նստեցան, գնացին: Յովհաննէսն էլ նրանց յետելից ծածուկ դուրս գնաց դաշտը և իւր հրեղէն ձիուն կանչեց: Որտեղից որ էր՝ ձին իսկոյն վագեց, Յովհաննէսի առաջին կանգնեց: Յովհաննէսը ձիու գլխովը թըռաւ, որից յետոյ կերպարանքն էլ փոխուեցաւ և մի այնպիսի քաջ տղամարդ դարձաւ, որ տեսնողն ամենեին չէր ճանաչիլ, թէ առաջուայ կեղտոտ Յովհաննէսն է: Յետոյ նա հեծաւ ձին ու քշեց դէպի հանդէս: Դնաց տեսաւ, որ թագաւորի տան առաջ, ընդարձակ հրապարակում, անհամար ժողովուրդ է հաւաքուած, իսկ բարձր աշտարակի պատշգամբի վերալ թագաւորի աղջիկն է նստած. ինքը գեղեցիկ լուսնի նման, մատանին փայլում էր արեգակի նման: Բայց ոչ ոք չէր համարձակում դէպի այնտեղ ցաթկել. ով էր իւր գլխից ձեռք վերառել: Մեր Յովհաննէսը խիեց իւր հրեղէն ձիու կողերին. ձին մոնչաց ու ցաթկեց. միայն երեք աստիճան մնաց, որ հասնէր թագաւորազն աղջկան: Ժողովուրդը լեզուն կծեց — զարմացաւ, իսկ Յովհաննէսը ձիու բերանը յետ դարձրեց ու փախաւ: Եղբայրներն ուշ ճանապարհ տուին: Յովհաննէսը մի լաւ մտրակեց նրանց և անյալտացաւ: Երբ-

որ հասաւ նոյն դաշտը, ձիու վերալից թռաւ, իւր առաջուայ կերպարանքն ստացաւ, ձին արձակեց ու տուն գնաց: Եղբայրները երեկոյին յետ դարձանքաղաքից և զարմացած պատմեցին իրանց հօրը, ինչոր տեսել էին: Իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակին ծիծաղում:

Պ.

Միւս օրը մեծ եղբայրները միւսների նման կրկին գնացին հանդէս և Յովհաննէսին հետները չ'տարան: Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը, ձիուն կանչեց, հեծաւ ու քշեց: Երբ որ թագաւորի պալատին մօտեցաւ, առաջուանից աւելի մարդ տեսաւ: Ամենքն էլ թագաւորազն աղջկանն էին մտիկ տալիս, բայց ոչ ոք չէր կամենում ցաթկել: Նա խըփեց իւր ձիու կողերին. ձին մունչաց ու ցաթկեց. միայն երկու աստիճան մնաց, որ աղջկան հասնէր: Ժողովուրդը լեզուն կծեց—զարմացաւ. իսկ Յովհաննէսը իւր ձիու բերանը յետ դարձեց ու փախաւ: Նրա եղբայրներն ուշ ճանապարհ տուին: Յովհաննէսը նրանց մի լաւ մտրակեց, ճանապարհ բացեց, գէպի դաշտ վազեց, իւր ձին արձակեց ու յետ դարձաւ տուն: Եղբայրներն եկան, իրանց հօրը պատմեցին բոլորը. իսկ Յովհաննէսը լսում էր և քթի տակը ծիծաղում: Երբորդ օրը եղբայրները նորից գնացին հանդէս: Յովհաննէսը դուրս եկաւ դաշտը և հրեղէն ձին հեծնելով՝ ինքն էլ գնաց. բայց երբոր աշտարակին մօտեցաւ, ձիուն այնպէս մտրակեց, որ նրա ազդրի կաշին պլոկուեցաւ: Կենդանին մունչաց, սաստիկ ուժով վեր ցաթկեց և պատշգամբին հասաւ: Յովհաննէսը շտապեց, թագուհու մատից թանկագին մատանին հանեց, ձին յետ դարձեց և սկսեց փախչիլ: Թամատանին հանեց, ձին յետ դարձեց և սկսեց փախչիլ: Թագուրը, թագուհին և բոլոր ժողովուրդն սկսեցին գոռալ՝ «Հայ, բոնեցէք, բոնեցէք» . . . Բայց ողտեղ . . .

Յովհաննէսը տուն եկաւ՝ ձեռքի մէկը փալասով փաթաթած: «Այդ բնչ է եղել ձեռքդ». հարցըին հարսները:

«Մորի քաղելիս քարից վայր ընկայ, ձեռքս պլոկուեցաւ, ոչինչ բան չ'կայ», ասաց Յովհաննէսն ու գնաց, կրակի առաջ ձգուեցաւ:

Եղբայրները յետ դարձան և մեծ զարմանքով պատմեցին իրանց հօրը բոլորը, ինչոր պատահել էր քաղաքում: Այդ միջոցին Յովհաննէսը կամեցաւ նայել մատանուն. փալասը բարձրացրեց թէ չէ, բոլոր խրճիթն սկսեց լուսաւորուիլ: «Յիմար, կրակի հետ չեն խաղալ, գոռացին եղբայրները. փոքր մնաց խրճիթը կրակ տալիր. ամենելին պահելու պտուղ չես. վաղուց պէտք էր քեզ տանից դուրս անել»:

Պ.

Երեք օրից յետոյ թագաւորից մունետիկներ են գալիս և ասում են, որ բոլոր մարդիկ, որոնք բնակվում են նրա թագաւորութեան մէջ, պարտաւոր են գնալ նրա մօտ խընջուք անելու, և ով որ թագաւորի այս հրամանը չի կատարիլ, նրա գլուխը կըկտըեն:

Ուրիշ հնարք չ'կար. ծերունին իւր բոլոր ընտանիքով գնաց հրաւերը: Եկան, ժողովուեցան, սիւոցի շուրջ շարուեցան, կերան, խմեցին, շատ ուրախացան: Խնջուքի վերջում թագաւորի աղջկը իւր ձեռքով սկսեց ամենքին մեղք բաժանել: Ամենից յետոյ Յովհաննէսին մօտեցաւ: Յովհաննէսն էլ այն օրումն էր, որ թշնամիդ չ'լինի՝ շորերը պատառուած, մրոտուած, մազերն աղտոտ, խճճուած. ձեռքի մէկն էլ մի կեղտոտ փալասով փաթաթած: իստակ զզուելի: «Տղայ, ձեռքդ ինչք է կատած, հարցըց թագաւորի աղջիկը. բայց արա տեսնեմ»:

Յովհաննէսը ձեռքի փաթաթանը յետ արեց և մատի

վերայ փայլեցաւ թագուհու մատանին: Աղջկէլը բռնեց
նրա ձեռքից, տարաւ իւր հօր մօտ և ասաց. «Հայրիկ, ահա
իմ փեսացուն»:

Սկսեցին Յովհաննէսին բաղանիք տանել, գլուխը սան-
րել, մազերն օծել, շորերը փոխել, և նա այնուհետև այն-
պիսի գեղեցիկ տղամարդ դարձաւ, որ իւր հայրն ու եղբայր-
ներն էլ չէին կարողանում ճանաչել: Թագաւորը եօթն օր,
եօթը գիշեր հարսանիք արեց, մեծ խնջուք տուեց և Յով-
հաննէսին փառքով պսակեց:



ՃՐՋԱԿ ՀԻՆԴԵՐՈՐԴ

1. ԶՈՐՍ ԵՂԲԱՐԻ.

Զորս եղբարք են՝ ամեն տարի
Երկրիս վերայ ման են գալի.
Զորսն էլ ջոկ-ջոկ ունին հասակ.
Պարգևներն են հազար տեսակ:

Առաջինն է սլատանի,
Բողբոջ տերեւ, սաղարթ ունի,
Պայծառ տերեւ, կանանչ արօտ,
Որոնց տղալքն են միշտ կարօտ:

Երկորդ եղբայրն երիտասարդ,
Տալիս է մեզ անձրև առատ.
Ծաղկունք ցանում է ամեն դի,
Ցոյս է տաշիս առատ հնձի:

Երրորդ եղբայրն այր չափահաս,
Մրգերով լի ունի մի թաս,
Բաժանում է տղոց իւր գանձ,
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ . . .

Չորրորդ եղբայրն է ծերունի,
Ցուրատ ու խաւար շալկած ունի,
Այգի, անտառ ամայացած՝
Դաշտ և արօտ ձիւնով լցուած:

2. Ի՞՞նՉ ԱՐԵՑ ԶՄԵՌԸ.

Ո՞ւր է շշնջիւնը	Սպիտակացրեց:
Քաղցր անտառի	Ալեոր պապը
Եւ կարկաչիւնը	Իւր թեկի տակը
Մերձակայ առուռի.	Ամենն շղթայեց:
Ո՞ւր են հոտաւէտ	Առուռն էլ սառեց:
Ծաղկունքը դաշտի:	Միայն ցուրտ քամին
Ծառը մերկացաւ,	Կատաղութիւնով
Էլ տերև չունի:	Անցորդի բերանն
Չիւնէ սփոռոցը	Լցնում է ձիւնով
Ամենն ծածկեց,	Երկինք էլ ծածկում
Դաշտեր ու ձորեր	Մուայլոտ մէգով:

3. ԱԼԵՒՈՐ ՊԱՊԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ.

Բարկացաւ ալեոր ձմեռը, սաստիկ բարկացաւ և մըտքումը դրեց, որ ոչ մի կենդանի շունչ չ'թողնէ երկրիս երեսին: Ամենից առաջ նա թուչուններին ձեռք առաւ. նըրանք ձանձրացը էին նրան իրանց երգերով ու ծըլվըլոցով:

Ձմեռը փչեց սառը քամին, ծառերի տերևները վէր ածեց և նրանց քշեց-ցանեց ճանապարհներում: Թուչունների տեղը կտրուեցաւ. նրանք խումբ խումբ հաւաքուեցան, միտք արին և սկսեցին կրկռուալով թուչել բարձր սարերի, խորխոր ձորերի և կապուտ ծովերի վերայով դէպի տաք երկիրները: Մնացին միքանի թուչուններ, բայց նրանք էլ մօտեցան մարդկանց բնակարաններին:

Ձմեռը տեսաւ, որ թուչունների լետեկց չէ կարող հասնիլ, գազաններին ձեռք առաւ: Չիւնով ծածկեց դաշտերն ու անտառները, ծառերը զարդարեց սառցալին կեղեով և

մինը միւսի լետեկց ուղարկեց իրան սառնամանիքները: Գալիս են սառնամանիքները մինը միւսից չար, գալիս են և թուչկոտալով անցնում են ծառից ծառ. ամեն բան ճայթում, ճրճըւացնում ու գազաններին վախեցնում: Բայց գազանները չ'վախեցան. նրանցից միքանիսը հաստ քուրքի մէջ էին կոլոլուած, միւսներն էլ մտան իրանց խոր որջերի մէջ. սկիւռը իւր խոռոչում ընկոյզ էր կրծում. արջը քարալի մէջ իւր թաթն էր ծծում. նապաստակը ցաթկելով էր տաքանում. իսկ ձիանները, կովերը, ոչխարնները շատ վաղուց տաք գոմերի մէջ պատրաստի խոտը ծամում էին և տաք ջուրը խըմում:

Աւելի սաստիկ բարկացաւ ձմեռը՝ դէպի ձկները դարձաւ: Սառնամանիքներ է ուղարկում մինը միւսից կատաղի: Նրանք գուարթութեամբ վազում, մուրճերով բարձր չըխկչըխացնում, առանց գործիքի գետերի և լճերի վերայ կամուրջներ են ձգում: Դետերը և լճերը սառան, բայց միայն երեսից. իսկ ձկները բոլորը ջրի խորքը գնացին. սառցալին ծածկոցի տակ նրանք աւելի տաք էին ապրում:

«Ե՞՞չ, սպասիր, ասում է ձմեռը. Հիմա ես իմ բոլոր բարկութիւնս մարդկանց վերայ կըթափեմ»: Այս սասաց և մինը միւսի լետեկց ուղարկեց միմեանցից աւելի սաստիկ սառնամանիքներ: Ցըտութիւնից լուսամուտների ապակիները սառուցով ծածկվում են. սառը քամին խփում բաղխում է պատերին, լուսամուտներին, այնպէս որ տեղ-տեղ գերանները ճաքում են: Բայց մարդիկ վառում են վառարանները, նրանց առաջ նստում, իրանց համար իւղալիթ են թխում և ուտում, ձմեռուայ վերայ էլ ծիծաղում: Եթէ մէկը կամենում է գնալ անտառը փայտ բերելու, հագնում է հաստ քուրք ու տաք թաթմաններ և երբ սկսում է կացինը բարձր ու ցածր անել-փայտ կտրել, դեռ քրտնում էլ է: ճանապարհին, կարծես ծիծաղելով ձմեռուայ վերայ, կարավաններ

ըլ շարվում են, ձիաններից գոլորշի է բարձրանում, իսկ ձիապանները ոտով են գնում, ձեռները տրորում են, ուսերը թափահարում և ցուրտը գովասանում:

Ամենից աւելի ամաչեց ձմեռը, երբ տեսաւ, որ մինչեւ անգամ փոքրիկ մանուկները նրանից չեն վախենում. նրանք սղղաններով սղղում են սառուցների վերայ, ձնագնտի են խաղում, ձիւնից սարեր են կանգնեցնում և նրանց վերայ ջուր ցանելով՝ դարձեալ ցրտին կանչում են. «Ե՛կ, Ե՛կ, օգնիր մեզ»: Ձմեռը կատաղութիւնից մէկի ականջիցն է քաշում, միւսի քթիցը բռնում. նրանք գունատվում ու կապտում են ցրտից, բայց էլի վեր են առնում ձիւնը, տրորում, թռչկոտում, խաղում և սրանով նրանց երեսը տաքանում ու կարմրում է, ինչպէս արիւն:

Ձմեռը տեսաւ, որ ոչ ոքի չէ կարողանում յաղթել, բարկութիւնից լաց եղաւ: Երկնքից նրա արտասուքը կաթկաթեց . . . Երեկի գարունը մօտեցել է:

4. Զ Ի Ւ Ն.

«Ե՛խ, ինչու-ինչու կըգայ պաղ ձիւնը.

Նորից ամիսներ պիտ մընամ տանը.

Տեսնելու չեմ ես կանաչ ծառ, արօտ,

Հոտոտ ծաղիկին պիտ մընամ կարօտ»:

— Ձիւնը որ կըգայ երկնքէն ի վար,

Իմացիր մեծ բախտ է մարդուս համար.

Վերմակի պէս տաք կըծածկէ գետին,

Որ բոյսի արմատն դիմանայ ցրտին:

Նա հողին կըտայ հիւթ, պարարտութիւն,

Դաշտին ու արտին մեծ առատութիւն.

Մի տըրտընջալ, մարդ, դու բնութենէն,

Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:

Մանկական յիշողութիւնից.

5. ՅՈՒՆՎԱՐԻ ՄԵԿԻՆ.


Երէկ երեկոյին մեր տանը շատ հիւրեր կալին. նրանք հաւաքուել էին, որ դիմաւորեն նոր տարուն: Ես մինչեւ տասներկու ժամն արթուն չ'մնացի և առանց շորերս հանելու՝ քնեցայ: Այսօր ես շատ վաղ զարթեցայ և գնացի իմ ծնողներիս նոր տարին շնորհաւորեցի: Համբուրելով նրանց ձեռքը, ես վաղեցի բարի հօրեղբօրս սենեակը, շնորհաւորեցի նոր տարին և ցանկացայ նրան բախտաւորութիւն և առողջութիւն: Հօրեղբայրս համբուրեց և տուեց ինձ մի գեղեցիկ պատկերազարդ գերք: Նա ասաց՝ եթէ միշտ լաւ կ'աշխատես, այսպիսի ընծաներ շատ կըստանաս ինձանից: Ես շընորհակալութեամբ համբուրեցի նրա ձեռքը: Ո՞րքան բարի է իմ հօրեղբայրս. նա իմ փոքր քողջս ու եղբօրս էլ չ'մոռացաւ ուրախացնել՝ Շուշանին ընծայեց մի գեղեցիկ տիկին, իսկ Գարեգնին մի փոքրիկ թմբուկ: Նա ուրախութիւնից այնքան խիեց թմբուկը, որ ձեռները թուլացան:

Այսօր ամէնքն էլ ուրախ են և շնորհաւորում են միմեանց նոր տարին, փոխադարձ բախտաւորութիւն ցանկանալով: Մայրս հագցըց մեզ նոր շորեր: Երեկոյին մենք գընալու ենք հօրաքրոջս տուն: Ես գիտեմ, որ այնտեղ կըխաղանք, կ'երգենք և շատ ուրախութիւններ կ'անենք:

6. ՅՈՒՆՎԱՐԻ ՀԻՆԳԻՆ.

Այսօր երեկոյին Քրիստոսի ծննդեան և մկրտութեան ճրագալոյցն է: Ես իմ ծնողացս հետ գնացի եկեղեցի, որ լիքն էր ժողովրդով: Եկեղեցին լուսաւորուած էր հազարա-

ւոր ճրագներով. տիրացուքը և սարկաւագները քաղցը ձայնով շարականներ և երգեր էին երգում. քահանան պատարագ էր մատուցանում. մի ուրիշը կարդում էր աւետարանը. իսկ բոլոր ժողովուրդը աղօթում էր:



Ես էլ աղօթում էի: Ես մտաբերում էի իմ վարժապետի պատմածը, թէ ինչպէս Փրկիչը ծնուեցաւ ոչխարների այրի մէջ, ինչպէս հրեշտակը աւետիս տուեց հովիւներին, ինչպէս այդ հովիւներն եկան երկրպագութիւն տուին նորածին Մանկանը: Երկի այն երկիրը, ուր ծնաւ Փրկիչը, մեր երկրից տաք էր, որ հովիւները կարողանում էին գիշերները դուրսը քնել: Իսկ մեզ մօտ ինչպէս ցոււրտ է այժմ: Ճըշմարիտ՝ յունվարը ամենացուրտ ամիսն է: Երկիրը սպիտակ սաւանով ծածկուել է: Ի՞նչքան լաւ կըլինի, եթէ վաղը գոնէ եղանակը մեղմ լինի:



7. ՅՈՒՆՎԱՐԻ ՎԵՑԻՆ.

Արդէն քանի օր է, որ գետի եզերքին Քրիստոսի մկըրտութեան համար տեղ է պատրաստած: Այսօր, կէսօրին, պատարագից յետով, բոլոր քահանայական դասը ժողովրդի հետ մայր եկեղեցուց դիմեց դէպի Յորդանան: Հանդէսը շատ փառաւոր էր:

Ճաշից յետով քահանան տիրացուի հետ եկաւ՝ մեր տունն օրհնեց: Նա կարդաց աւետարանից, թէ ինչպէս Յիսուսն եկաւ Յորդանան դետը մկրտուելու, ինչպէս ընդունեց նրան Յովհաննէս Մկրտիչը, ինչպէս բացուեցաւ երկինքը և Աստուծոյ Հոգին աղաւնակերպ իջաւ նրա վերայ, ինչպէս լըսուեցաւ երկնքից Հայր Աստուծոյ ձայնը:

Սիրտս տրորվում է, երբոր մտածում եմ, որ վաղը չէ՝

միւս օրը պիտի գնամ ուսումնարան. բայց իմ մալրն ասում է, որ եթէ միշտ ազատ ման գամ, տօներն էլ այսպէս ուրախալի չեն լինիլ: Պէտք է իմացած, արդեօք շատ ժամանակ կալ մինչև բարիկենդան:

8. ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԳԱՐՆԱՆ.

Չըմեռը դաշտում ծաղիկներ չկան.
Չիւն գալուց առաջ նոքա չըքացան.
Բայց ծաղիկների քնքուշ արմատներ,
Փափուկ ձիւնի տակ հանգիստ են առել:

Կըգայ գարուն ոստոստելով,
Սար ու դաշտին այցելելով.
Կոփւ կըտայ ձիւն ու սառին.
Վերջ կըդնի գիծ ձըմեռին:

Նոր բողբոջ կըտան խոտերն ու ծաղիկ,
Գարնանարերը կըբացուի հեղիկ.
Մանկունք ցնծալով դաշտը կըվազեն՝
«Օրհնեալ է գալդ, գարուն, քո», կ'ասեն:

9. ՊԱՌԻ Ա.Ա.ՋԻՆ ԵՐԿՈՒՇԱ.ԲԹԻՆ.

Բարիկենդաններին մենք շատ ուրախութիւններ արինք,
խաղացինք, իւղաբլիթ կերանք: Մենակ մենք չեինք ուրախանում: Ամենայն կողմից խնդութեան ձայներ էին լըս-վում... Ալսօր էլ մարդիկ մեծ շարժողութեան մէջ են, բայց յայտնի երեսում է, որ այդ շարժողութիւններն այն զուարթութիւնը չ'ունին, ինչոր երէկ. ամէնքն զգում են, որ այժմ պաս է: Մեղմ զանգահարութիւնն օրը երեք անգամ և փառաբանութիւնները եկեղեցիներում—ահա պասի

միակ զարդարանքը: Մարդիկ համեստութեամբ օրը երեք անգամ ժամ են գնում: Երէկ նրանք ուրախանում էին, ալաօր աղօթում և պատրաստվում են հաղորդուելու: Այժմ օրերն էլ փոխուել են: Օդի մէջ գարնան նշաններն երևում են: Միջօրէի արեգակը բաւականին տաքացնում է: Կտուրներից բիւրեղեան շիթեր են կախվում: Զընծաղիկը գեղնած խոտերի միջից իւր գլուխը բարձրացնում է: Ի՞նչքան ուրախալի է մտածել, որ Զատկին երկիրը կանաչ խոտով ծածկուած կըլինի: Մենք միայն վեց շաբաթ ենք կարգալու, եօթներորդ շաբաթն ազատ ենք:

10. ԳԱՐՈՒՆ.

Կարօտ ենք տեսքիդ, աննման գարուն,
Շուտ արի մեզի, ըեր ծաղիկ սիրուն.
Բեր պայծառ արե, ըեր մեզ տաք օրեր,
Ճըռվըռող թըրոչուն, ըեր կանաչ դաշտեր:

Բաց մեր դըռները, բաց մեր պատուհան,
Թող բացուին-ծաղկին վարդ, մեխակ, շուշան.
Փակուած սենեակից ելնենք, ազատուինք,
Կանաչ դաշտ երթանք, խաղանք, գըլորուինք:

11. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ.

Ծաղկազարդ կլորակի.

Ահա պասի վեց շաբաթն անցկացաւ: Երէկ մեզ ուսումնարանից արձակեցին: Երբոր տուն եկալ, հալրացրեց, թէ երէկ ինչ տօն էր: Ես ալդ չ'գիտէի, բայց ինձ հասկացրին, որ շաբաթ օրը Ղազարոսի լարութեան տօնն էր. իսկ այսօր Քրիստոսի հանգիստուր կերպով Երուսաղէմ մտնելու տօնն է. ես ալս գիտեմ:

Այսօր մեր տանըցիք բոլորը, բայցի մանուկները, շատ շուտ ժամ գնացին։ Երբ մայրս վերադարձաւ, ձեռքին ուռ ունէր։ Մենք դեռ անկողնի մէջ էինք։ Մայրս ուռով մեզ կամաց խփեց և ծիծաղելով ասաց. «Վեր կացէք, այսօր ով որ շուտ վեր կենալ, շնորհքով տղայ կըլինի»։ Մենք ամէնքս տեղներից վեր թռանք։ Մայրս համբուրեց ամէնիս և մի մի ուռ տուեց։

Տես, ի՞նչ գեղեցիկ է։ Ուռի վերալ բըդոտ կոկոններ—դառնուկներ կան. սա գարնան նշան է։ Երեխ շուտով ծառերի ծաղիկներն էլ կըբացուին։

12. Ա.Ի.Ս.Գ ՀԻՆԳՇԱԲԹԻ.

Այսօր ես խոստովանուեցայ։ Ես երկիւղով մօտեցալ քահանալին, չողեցալ նրա առաջ և խոստովանուեցալ իմ տըղայական պակասութիւններս։ Քահանան խրատեց ինձ, և երբ ես խոնարհաբար խոստացայ, որ կ'աշխատեմ միշտ ջանասէր, բարի և ճշմարտախօս լինել, նա ձեռքը դրեց գլխիս և Քրիստոսի անունով օրհնեց ինձ։

Պատարագն սկսուեցաւ, բայց վարագոյրը դեռ ծածկած ունէր սեղանը և քահանան կարգում էր այդ օրուան աղօթքը։ Եկեղեցին լիքն էր մարդկանցով. նրանք բոլորն աղօթում էին։ Ես էլ աղօթում էի. Ես աղօթում էի, որ Աստուած ինձ կարողութիւն տալ կատարելու իմ խոստումներս։ Ես գիտեմ, որ խոստում չ'կատարելը մեծ պակասութիւն է։ Քահանան վերջացրեց աղօթքը։ Յանկարծ վարագոյրը բացուեցաւ. սարկաւագները գեղեցիկ ձալնով երգել սկսեցին։ Սրբութիւնը վերաբերեցին ժողովրդի մէջ։ Հաղորդութեան ժամանակ սարկաւագը երգեց. «Երկիւղով և հագուառով առաջ եկէք և սրբութեամբ հաղորդուեցէք»։ Ես խոնարհութեամբ և երկիւղով մօտեցալ սեղանին և հաղորդուեցալ։

Այսօր ես ամբողջ օրը չեմ վազվզել, այլ նստած էի տատիս մօտ և աղօթք էի կարդում։

Աւագ ուրբաթ գիշեր մենք գնացինք սկին։ Քահանան կարգաց եկեղեցում, թէ ինչպէս էր աւանդում մեր Փրկիչը իւր աշակերտներին իւր վերջին պատուէրները, և թէ ինչպէս զգում էր, որ ինքն արդէն մատնուած է և պէտք է բոնուի. Իզուր չէր, որ ամէն մի աւետարանից լետոյ դըպիները ողբածայն երգում էին . . . Վերջին աւետարանը կարգացին, ուր մանրամասն գրուած էր, թէ հրէաներն ինչպէս չարչարեցին Քրիստոսին։


Այս գիշեր տասներկու գլուխ աւետարան կարգացին։ Ի հարկէ դժուար էր կանգնել այդքան երկար, բայց ես կանգնեցայ։

13. Ա.Ի.Ս.Գ ՈՒՐԲԱԹ ԵՐԵԿՈՅԻՆ.

Այսօր Քրիստոսի թաղման օրն է և մենք գնացինք եկեղեցի։ Ժամերգութիւնը գեռ սկսուել։ Ես սկսեցի պարտել եկեղեցու զուրջը։ Շատ պայծառ օր էր. արեգակը երեկոյեան վերջալուսի ճառագալթներով փայլեցնում էր եկեղեցիների գմբէթները։ Թռչուններն ուրախ-ուրախ թռչկոտում էին եկեղեցու կտուրի վերալ և երեկոյեան վերջալուսի տակ մեղմօրէն ծլվլացնում էին։ Չ'նայելով այս բոլորին, ես կարծես ախուր էի. այսօր մեր Փրկչի թաղման օրն է. Եկեղեցու մէջ դրած է Քրիստոսի դագաղը, որի չորս կողմը հանդարտ ալիվում են մոմերը և իրանց շուրջը կապտագոյն շառաւիլներ են արձակում. կարծես նրանք էլ արխուուր են։ Միայն ուրախալի է լսել, թէ ինչպէս բարի Յովսէփը սուրբ կտաւով պատեց մեր Փրկչի մարմինը և չթողեց նրան չարագործների ձեռքը։

Ժամերգութիւնից լետոյ մենք լետ դարձանք տուն։ Ճա-

նապարհին տեղ-տեղ գեռ ևս ձիւն էր երեում, բայց շատ տեղերում էլ արդէն հալուել էր: Հալուած տեղերը կանաչ նորափթիթ խոտով ծածկուել էին: Պարտէզներում էլ հոտաւէտ փոքրիկ մանուշակն արդէն բաց էր արել իւր կապոյտ աչերը: Ծառերի կոկոններն ուռել ու լցուել էին, իսկ



նշենիներն արդէն քանի օր է զարդարում են այգիներն իրանց սպիտակ ծաղիկներով: Ահա մերձակայ ձորում խոխոջում է ձիւնի ջրերից գոյացած առուակը: Դեղեցիկ արև, գործիր ջանասիրութեամբ. մի մոռանար, որ երկու օրից յետով Զատիկ է լինելու:

14. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՐԵԲ.

Սարերի ձիւնը գեռ չէ վերկացել,
Բայց դաշտ ու հովիտ փթթել են, բացուել.
Ձիւնի ջրերը ուրախ կարկաչով
Ցած են գլորվում հովիտի միջով:

Ցած են գլորվում հովիտի միջով,
Մանում են դաշտը ուրախ քրքիջով,
Եւ ամէն մարդի, ամէն մի բանի,
Ցանկալի համբաւ, աւետիս տալի:


«Ահա կենսաբեր գարունը եկաւ,
Նոր հոգի, նոր կեանք մեր երկրին տուաւ.
Դուք էլ, ով մանկունք, նոր եռանդ առեք,
Գարնան ծաղկի պէս ուսմամբ ուռճացէք:

15. ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ.

Զատիկ շաբաթ երեկոյեան եկեղեցում հանդիսով տօնեցին Սուրբ Յարութեան ճրագալուցը: Մենք երեկոյեան ժամից յետոյ դարձանք տուն և լուծեցինք պասներս—թաթախուեցանք: Եօթը շաբաթ պահելուց յետոյ՝ ի՞նչքան ուրախալի էր ձեռքիդ ունենալ կարմիր ձու և նըանով թաթախուիլ: Սեղանի վերայ դարսած էին զանազան տեսակ կերակրեղէններ, բացի մսեղէնից, որովհետեւ այս երեկոյ նաւակատիք էր: Հաց ուտելուց յետոյ ես շուտ քննեցայ, բայց խնդրեցի մօրս, որ ինձ էլ արթնացնէ առաւօտեան ժամին ներկայ գտնուելու:

Կէս գիշերին մայրեկեղեցու զանգակը որոտաց: Ես նըրա ձայնից ինքս զարթեցալ: Ժամի մէկն էր, երբ միւս եկեղեցիների զանգակներն էլ սկսեցին մեղմաբար զօղանջել: Մենք

գուրս եկանք տանից: Փողոցները շատ մութն էին, բայց եկեղեցին հազարաւոր ճրագներով փայլում էր: Եկեղեցում այնքան ժողովուրդ կար, որ մենք հազիւ տեղաւորուեցանք: Ժամերգութիւնն սկսուած էր. Ես անչափ ուրախացայ, երբ սարկաւագները երգեցին քաղցր ձախով. «Քրիստոս յարեաւ



՚ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»: Ահա իսկապէս ամենամեծ տօնը:

Պատարագը վերջանալուց յետոյ՝ մենք վերադաշնք

տուն: Արդէն լոյս էր: Ես շտապեցի համբուրել իմ հօրն ու մօր ձեռքը, կրկնելով ինձ շատ սիրելի խօսքը՝ «Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց»: Նրանք էլ ինձ համբուրեցին: Սպա ես մօտեցայ իմ փոքրիկ եղբօրս ու քրոջս և մենք քաղցրութեամբ համբուրեցինք իրար:

Միքանի ժամից յետոյ եկաւ քահանան տիրացուի հետ: Նրանք օրհնեցին մեր տունը և երգեցին Քրիստոսի հրաշափառ լարութիւնը:

Ես և եղբայրս գուրս եկանք, որ գնանք մեր բարեկամների Զատիկը շնորհաւորենք: Ա՛խ, ինչպէս գեղեցիկ առաւտ էր. փայլուն արելս սփռում էր իւր արծաթագոյն ճառագայթները: Մեր պարտիզի բոլոր նշենիները ծաղկել էին. մանուշակը խոտերի մէջ փոռուել էր ինչպէս մի կապտագոյն սփռոց և անուշահոտութեամբ լցնում էր աշխարհս: Ահա միւս կողմից ծիրանի ծառերն էլ իրանց կիսաբաց կոկոնների տակից համեստաբար ժպտում են: Ա՛խ, ինչքան պայծառ է օրը բոլոր ընութիւնը կարծես զարդարուած լինի: Կոռունկների երամներն ահա շղթայաձեւ ընթանում են՝ փառաբանելով գեղեցիկ գարունը. իսկ նրանցից ցած, երկրի վերալ, մանուկները միասին ժողովուած՝ ուրախ զուարթձուի են խաղում: Ահա մատաղ գառների փոքրիկ հօտերն էլ մայելով շրջում են փողոցներում: Ամեն մարդ աշխատում է գառն ունենալ իւր տանը: Սա Զատկի նշանն է: Հայրս գնեց մեզ համար մի գեղեցիկ գառը. Ես նրան շատ եմ սիրում և նորաբոյս կանաչ խոտով կերակրում եմ:

16 Զ Ա Տ Ի Կ.

Հողմը հնչեց ի հարաւէն,
Ազատուեցան դաշտ ձիւներէն.
Բերկրութիւն է ամէն տղոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Առուները խոխոջացին,
Ծառերն բողբոջ արձակեցին.
Օքը լի է ձայնիւ թռչնոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Տղալ, աղջիկ,—ուրախ, զուարթ
Փթթեցան գերթ մալիսի վարդ . . .
Ու, քէն չունի սիրտը մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Քրիստոս յարեաւ . . . կասկած չ'կալ,
Բնութիւնն համայն է մեզ վըկալ . . .
Բայց Երբ կ'ասէ լեզուն Հայոց.
«Ծոյլն էլ յարեաւ ի մեռելոց»:

17. ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒԻ.

Գաշտերումը ձիւնը հալուեց,
Կենդանարար հովը փչեց.
Սառնամանիք, հողմ ձըմեռուան,
Կարճ միջոցում անյատացան:

Բերկութիւն է անհոդ մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ալգիք, պարտէզք զարդարեցան,
Ծառերն ամէն կանաչեցան,
Ծիծեռները, թըռչուն ամէն
Ողջունեցին նորեկ գարնան:

Ծընծութիւն է հարուստ մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Բազմութիւնը մեծ ու փոքը
Ժողովուեցան եկեղեցին,
Հարսն ու աղջիկ զարդարուեցան
Որպէս ծաղկունք գարնալին:

Բերկութիւն է շատ, շատ մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Եկեղեցում վիզը ծըռած,
Հազուստները պատառոտած,
Քարի վերալ ոտարբիկ
Տեսէք, եղբարք, ով է կանգնած:

Սուր ու լաց է թշուառ մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Որդիերանցով շըրջապատուած,
Նա աղքատ է, սոված, քաղցած.
Նա տըկար է, անօգնական.
Մըխիթարենք, եղբարք, նըրան:

Տանջանք, մահ է թըրշուառ մարդոց.
«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

18. ՄԱՆԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ.

Մեռելոց.

Զատիկ երկուշաբթի ծնողքս ինձ, քրոջս և եղբօրս տարան հանգստարան: Այնտեղ, գերեզմանաքարերի տակ, հանգըստանում են մեր աղջականներից շատերը, այդտեղ է և իմ քոյլ եղիսաբէթը: Քահանան ներկայ էր: Հայրս օրհնել տուեց քրոջս գերեզմանը: Խնչքան խոտեր են կանաչել նրա փոք-

թիկ բնակարանի վերայ: Գերեզմանատունն էլ է նորոգուել: Ամեն կողմում ծաղկում են գեղեցիկ ծաղիկներ: Շատ գեղազանների վանդակապատերի մէջ իրանց ազգականները զանազան ծառեր են տնկել: Գարունը չէ մոռացել հանգստարանն էլ գեղեցկացնել. ծառերը զարդարուած են կանաչ տերևով. թռչունները նրանց վերայ թռչկոտում են և ծըլվը լում. մինը ծղօտ է տանում, միւսը փետուրներ. Երեսում է, որ նրանք սկսել են իրանց համար բուներ շինել: Հանգըստարանի միւս կողմում գիւղացիք արդէն հերկում են իրանց վարելահողերը:

19. ԵՐԿՐՈՒԹՈՒԾԻ ԵՐԳԻ.

Իմ զոյգ ընկերներ, թանկագին եղներ,
Ահա և գարնան բացուեցան օրեր.
Աշնան սկզբից մեր խոփ ու ձեիչ,
Արօրի շղթան, մաճկալի սրբիչ
Վաղուց են ընկած,
Ժանդի կուր դարձած:

Բացուեց արշալոյս, ծաղեցաւ արե,
Աշխարհին տուաւ ցանկալի բարե.
Ամէն շնչաւորք նոր հոգի առան.
Մենք էլ սկսենք մեր գործ—վարուցան.
Քաշենք արօրը,
Բացվում է օրը:

Չմեռը ամբողջ ես ձեղ հոգացի,
Խոտ ու դարմանով հանգիստ պահեցի.
Իմ ամենօրեայ գործը անխափան
Չեր շուրջ պտտելն էր ծառալի նման:
Այժմ եկ կըկին
Գործենք միասին:

Արտը պիտ՝ հերկենք, սերմ պիտի ձգենք,
Հաց-հատիկներին օրրան պատրաստենք.

Խոնաւ մայր-հողը նրանց կըգրկէ,
Իւր առատ հիւթից սնունդ կըճամբէ:
Շնուտ, եղներ, հօտաղ,
Զեր ջանին մատաղ:

Կըբուսնին սերմերն, կըտան ընձիւղներ,
Նրանց կատարին քստալի հասկեր
Կ'ուռչին, կըփքուին տաօք պըտուզով,
Կըշնձեմ նրանց իմ կեռ մանգաղով:
Դէհ, իմ քաջ եղներ,
Վարենք շատ արտեր:

Օրը լաւ բացուի՝ ես ձեզ կ'արձակեմ,
Առատ ջուր կըտամ, խոտ կ'ուտացնեմ.
Աղօթքըս կանեմ, մաճը ձեռք կ'առնեմ,
Փառք տալով Տիրոջ, արտս կըվարեմ.

«Հայր մեր երկնաւոր,
Վաստակս օրհնիր,
Եղներիս ոլժ տուր,
Գործըս յաջողիր»:

20. ՄԱՅԻՍՈՒՄԾ ԱՌԱԽՈՏ.

Ի՞նչպէս թարմ և գեղեցիկ է մայիսուայ առաւօտը:
Դաշտերը ծածկուած են կանաչ խոտերով ու ծաղիկներով:
Կարծես ընութիւնն օրէցօր աւելի քաղցրանում է և գարնանալին մէգի միջից ժամանում է ամառը:

Երբ ես գնում եմ անտառը, ալնտեղ թփերի ստուերների տակ, ծաղկապատ հովիտներում, փուռած եմ տեսնում մայիսուալ որդին՝ սպիտակ և անուշահոտ շուշանը: Ամե-

նայն տեղ, ուր որ նայում ես, աչքիդ առաջ կանաչ գորգեր է սփռուած, որոնց վերալ առաւօտեան ցողը ցանել է իւր մարգարտեալ կաթիլները։ Արեի առաջին ճառագալիթներն ընկնելով ծառերի տերեների և ցողապատ մարգերի վերալ, փայլեցնում են նրանց ինչպէս ադամանդեայ ակունքներ։ Թռչունները ծըլվըլում են չորս կողմդ. իսկ ահա այն կողմից, վարդի կիսաբաց կոկոններով ծածկած թփերի մէջ, լսվում է մի զմայլելի ձայն։ դա սոխակն է։ Առաւօտեան արշալուսին նա կանգնած է բացուող կոկոների վերալ, աչքերը կիսախուփ, կարծես ինքն իւր երգից յափշտակուած, երգում, շըվշացնում և հազար տեսակ խազացնում է իւր քաղցր ձայնը։ Նա երգում է, սպասելով վարդի սիրուն կոկոնների բացուելուն։

21. Ա.Մ. Ա. Ռ. Ը.

Ստեղծողն իւր առատ ձեռքը բաց արեց,
Արտեր, անտառներ հարստացրեց.
Ծառեր ու թփեր զարդով ծածկուեցան.
Ամենայն կողմում ծաղկունք փայլեցան։

Ազատ շրջում են հօտերը դաշտում.
Ազատ լողում են ձկները ծովում.
Ալգում պտուղներն զեղնիլ սկսան.
Արտերում հարուստ ցանքերը հասան։

Դաշտում մանգաղներն սկսան փայլել,
Եւ անտառներում թռչնակներն երգել.
«Ի՞նչքան սիրուն է այս ստուերներում,
Ե՛կ, հանգստացիր, մանկիկ, հովերում.
Ականջ դիր, ինչպէս մենք երգ ենք երգում,
Առատ ամառուան, փառք վերընծալում»։

— «Ոչ թէ ամառուան, ասաց, փառք տուէք.

Ով ամառ տուեց՝ նրան օրհնեցէք»։

22. Ա.Մ. Ա. Յ. Յ. Օ. Տ. Ի. Օ. Տ.

Ամառուան պարզ գիշերն անցաւ. առաւօտեան հովը տարածուեցաւ օդի մէջ. մութ մէգերը բարձրացան ձորերից. աստղերը մինը միւսի լետեկից շիջան. լուսաստղն էլ թառամեցաւ և շիջանելուն մօտ էր. նա երկնակամարից նկատում էր, որ ամպերը վազում են գէպի արևելք և հանդիպելով արեգակին՝ ոսկիափայլ և արծաթագոյն շերտերով գարդարվում են։

Ահա և նա երեեցաւ։ Ուրախ զուարթ բարձրանում է երկնքում ոսկէճանանչ արևը։ Նա իւր փայլուն ճառագայթներով արթնացնում է գետակները, դաշտերը, հովիտներն ու անտառները։ Արթնացնում է ծառերի վերալ թառ եղած թռչուններին և անտառի գազաններին, որպէս և բգեզին, որ մի փոքր հանգստացել էր իւր մամուապատ անկողնում։ Ոսկիանման արևը կարճ խօսքերով ասում է ամէնին։ «Հանգըստացաք, բաւական է, ալժմ ժամանակ է գործ շինելու»։

Գիշերն ամէնքը հանգստացել են ցերեկուայ գործերից։ Դաշտերն ու արտերը զովարար ցողով նորոգուած՝ նոր ոյժ են ստացել և ոսկէնման փայլում են առաւօտեան ճառագայթների տակ։ Ծառերի տերեները, մարգերի խոտերը, արտերի հասկերը—բոլորը նորոգուեցան, զուարթացան։ Թըռչուններն արթնացան և սկսեցին ուրախ երգելով իրանց նախկին գործը ձեռք առնել։ Ամառուայ գիշերը կարճ է, բայց կենդանարար է։

Մանուկները զարթեցան և լետ գցեցին վերմակները. նրանց մատաղ անդամները բաւական հանգստացել էին, ոտները կամենում էին վազել, ձեռները գործ էին խնդրում,

գանդրապատ գլխներում նոր-նոր մտքեր էին ծնվում: Աղջըկերքը հազնուեցան, սառը ջրով երեսները լուացան, Աստուծուն աղօթք արին և գնացին ուսումնարան: Ահա վազում են նրանք, ծըլվըլում են ինչպէս թռչունները դաշտերում և ուրախ զուարթ սկսում են գործել: Արեգակը երկընքից նայում է աշխատասէր մանուկներին և ասում է քնքշաբար. «Թող Աստուած օգնէ ձեզ»:

23. Զ Ո Ւ Կ Ը.

Տաք է . . . իսկ գետումը, եզերքի ստուերների տակ, առոյդ ձկները խմբովին շարժվում են. նորանոր առուական-ներում նրանք համարձակ կերակուր են որոնում, կամ ազատօրէն զբունում են: Ահա, նայեցէք, ինչպէս ձուկը ուրախ խաղում է ջրի յատակում:

«Չուկը, այ ձուկը, խաղա որքան կամենում ես, միայն զգուշացիր պողպատեայ կեռերից. աչա մանուկը կարթը ձեռին նստած է ուռենու տակ և զգուշութեամբ նայում է քո հետքից»:

Չուկը չէ տեսնում մահաբեր կարթը. նրա ծալրին հագցրած է պարարտ որդը: Չուկն ադահաբար յարձակուեցաւ նրա վերայ և իւր փոքրիկ բերանի մէջ առնելով՝ ցած գընաց մինչեւ ջրի յատակը: Մանուկն արագապէս քաշեց մազէքուղը... Խեղճ ձուկը, կեանքդ կարձացաւ:

24. Ո Ւ Ռ Ե Ն Ի.

Ուռենի կանաչ, ուռենի սիրուն,
ինչի՞ դու այսօր ուրախ չես ժպտում.
Մթթէ քեզ սաստիկ արեն է այրում,
Արեւն է այրում, անձրեւը ծեծում,
Արմատիդ մօտից սառ ջուր չէ վազում:

Հայոց աշխարհից իշխաններ անցան,
Ռւռին կտրեցին—կեանքից զրկեցին.
Նրան տաշեցին, տաշտըշորեցին
Եւ իրանց համար թիեր շինեցին,
Նաւակ կազմեցին, մէջը նստեցան,
Մէջը նստեցան ու տուն յետ գարձան
Եւ ինձ, փոքրիկիս, հետները տարան:

25. Ա.Մ.Ա.Ռ.Ը Մ.Ա.Ր.Գ.Ա.ԳԵՏԻՆՆԵՐՈՒՄ.

Մանկական լիշողութիւնից.

«Տղակ. վաղը մենք ամէնքս կը գնանք հնձատեղ», ասաց մեր հայրը, և մենք այնպէս գորգոռացինք ու վազվը-զեցանք, որ զօրով կանգնեցրին մեզ: Ես ձուկը բռնելու կարթեր էի պատրաստել, իսկ քոյլերս վեր առան իրանց կողովները, որ պտուղներ հաւաքեն, և առաւօտեան լուսա-բացին մեր բոլոր ընտանիքը, սալերի վերայ նստած, ճա-նապարհ ընկաւ:

Մի ժամից յետով մենք շեղուեցանք լայն ճանապարհից և գնացինք նեղ շաւիղներով, իսկ վերջումը բոլորովին ճա-նապարհից դուրս եկանք և վերջապէս հասանք մեր փափա-դելի մարդաբետիններին: Երբոր մենք տեղ հասանք, արեւի ոսկեփալլ ճաւագայթները գեռ նոր ծածանվում էին մեծ Մա-սիսի ձիւնապատ գագաթի վերայ, բայց հովիտն արդէն հըն-ձողներով լիքն էր: Հնձողները, չուխանները հանած, շապ-կանց, զոյգ-զոյգ առաջ էին քայլում բարձր խոտերի մէջ և իրանց յետեւից ձգում էին կանաչ խոտերի շերտեր: Նրանցից փոքր ինչ հեռու, միւս կողմը, նրանց ընկերները փոյշով հաւաքում էին չորացած խոտերը և փոքրիկ դէզեր կազ-մում: Հովտի տիս և այն կողմերումն էլ ստրի նման բարձ-րանում էին մեծամեծ դէզեր: Մէկ մարդ կանգնած էր դէզի

Գլխին և վարպետութեամբ դարսում էր խոտերը: Դիւղացի մանուկները փոքրիկ կոյտերը կրում էին մեծամեծ դէղերի մօտ: Ուրախութեան աղաղակը տարածվում էր օդի մէջ. աշխատասէր մշակները գործում էին զուարձութեամբ. երգեր, ծիծաղ, բարձրաձայն խօսակցութիւն, շնչը հաջոցը, գերանդիների զընդզընդոցը, բեռնակիր ձիաների խըլինջոցը, եղների բառաչիւնը, անիւների մեզմ շառաչիւնը—այս բուլորը խառնուելով ընութեան երգիչների քաղցր դալալիկների հետ, լափշատակում էին մարդու միտքը:

Ես շտապեցի ձուկ բունել այն գետակի մէջ, որ հոսում էր այդ հովիտների միջով. իսկ քոյլերս սկսեցին պտուղներ ժողովել: Յետոյ մենք շատ ուրախութիւններ արինք՝ թիթեռներ բունեցինք, ծաղիկներ ժողովեցինք և քոյլերիս հաւաքած մորու գեղեցիկ կարմրախառն հատիկներից փունջեր կազմեցինք:

Փոքր առ փոքր սկսեց մութն ընկիւ. արեգակն արդէն ծածկուել էր հորիզոնի յետել: Մշակները դադարեցրին իրանց գործերը, ցած դրին գերանդիները և խաչակնքելով գոհացան Աստուծուց: Միքանի ըոսէից յետոյ բանուրները, գերանդիներն ուսներին, ուրախուրախ ճանապարհ ընկան դէպի գիւղը: Փոքր տղաները խումբեր կազմած գնում էին առաջից. նրանցից միքանիսը սրինգ էին ածում, միւսները երգելով ու պարելով հետեւում էին նրանց:

Ես և քոյլերս խառնուեցանք այդ երգող դասի հետ և ամենեին չ'իմացանք, թէ ինչպէս տուն հասանք:

26. Ա.Մ.Ա.Ռ. Դ.Ա.Շ.Ո.ՈՒ.Մ.Ը.

Ուրախ և ազատ է լինում մարդ ընդարձակ դաշտում: Մինչեւ հեռաւոր անտառի կապոյտ եղերագիծը՝ բլրակների վերալից օրօրուելով, տարածվում են գոյնզգոյն ար-

տերը: Ոսկեգոյն հաճարը ծածանվում է, ներս ծծելով կենսատու օդը: Կապտում է դեռահաս գարին, սպիտակում է ծաղկած սիմինդը (եղիպտացորեանը) զարդարուած կարմիր ցողունով և վարդակարմիր մեղրաբեր ծաղիկներով: Ճանապարհից փոքր ինչ հեռու կարծես թէ թախ է կացել գանդրաւոր սիսեռը. նրա միւս կողմը տարածուած է բաց կանաչ վուշի արտը իւր կլուխներով և կապուտակ աչկներով: Բայց ահա ճանապարհի միւս կողմը տարածուած են ցորենի ճոխ արտերը և բարեկամաբար ողջունում են իրանց միւս եղբայրակիցներին:

Արտուտը դալալում է, արտերի վերայ բարձրանալով, իսկ սրաթե արծիւը իւր հեռանկատ աչերով նախում է երեկնքից. նա տեսնում է շատախօս լորին խիտ արտերի մէջ և գաշտակին մկանը, որ բունն է կրում հասած հասկերից թափած հատիկները:

Ամեն կողմից հազարաւոր զմայլելի ձայներ են լսվում, իսկ մեծ ճանապարհով, երկու ջուխտ եզր լծած, ձրճռալով առաջ է գնում չոր խոտ բարձած սալլը և օդը լցնում է անուշահոտութեամբ:

27. Ա.Մ.Ա.Ռ. Ա.Ն.Տ.Ա.Ռ.Ո.ՈՒ.Մ.Ը.

Անտառում այն լնդարձակութիւնը չ'կալ, ինչոր դաշտումը, բայց ամառուայ շոգ օրերին անտառը շատ հաճելի է: Եւ ինչ չ'կալ անտառում: Բարձր կարմրագոյն մարիները կախել են իրանց փշոտ գագաթները: Լայնատերեւ և հսկայակազմ սոսիներն իրանց կածոծների և թաթաձեւ տերեւների սոսափիւնով անցողի ուշքը գրաւում են: Մոխրագոյն բարդի ծառը շարժում է իւր փնջաձեւ գագաթը. իսկ հաստարմատ կաղնին իւր վրանաձեւ ճղները տարածում է իւր շուրջը: Չորս կողմդ բարձրանում են շատ հասարակ ծառեր՝ հա-

ցի, բոխի, թխկի, համարի: Այս չէ բոլորը: Շատ փոքրիկ, բայց պտղատու ծառեր էլ կան անտառում. ահա հոնը կարմըրին է տալիս հեռուից. նոյնպէս վայրենի տանձ ու խընձորը զարդարում են ծառերը: Խոտերի միջից մորու սպիտակ ծաղիկն է փայլում, իսկ նրա մօտ արդէն կարմըրել է գեղեցիկ համեղ պտուղը: Անտառային շուշանի սպիտակ գինտերը օրօրվում են երկար ու հարթ տերեների միջից: Միւս կողմից կարծրակտուց փայտփորը կըտկրտում է ծառերը. սև սարեակները թնդացնում են օդը իրանց երգերով, իսկ անտուն կկուն համարում է իւր կեանքի օրերը: Մոխրագոյն նապաստակը ահա թփի տակը մտաւ. իսկ սկիւռը շարժեց իւր թաւոտ պոչը ճիւղերի միջից: Ահա հեռուից էլ մի ձայն է գալիս, մինը ծառերի ճզները շարդում—փշրում է. սա թաթեղ արջն է, որ իւր համար պտուղներ է պոճոկում:

28. ԱՐՁԱԳԱՆՔ.

Թէ զազանն է անտառի մէջ մռնչում,
Թէ եղջերուն—կամ ամպերը որոտում,
Թէ այս կամ այն կողմերից երգ են երգում—
Ամեն ձայնի
Իւր արձագանքը ընդարձակ օդում
Կըպատասխանի:

29. ԹԱԺԱՅ ՀԱՅ.

Կիւրակէի արեւը ծածկուեցաւ անտառի յետեւը: Միւս առաւօտ գիւղացին իւր որդոց հետ գուրս գնաց դէպի դաշտը և ուրախութեախ նաև մարգագետիններին և արտերին: Մարգագետիններում կանգնած էին մեծամեծ խոտի դէղեր. իսկ արտերում գեռ տատանվում էին հասած ցորենի հաս-

կերը: Գիւղացին խաչակնքեց և ասաց. «Օրհնենք Աստուծուն, որդիք, այս տարի մեր տաւարը խոտ կ'ունենալ և մենք էլ հաց»: Գիւղացին պոկեց մէկ հասկ, տրորեց իւր տփի մէջ, նաև եւ տեսաւ, որ հատիկները մգացել են, յետոյ ատամի տակ փորձեց և տեսաւ որ տըաքում է: «Ո՞րդիք, ժամանակ է հնձելու. ձեր մայրը երէկ ամբարի վերջին ալիւրը մաղեց»:

Միւս օրը, թէ մեծ և թէ փոքր, բոլորը գուրս թափուեցան դէպի արտերը: Խուրձերը արագութեամբ շարուեցան միմեանց յետեւից. իսկ երեկոյին արդէն բարձր տասնեակներ և երեսնեակներ կարգով կանգնած էին արտումը:

Դեռ հունձը չէր վերջացել, որ կամն սկսեց պտըտել կալի վերայ: Հայրը մի բեռը ցորեն տարաւ ջրաղացը և այնտեղից ճերմակ ալիւր բերեց: Մայրը խաշ ճարեց, խմոր հունցեց, իսկ միւս օրը մանուկներն արդէն ուտում էին նոր ցորենից պատրաստուած անուշահոտ հացը:

30. ՀՈՒՆՑ.

Ահա բանւորներն շարիշար կանգնած,
Մանգաղը ձեռքին, գոգնոցը կապած,
Մինչև գոտկատեղ բարձրացող արտում,
Ճպիտն երեսին, ցորեն են հընձում:

Ընդարձակ գաշտը, որ ամիսուկէս,
Մեղմ քամու դիմաց կապոյտ ծովի պէս
Ճըկվում էր թեքվում ու հէրանց գնում,
Նորից յետ դառնում, իւր տեղն էր բըռնում.

Այժմ նա դեղնած, ոսկու գոյն առած,
Տիրոջ օրհնութեամբ հակսերը լցրած,
Արևի դիմաց փայլում է խաղում,
Ամբողջ հովիտը հուր ու ծով շինում:

Կարծես հըլեշտակը Տիրոջ հըամանով
Ծիծաղ է սըփուել իւր առատ ձեռքով.
Ուրախ ու քըրքիջ, խինդ ու բերկութիւն
Դաշտը բռնած է, կ'ասես, օրն ի բուն:

Ահա բանւորներն շաբիշար կանգնած,
Մանգաղը ձեռքին, գոզնոցը կապած,
Հընձում են ցորենն ու խուրձեր կապում,
Կապած խուրձերից տառնեակներ կազմում:

Յ1. ԶԲԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒԹԻՒՆԸ.

1. Արդեօք ում հարկաւոր չէ ջուրը: Բոլսերին, գա-
զաներին, թոշուններին և մարդկանց հարկաւոր է նա:
Ահա թէ ինչի Աստուած լցըեց ծովերը և ովկիանոսները ջը-
րերով:

Բայց ծովի ջրերն աղի են և գառն: Այդ վնաս չ'ունի,
որովհետեւ ամենքը ծովի մօտ չեն բնակվում: Բայց թնչպէս
մաքրենք ջուրը, թնչպէս տանենք մենք նրան ծովերից հա-
զարաւոր մղոն հեռու, թնչպէս բարձրացնենք նրան սարերի
գլուխը:

Աստուած այս գործը յանձնել է աշխատասէր արեին:
Իւր տաք ճառագայներով արեւ ջուրը թեթև գոլորշների է
դարձնում. Չըի գոլորշներն իրանց միջի աղային մասերը
թողնում են ծովերում, իրանք բարձրանում են ու թանձ-
րանալով՝ երեսում են արծաթափայլ ամպի կերպարանքով կա-
պոյտ երկնակամարի վերալ:

2. Գոլորշները բարձրանալով թանձրանում և ամպ
են գառնում. բայց նրանք չեն կանգնում ուղղակի ծովի վե-
րալ: Այստեղ քամին սկսում է իւր գործը և ահագին ամ-
պերը թեթև փետուրի նման քշում է գէպի լուս աշխարհի

ամեն կողմերը: Ամէն մէկ ամպի մէջ այնքան ջուր կալ, որ
եթէ նա միանգամից ցած թափուէր, կըծածկէր քաղաքներ,
գիւղեր, մարդկանց և կենդանիներին: Բայց Աստուած գործը
ուրիշ տեսակ է կարգադրել. ամպերից կաթկաթում են անձ-
րւեկ փոքրիկ կաթիլները, ինչպէս ալիւրը մաղի միջից, կամ
սառչում ու թափվում են ինչպէս ձիւն:

3. Զուրը թարմացնում է հովիտներն ու արտերը և
հողը նրան իւր ներսն է ծծում: Հողի տակ աւելորդ կա-
թիլները միմեանց յետևից հաւաքվում և կազմում են ստոր-
երկրեայ փոքրիկ էրակները. միքանի կոհակներ խառնվում են
միմեանց հետ և մի ճանապարհ գտնելով՝ դուրս են բղխում
երկրի երեսը սառն աղբիւրի ձեռվ: Աղբիւրը բղխում է և
առուակ կազմելով առաջ է խաղում: Առուակն իրան հա-
մար ճանապարհ է պատրաստում. փոքր առ փոքր հողը
քանդում է և սկսում է քարերի վերայ խոխոչալով առաջ
գնալ: Պատահում է, որ նա ճանապարհին հանդիպում է
մի իւր նման շատախօսի և նրա հետ եղբայրանալով, ձայն
ձայնի տուած, առաջ են խաղում: Նրանք միմեանց հետ
առաջ են գնում, իսկ նրանց պատահում են ճանապարհին
երրորդ, չորրորդ և հինգերորդ առուակներ... Նրանք ամեն-
քը խառնվում են միմեանց հետ և բարեկամաբար առաջ են
հսսում: Նայում տեսնում ես, որ ահա այս եղբայրական
միութիւնից մի կանոնաւոր գետակ է կազմուել: Այս գետա-
կը ջուր է տալիս մարդկանց, կենդանիներին, թարմացնում
ու զովացնում է դաշտերի ծարաւ բոյսերը, պտըտացնում է
ջրաղացների երկանները, կրում է իւր վերայ լաստեր և թե-
թեւ նաւակներ. իսկ նրա սառն կոհակաների մէջ խաղում
են ուրախ ձկները՝ փայլելով իրանց արծաթագոյն թեփուկ-
ները:

4. Գետակը վազում խառնվում է ուրիշ գետակի հետ
և միասին առաջ են գնում: Ճանապարհին նրանց հետ խառ-

նըլում են ուրիշները և այսպիսով կազմում են մի ահագին գետ, որ ունենում է բազմաթիւ վտակներ և անցնում է մի թագաւորութիւնից միւս թագաւորութիւն. երեմն մի-
ւնոյն գետն անցնում է շատ մանր տէրութիւններով և
նրանց ամենին էլ բաշխում է իւր առատ ջրից: Լողում են
գետերի վերայ ծանր նաւեր, որոնք բարձած են լինում զա-
նազան ապրանքներով: Անցնում են նրանց վրայով առա-
գաստառը նաւեր, իսկ եզերքների մօտ շինվում են արուես-
տագործական գիւղեր և առևտրական քաղաքներ՝ մինը միւսից
հարուստ: Գետը մեծամեծ հարստութիւններ է տանում մի
երկրից միւսը կամ դէպի հեռաւոր ծովեր և իւր լայն բերա-
նով ոչ թէ փոքրիկ նաւակներ, այլ մեծամեծ նաւեր, թւա-
նման առագաստներով զարդարուած, ծովն է մտցնում:

Գետերից շատ ջուր է թափվում ծովերի մէջ. բայց
արեգակն էլ հանդարտ չէ մնում. նա առատ գոլորշիներ է
բարձրացնում, ամպեր է կազմում և ամբողջ աշխարհին ան-
ձրե է բաժանում:

Գետերը դարերով թափվում են ծովերի մէջ և նրանց
երբէք չեն լցնում. արեն էլ յաւիտեան գոլորշի է բարձրա-
ցնում ծովերից, բայց երբէք նրան չէ ցամաքեցնում: Այս-
պէս ամենիմաստ կերպով է կարգադրել Աստուած այս բանը:

32. ՄԱԿԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆԻՑ.

Օգոստոս.

Շատ ժամանակ է ես իմ լիշտակարանումս ոչինչ չեմ
գրել. ամբողջ ամառ ես դրա համար միջոց չ'ունէի: Այժմ
գրել էլ այնքան չենք խաղում, որովհետեւ շուտ-շուտ անձ-
րեում և աշնան հոտ է գալիս:

Այսօր, Աստուածածնի վերափոխման տօնին, մեծ ու-
րախութեամբ եկեղեցի են տանում այգիների և արտերի պը-
տուղները: Աստուածածնին պտուղներն օրհնում են: Գիւ-
ղական փոքրիկ եկեղեցին լիքն էր մարդկանցով: Բարի
գիւղացին ջերմեռանդութեամբ վեր առաւ մի փոքրիկ խա-
ղողի ճիռ և մի բուռը ցորեն: Խաղողը նա կերաւ, պասը լու-
ծեց, իսկ ցորենը տարաւ, իւր սերմացուի հետ խառնեց:
Հայրս և մայրս այսօրից սկսեցին պտուղներ ուտել, իսկ մենք
վաղուց լուծել էինք:

Դաշտերում արդէն շարուած են ցորենի տասնեակները.
շուտով գիւղացին կըրերէ նրանց իւր կալը, որ անձրեների
տակը չ'մնան: Ահա աշխատասէր գիւղացին ջանասիրութեամբ
կալսում է. իսկ նրա փոքր որդին խուրձն է կըրւմ հնձա-
տեղերից:

Խուրձը կըելուց յետոյ նա պարապ չէ մնալու. արեգա-
կի տաքութիւնը պակասում է. երկինքը շուտ-շուտ ամ-
պում և անձրեներ է գալիս. գիւղացու ցելերը փափկա-
ցել են. շուտով ցաքը կ'սկսուի: Ճանճերն էլ սկսել են զգա-
լի կերպով կծել. երեսում է, որ ամառը վերջանում է:

ՅԵՆԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ.

Ժառերի կանաչ տերեների մէջ գեղնագոյն տերեններ են
շողշողում. մանգաղն իւր գործը վերջայրել է ոսկիանման
արտերում. միւս կողմը հեռուից կարմրին են տալիս հո-
վիտների երբեմն կանաչ գորգերը. ստուերախիտ այգիներում
հասած պտուղները կախուած են:

Աշնան նշաններն ամեն կողմից մարդու աչքի են դիպ-
չում. այնտեղ, արեւի տակ փայլելով, տատանվում է սարդի

ոստայնը. այստեղ՝ արտերի տեղը, երեռւմ են մերկ ծղոտներ, իսկ այդիներում որթի ոստերի վերայ կախուել են սև, սպիտակ և կարմրախառն ողկոյզներ։ Կալերում հնձած հացաբոյսերը կալսում են. մէգը առաւօտեան սպիտակ քաթանի նման ծածկում է կապոյտ լճակը։

Ամբողջ օրը սայլերը ճռնչում են. նրանք դաշտերից խուրձ են կրում կալը։ Կալերում կամների չըխչըխկոցը հեռուից լսվում է. կոռւսնկների խումբերը շղթայածւ թռչում են բարձրից, զարդարելով բնութիւնը իրանց ներդաշնակ կըրկը ալով։

34. Ա. Շ Ո Ւ Ն.

Երեկոյեան վերջալուսին
Ծիծեռնակները չքացան.
Սարեակները խումբեր կազմած
Մեր կողմերիցը հեռացան։

Ամեն բան հանդարտ քնած է.
Գուշը խաւար է տիրում.
Չոր տերեւը խշշում է.
Եւ քամին դուռը ծեծում։

35. Զ Հ Ն Ձ Ա Ծ Ա Բ Տ.

Աշունն սկսուեց, ծիծառն թռաւ.
Անտառն է գատարկ, դաշտը մերկացաւ.
Միայն դաշտումը անհունձ մնացած
Տիուր ու տրտում մի արտ կայ կանգնած։

Կարծես հասկերը ասում են միմեանց.
«Ի՞նչպէս մըսում ենք մենք այս ցրտի տակ,
Շատ տիրալի է գետին խոնարհուիլ
Եւ առօք պտուղդ հողում թաթախել։

Ամենայն գիշեր մեզ մօտ իջնում են
Անցնող թռչուններն ու մեզ ուտում են.
Գազաններն տրորում, քամին մեզ ծեծում։
«Ուր է մեր տէրը, թնչ է սպասում»։

Քամին տալիս է նրանց վատ համբաւ.
«Մահը ձեր տիրոջ երկրից վեր առաւ»։

Փ Ե Բ Պ Ք



Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

(Առաջին շրջանից)

Բաղ—այգի.

Պաղ—սառը, հով.

Պող—եղջեւր.

Փառ—թաղանթ. փառք.

Փաս—գլխարկ (տաճկական).

Զառ—արծաթաթել (գործուածք).

Տև—տեղութիւնը, դիմանալը.

Թաս—գաւաթ, բաժակ.

Տաղ—երգ.

Զաւար—կորիստ (ցորենի և չաճարի).

Զող—աւագ, մեծ, զլիաւոր.

Զահ—մոմակալ. բոցավառ լոյս (մաշալա).

Ճահ—յարմար, պատշաճ.

Զինջ—իստակ, մաքուր, պարզ.

Ճուտ—ձագ.

Ճութ—փոքրիկ արօր միալուծ.

Ճանդ—մէգ, մառախուղ.

Ճիտ—պարանոց, վիզ.

Ճաղ—սայլի կամ անիւի մատաձև տախտակ, տախտակ կեսը գռնակ (կալիտկայ), գուլպայ գործելու մետաղէ կամ փայտէ չոփերը:

Ճաղ—գեր, պարարտ.

Ճոչ—չոչ անել—ձեռն ու ոտի վշրայ ման գալ.

Ճանչ—չանչ անել—բաց թաթի շարժմամբ անիծել.

Թառ—թռչունների գիշերելը և գիշերելու տեղը.

Արթ—արթուն բառի սկիզբը.

Քարտ—քարտէզ, խաղալու թուղթ.

Պուտ—վայրի ծաղիկ խախնաշաձև.

Որդ—ձիձու.

Որթ—վաղ, խաղողի թուփ, հորթ.

Օթ—օթեան, իջևան.

Յօդ—անգամերի կապը, խաւը.

Յօտ—որթի կտրած ձիւղը, մատը.

Հօտաղ—լուծը քշող տղայ.

Համր—անեղու, լալիկ.

Յամր—դանդաղ, ծանր.

Սկայ—մեծ, հսկայ.

Սկունդ—փոքրիկ շուն.

Սկուտղ—սինի, բլիւդ.

Արեմ—կրօնաւորի զգեստ.
Սլէշ—զէնք. միջատների իրայթոցը, ժանիքը.
Ռեխ—անձոռնի բերան, դէմք:

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
(Երկրորդ շրջանում)

- § 15.—ա. Օձ. բ. կրիայ.
§ 18.—Մեղրաշաց.
§ 24.—ա. Ըրեւ և լուսին. բ. Երկենք և աստղեր:
§ 28.—Մարդու լեզուն.
§ 30.—Աարդ.
§ 40.—ա. Սուր և պատեան կամ հրացան և գնդակ.
բ. Կաչաղակ.
գ. Մոշ (մոր), որ սպիտակ ծաղկում է, կանաչ
պտուղ բռնում: յետոյ կարմրում և ապա սեա-
նում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՑԱՆԿԸ

ԵՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

1.	Հալերէն ալբուբենը	»
2.	Նման հնչիւններ	1.	
3.	ս. զ. շ. տառերը բաղաձայների հետ	2.	
4.	ո. իլրեւ երկհնչիւն	3.	

ԵՐՋԱՆ ԵՐԿՐՈՒԹ

1.	Ալբենարան	4.
2.	Կարդալ զրել *	4.	
3.	Մրջիւնը և աղաւնին	5.	
4.	Ճնճղուկներ *	ժաշուրութան բանասր.	.	.	.	5.	
5.	Պառաւն ու հաւը	6.	
6.	Աքաղաղն ու հաւը *	ժաշուրութ. բանասր.	.	.	.	6.	
7.	Աղուաւն ու աղաւնին	7.	
8.	Կռունկներ *	ժաշուրութ. բանասր.	.	.	.	7.	

- | | | | | | | | |
|-----|------------------------------|---|---|---|---|---|-----|
| 9. | Իմ ուսումնարան գնալը | . | . | . | . | . | 8. |
| 10. | Տիուր երեխալ * Գամառ-Քաթիպա | . | . | . | . | . | 8. |
| 11. | Աղօթք և աշխատանք | . | . | . | . | . | 9. |
| 12. | Հզօր ճար * Գ.-Քաթիսլա | . | . | . | . | . | 10. |
| 13. | Հրաւէր * | . | . | . | . | . | 10. |
| 14. | Օձի գլուխը և պոչը | . | . | . | . | . | 11. |
| 15. | Հանելուկներ * | . | . | . | . | . | 11. |
| 16. | Վարդենին ու փուշը | . | . | . | . | . | 12. |
| 17. | Մեղու | . | . | . | . | . | 12. |
| 18. | Հանելուկ * | . | . | . | . | . | 12. |
| 19. | Առիւծը և գորտը | . | . | . | . | . | 13. |
| 20. | Լաւ լնկեր | . | . | . | . | . | 13. |
| 21. | Մանուշակ * Գ.-Քաթիսլա | . | . | . | . | . | 13. |
| 22. | Ո՞վ է քիթը ցից պահում | . | . | . | . | . | 14. |
| 23. | Լուսինը և արեւը * ժաշուրութ. | . | . | . | . | . | 14. |
| 24. | Հանելուկներ * | . | . | . | . | . | 15. |
| 25. | Ստախոս | . | . | . | . | . | 15. |
| 26. | Սըւին * | . | . | . | . | . | 16. |
| 27. | Ամէն բան իրան տեղը | . | . | . | . | . | 16. |
| 28. | Հանելուկ * | . | . | . | . | . | 16. |
| 29. | Նազաստակը և ոզնին | . | . | . | . | . | 17. |
| 30. | Հանելուկ * | . | . | . | . | . | 17. |
| 31. | Փիղ | . | . | . | . | . | 17. |
| 32. | Հրաւէր գարնան | . | . | . | . | . | 18. |
| 33. | Առիւծը, արջը և աղուէսը | . | . | . | . | . | 18. |
| 34. | Գորտը և եզը | . | . | . | . | . | 19. |
| 35. | Ոլժը իրաւունք չէ | . | . | . | . | . | 19. |
| 36. | Սուրբ Կարապետ * | . | . | . | . | . | 20. |
| 37. | Գայլի արտասուքը | . | . | . | . | . | 20. |
| 38. | Գարուն * | . | . | . | . | . | 21. |
| 39. | Առիւծն ու մուկը | . | . | . | . | . | 21. |
| 40. | Հանելուկներ * | . | . | . | . | . | 22. |

ԵՐՋԱՆ ԵՐՐՈՒԹ

- | | | | | | | | |
|----|-------------|---|---|---|---|---|-----|
| 1. | Պապը | . | . | . | . | . | 23. |
| 2. | Աղ և սպունդ | . | . | . | . | . | 23. |

3.	Մեր ընտանիքը	24.
4.	Զաւակների մխիթարանքը *	25.
5.	Հինգ պատուիրան	26.
6.	Օքորոցի երգ * Գ.-Քաթիպա	26.
7.	Ոլքի օրը սե է	27.
8.	Հըաշալի խոտ	27.
9.	Կենդանիների վէճը	28.
10.	Ի՞նչ կըցանես, այն կըհնձես	28.
11.	Գառը գայլի մորթով *	29.
12.	Ուրիշի վերայ չ'պէտք է ծիծաղել	30.
13.	Դեղձանիկը և սոխակը	30.
14.	Թուչնակ *	31.
15.	Սագեր	31.
16.	Շնիկ	32.
17.	Որս	32.
18.	Ինչ կըբրդես, այն կ'ուտես	34.
19.	Ծիծեռնիկ * Գ.-Քաթիպա	35.
20.	Ծիծեռնակ	36.
21.	Երգ պանդուխտ պատանեկի * Դոդոխեան ?	36.
22.	Բոյսերի տեսակները	37.
23.	Երաշտ	37.
24.	Բոյսերի կերակուրը	38.
25.	Ծաղկների երգը *	38.
26.	Կաղամբի թիթեռ	39.
27.	Զատիկ	40.
28.	Թիթեռ և մանուկ *	41.
29.	Ծառերի վէճը	42.
30.	Ընկոյզ և դդում	43.
31.	Ուրիշին հոր փորողը, ինքը մէջը կընկնի	43.

ԵՐՋԱՆ ՉՈՐՏՈՐԴ

1.	Առաւտեան ձառագալթները	48.
2.	Շինականների առաւտեան երգը * Գ.-Քաթիպա	49.
3.	Երկու տակառ	49.
4.	Հացն ուտելով, բանն անելով	50.

5.	Ինչպէս են շինում տները	51.
6.	Մեր տունը	51.
7.	Խըճիթ *	52.
8.	Դաշտ և ուսումնարան	53.
9.	Կաւիճ	54.
10.	Մատիտ	56.
11.	Ռետին	57.
12.	Սպունգ	59.
13.	Փորձանք ու պատուհաս	60.
14.	Ջրաղաց *	61.
15.	Հանելուկ * Արարատեանց	61.
16.	Կրակ	62.
17.	Գարբին * Մելիք-Շահնազարեանց	63.
17.	Օդ	64.
18.	Վուշի մշակումը	65.
19.	Երկու քոյր * Գ.-Քաթիպա	66.
20.	Կով	68.
21.	Կորած հորժ * Աղայեանց	70.
22.	Կթել և հարել * Արարատեանց	71.
23.	Զի	72.
24.	Տխուր ձի *	72.
25.	Պալտ	73.
26.	Խոզը կաղնի ծառի տակ *	74.
27.	Ինչպէս է մարդս մանդալիս երկրի վերայ	75.
28.	Ճանապարհորդութիւն առանց ձիերի	76.
29.	Ինչպէս են ճանապարհորդում ջրի վերայ	77.
30.	Քամին ու նաւերը *	78.
31.	Զրի երեսին անիւներով	79.
32.	Զարմանալի մշակ *	80.
33.	Մարդկի ինչպէս են թռչում օդի մէջ	81.
34.	Հըեղեն ձի	82.

ԵՐՋԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1.	Զորս եղբարք * Գ.-Քաթիպա	88.
2.	Ի՞նչ արեց ձմեռը *	89.

3.	Ալեոր պապի հրամանները	89.
4.	Զիւն * Գ.-Քաթիպա	91.
5.	Յունվարի մէկին	92.
6.	Յունվարի հինգին	92.
7.	Յունվարի վեցին	94.
8.	Ակնկալութիւն գարնան *	95.
9.	Պասի առաջին երկուշաբթին	95.
10.	Գարուն * Գ.-Քաթիպա	96.
11.	Մանկական լիշողութիւնից	96.
12.	Աւագ հինգշաբթի	97.
13.	Աւագ ուրբեաթ երեկոյին	98.
14.	Գարնանային ջրեր *	100.
15.	Սուրբ Յարութիւն	100.
16.	Զատիկ * Գ.-Քաթիպա	102.
17.	Քրիստոս Յարեաւ *	103.
18.	Մանկական լիշողութիւնից (մեռելոցք)	104.
19.	Երկրագործի երգը *	105.
20.	Մայիսուար առաւօտ	106.
21.	Ամառ *	107.
22.	Ամարային առաւօտ	108.
23.	Զուկը	109.
24.	Ուռենի *	109.
25.	Ամառը մարգագետիններում	110.
26.	Ամառը գաշտումը	111.
27.	Ամառն անտառումը	112.
28.	Արձագանք *	113.
29.	Թաժայ հաց	113.
30.	Հունձ *	114.
31.	Զրի ճանապարհորդութիւնը	115.
32.	Մանկական լիշողութիւնից (օգոստոսին)	117.
33.	Աշնան նշանները	118.
34.	Աշուն *	119.
35.	Զհնձած արտ *	119.

*) Աստղանիշը ունեցողները չտիարերական գրուածներ են:

ԿԵՆԴՐՈՎԱԿԱՆ ԳՐԱՎԱԶԱՐԱՆԻՑԻ ՀՐԱՏԱ-
ՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

204
Corm
1098

1.	Տէր-Գ. Կոնդեան՝	Մայրենի Լեզու.	ա.	տարի.	35 կ.
2.	»	Մայրենի Լեզու.	բ.	տարի.	40 կ.
3.	»	Մայրենի Լեզու.	գ.	տարի.	45 կ.
4.	»	Մայրենի Լեզուի քերակ.	տարեթքը,	մ. ա.	30 կ.
5.	»	Մայրենի Լեզուի քերակ.	տարեթքը,	մ. բ.	50 կ.
6.	»	Բացատրութիւն Մ.	Լեզուի ա.	տարուայ	60 կ.
7.	Հայորդի՝ Սրբազն պատմութ.	Հին Կտակարանի			50 կ.
8.	»	Սրբազն պատմութ.	Կոր Կտակարանի		50 կ.
9.	Աղայեանց՝ Աւում Մայրենի Լեզուի.	ա.	տարի		25 կ.
10.	»	Աւում Մայրենի Լեզուի.	բ.	և գ. տարի	45 կ.
11.	Անահիտ,	Հին զրոյց			50 կ.
12.	Տէր Ստեփանեան՝ Սկզբունք Քր.	Հաւատոյ			50 կ.
13.	Ո. Մանդինեան՝ Ըստանեկան Աշխարհ				25 կ.
14.	»	Գիւցազնական Աշխարհ			30 կ.
15.	»	Կահապ և Հայր. Աշխարհ			65 կ.
16.	»	Բացատրութիւն Ընա.	Աշխարհի		75 կ.
17.	»	Հենչէլի թուար.	Խնդիրներ.	մ. ա.	40 կ.
18.	»	Հենչէլի թուար.	Խնդիրներ.	մ. բ.	50 կ.
19.	»	Համառօտ Մանկավարժութիւն			1—50 կ.
20.	Կոստանեան՝ Ռազմաքաղ.	Հրջան Ա.			25 կ.
21.	»	Ռազմաքաղ.	Հրջան Բ.	զրաբար	60 կ.
22.	»	Ռազմաքաղ.	Հրջան Գ.		40 կ.
23.	»	Կախաշաւիլ (մամլոյ տակ)			—
24.	Եղիշէ ըստ Ահճեացեաց օրինակի		և	և	80 կ.
25.	Սիմոնեան՝ Աշխարհազրութիւն.	մասն բնական.			60 կ.
26.	»	մասն քաղաքական			60 կ.
27.	Վարձելեան Պատագիրը թուարանութեան				70 կ.
28.	Յ. Գ. և Ա. Պ.	Ժողովածու թուարան.	ինք.	մ. ա.	35 կ.
29.	»	Կոյն մ. բ.	Կոտորակներ		45 կ.
30.	Այլազեան՝ Կախակրթանք.	մ. ա.			40 կ.
31.	Տէր-Գաւելեան՝ Ռусկ. լուս.				50 կ.
32.	Ալիևъ.	«Первый шагъ».			45 կ.
33.	Захаровъ.	Сборникъ примѣровъ для пись. исчислениа.			20 կ.
34.	Տէր-Օարգսեան՝ Հայկական գեղագրութեան օրինակներ				25.
35.	»	Այլշագրութեան զասաւանդութեան եղանակը			20.
36.	»	Տողած տետրակներ № 1, 2, 3, 4,			5.

Գումարով կանխիկ գնողները նշանաւոր զիջումն ունին.

ՎԱՅԼԻՈՒԹԵԱ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

2013

4577



